



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

8142

331

---

9-82

2010

25

Printed in Turkey

331  
9-82

ԳՈՐԾԱԽՈՐԹ

33/  
7-82  
w

Printed in Turkey

# ԳՈՐԾԱԻՈՐՔ

Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Կ Ա Ն Գ Ր Ո Ւ Ա Ծ Մ Ը

ԱՐՈՒԵՍԱՒՈՐԱՑ

ԲԱՐՈՑԱԿԱՆ ՈՒՆԻԹԱԿԱՆ

ՎԻՃԱԿԸ ԲԱՐԻՈՔԵԼՈՒ

ՀԱՄԱՐ

ԳՂՈՎՐԴԱԿԱՆ

ԻՏԱԼԵՐԵՆԻ ՔԱՐԳՄԱՆՈՒԱԾ

12001

ՎԵՆԵՏԻԿ  
ՄԻԹԱՐԵԱՆՑ ՏՊԱՐԱՆ  
1874

10972-ՍԿ

### Գ Ո Ր Ծ Ս Ի Ո Ր Ք

Ոսկւոյն անուրը շատերուն սիրաբ թունդ  
կը հանէ, մանաւանդ ազաւհին ու աղքատին:

Ոսկին ոչ միայն երջանկութիւն չէ, այլ  
ընդհակառակն շատ անգամ անյուր եղե-  
ռանց առիթ կ'ըլլայ: Բայց երբ անոր նպա-  
տակն ու զործածութիւնը մտածենք, կեն-  
սառիթ կարողութիւն մը կը ստանայ. վասն  
զի անով ձեռք կը բերէ մարդս իրեն կարևոր  
եղած ու փափագած բաները, ու մարդիկ  
անոր դիւթիչ կարողութենէն խաբուած ա-  
նոր պաշտօն մատուցին իրրև. Ստտուծոյ .  
սակայն պատուհասն ալ մէկէն վրանին հա-  
սար:

Կ'ուզէք առանց վտանգի ու առանց խայ-  
թի խղճմըտանայ, հանգիստ ապրելով, ձեր  
նիւթական և բարոյական վիճակը լաւցը-  
նելով, միանգամայն աստուածային ու մար-  
դկային օրինաց պատկոտ կալով՝ ոսկւոյ  
տէր ըլլալ: Սա էջերուս մէջ կը գնեմ ձեր



2725  
39

առջևը ապահով ու միակ միջոց մը զայն ձեռք բերելու, և այնպիսի քանակութեամբ որով կարող ըլլաք խաղաղ ու երջանիկ կեանք վարել, և եթէ կ'ուզէք հարստութիւն ալ գիղել առանց երթալու ոչ Քալիֆոռնիա, ոչ հարաւային Ամերիկա և ոչ Աւստրալիա՝ գոյն փնտռելու:

Թերեւս դուք ալ այն զարմանալի հանքաց ու հրաշալի ճոխութեանց պատմութիւնը լսելով, ձեր աղքատութենէն ու տառապեալ կեանքէն ճնշուած, փորձութիւն զայ մտքերնիդ թողուլ ձեր հայրենիքը, հեռանալ այն բունէն ուր ծնած ու սնած էք, և տալ ինքզինքնիդ բազդին՝ բողբոլիւն նոր աշխարհք մը մտնելով. դոր ձեր երեւակաշուքեան մէջ ոսկեգոյն նկարած էք:

Այն օտար աշխարհաց մտածութիւնքը, այն փառահեղ կտորք որ կը թռչի կը սրանայ ձեր աչքին առջևէն, և միւս կողմէն աղքատութեան անձկութիւնները կը դրզեն զձեզ այն երկիրներն երթալու. հարբստութեան կը փափարիք և կուշար սրտերնէդ անկարող տեսնելով զձեզ, և թէ ինչպէս տառապեալ բնտանեաց միճակելով՝ անկարող գտնուեր էք ճոխութիւն ձեռք բերելու: Ես ալ ձեզի սրտատակից կ'ըլլամ, վասն զի ձեր ցաւերը ՚ի գութ կը շարժեն զիս:

Սակայն կ'աղաչեմ որ կարգաբար այս գրքը պոյկս, վասն զի գոհ պիտի ըլլաք ու մէջը պիտի գտնաք ճշմարիտ ոսկեհանք մը, ոչ

անոնց նման՝ որոնք ովկիանոսէն անդին հեռաւոր աշխարհաց մէջ համբաւեալ են, ուր շատք մեռեալ կը համին քան կենդանի, և որք քսան հոգեով արտասուօք հայրենիքնին ձգեցին՝ տասը հոգի հաղիւ ողջ կը հասնին, և այն տասնէն ալ թերեւս մէկ մը միայն կարենայ սիրտմաշուքով և արիւնքրտինք մտնելով շահել զայն՝ դոր մեր նախապաշարմամբքը բաղդ կը կոչենք:

Ոչ. ձեր Քալիֆոռնիան այնչափ հեռու չէ, ոչ այնչափ վտանգալից է ոչ այնպէս ալ բաղդն անստոյգ. — ձեր ոսկեհանքը ոչ յԱմերիկա է, ոչ յԱւստրալիա և ոչ ալ յԱֆրիկէ: Իմ գրուածքովս պիտի ցուցնեմ ու գրեթէ շօշափել պիտի տամ ձեզի՝ որ այն հանքը ձեզի ամենամօտ է, մանաւանդ թէ ՚ի ձեզ թաղուած է, ճոխ ու անսպառելի գանձ մը. և այս անպակասելի Քալիֆոռնիան կը կայանայ ձեր ուժին, ձեր յաջողակութեանը և ձեր կամաց վրայ, և թէ որ միաբանելու ըլլան մէկտեղ ոյժ, յաջողակութիւն և կամք ամեն բանի կարող կ'ըլլաք:

Աշխատութիւնք, որ ձեր հանքին մշակութիւնն է, առաջին գրամն է, և անկէ առաջ եկան աշխարհիս բոլոր հարստութիւնները: Աշխարհիս բոլոր ճոխութիւնքը ձեզի պէս աշխատատէր անձանցմէ ծնած են և կը ծնանին:

Սրդ քանի մը տարուան միջոց, մեր բաղձալի հայրենեաց մէջ, որ ամենայն մտաամբք կը ճխայ, առանց մէկ վտանգի, սիրելի բն-



տանեացդ մօտ, սիրասուն ամուսնոյդ, որդւոցդ, ճնողացդ, բարեկամացդ, մտերիմ ազգակցացդ և ՚ի մանկութենէ հետէ անսամ առարկայից հետ կենակցելով, այս մեղրանման օդը ծծելով, Իտալական երկնից դուարթ ու վառվռուն կամարին տակ, հարցդ քաղցրահնչիւն լեզուն չրթանց վրայ խաղցընելով, առանց վտանգաւոր ճամբորդութեանց, սարածամ մահու՛ օտար հիւանդութիւններէ, աւազակներէ սովէ շարատանջ աշխատութիւններէ, այլ մանաւանդ ձեր բարեկամաց և հայրենակցաց օգնութեամբը, հայրենաւանդ օրինաց պաշտպանութեամբը, հուսկ ուրեմն ձեր հայրենաց մէջ, որ ձեր ու ձեր նախնեացն արդիւնքն է, միտք գնելով ձեր ո՞ր և իցէ արուեստին, կրնաք յիրաւի փութալան աշխատութեամբ զիղել մեծ դրամազուլու մը յաջողութեան, հարստութեանց, պատուոյ, իրաւանց. և կրնաք բարձրանալ այն աստիճանը՝ զոր արդարութիւնը սահմանած է ձեզի, և որ մինչև հիմա զլացուեցաւ ձեզի:

Բայց այս նպատակիս համնելու համար պէտք է մտադիւր ՚ի գործ գնէք իմ բարի գիւղական ժողովրդապետիս խօսքերը. ինքը կը պատմէր չորս եղբարց պատմութիւնը, որոնցմէ մէկը մշակ էր, մէկը կօշկակար, միւսը գործաւոր, մէկալը կրպակաւոր, որոնք աւանց մեծ հրաշից՝ գրեթէ քսան տարուան մէջ ժողվեցին իրենց մեծ հարստութիւն մը, ամուսնաց ու որդւոց

հետ մէկտեղ կենալով բարի, քրիստոնէավայել ու անցաւ կեանք մը անցընելով միայն զուարթամիտ ու անդուլ աշխատանօք, խելքով ու սիրով՝ ամէն օր քիչ մը բան մէկգի գնելով որ երթալով բաղամալու վանս գի իմաստութեամբ կը գործէին և երկիւզ մ'ալ չունէին ոչ զիրենք և ոչ որդիքը խեղճութեան մէջ ձգելու:

Ուրեմն այս չորս եղբարքը քիչ տարուան մէջ բանուորութեան վիճակէն բարձրացան եղան դրամազուլոց ու կալուածոց տեարք, և ասով շահեցան իրաւանց այն վայերմունքը՝ զոր թէպէտ ամէնքը գորութեամբ ունին, բայց իրապէս զայն վայելողքը հարուստներն են. իրենց գոյից ու ստացուածոց սահմանը ընդարձակեցին, ու մինչև իրենց նմանեացը բարերարելու կարողութիւն ստացան: Աւելի դիւրաւ կրնան զիտութեան ու իրենց բնութեանն ու բնաւորութեանն յարմար գրաւմանց ետեւէ խնայ, և հուսկ ուրեմն այնպիսի օգտակար ու գեղեցիկ գործեր գործել, մինչև նաև իրենց երկրին վարչութեանը մէջ մտնալ, և մեծագոյն ուժով գործակից ըլլալ քաղաքաժողով ընկերութեան յօգուտ բոլոր մարդկութեան:

Կարգացէք այս գրքոյիս, ո՞վ եղբարք, և յուսամ որ խորհրդոցս գործադրութեամբը զիս ուրախացընէք և դուք ալ ձեր վախճանին հասնիք:

ԿԱՆԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Յետ ցրտաչունչ ձմեռան, որ չատ ծերու-  
նեաց կեանքն յախշտակեց, դարնանային  
օրուան մը երեկոյեան դէմ էր, երբ արեգա-  
կը մայրը կը մանէր՝ Մոնցայէ բիչ մը հետու  
զիւզի մը եկեղեցւոյն բակը կը տեսնուէր  
ջերմեռանդ մարդկան թափօր մը, իրենց  
խաչվաններով և եղբայրութեան սպիտա-  
կազգեստ խմբերով: Թափօրին ետեէն գա-  
դազ մը տեսնուէր, զոր յարգանօք չորս դօ-  
րաւոր անձինք կը կրէին որոնք իրարու կը  
նմանէին ու կու լային, վեց ալ քահանայ՝  
որոնք կրօնական ու խորհրդական ծանրու-  
թեամբ մը հանգստեան աղօթքները կ'եր-  
գէին: Թափօրը արտօրէից մէջ խտտու-  
լով կ'աներևութանար, և երբ գերեզման-  
նոց հասան՝ եկեղեցական օրհնութեամբ ու  
սրտաշարժ ողբաձայն Ռորմեկայով իջեցու-  
ցին վախճանակը իր գերեզմանը, զոր մէ-  
կէն հողով լեցուցին. յետին ողջոյն մ'ալ տա-  
լով հանգուցելոյն և յախանական վայե-

լից հանգիստը մաղթելով բազմութիւնը թախծազին ու վշտացեալ խումբ խումբ կը գտանար իր բնակութիւնը:

Նոյն ժամանակը չորս դազազակիբքն ալ տիրազգած լրիկ մնչիկ եկեղեցւոյն բակէն անցնելով ժողովրդապետին տունը կը մըտնէին:

— Հայր սուրբ, կ'ըսէ եղբարց երիցա-  
գոյնը, յետին ցաւազին պարտքերնիս հա-  
տուցանելու եկած ենք առ քեզ: Բնդունէ  
զբամոց այս քսակը քեզի համար. իսկ միւս  
գումարը պահէ գործածելու այն բանին՝ որ  
մենք հրամանքիդ կ'ըսենք: Առ այս թըզ-  
թերս ալ որ մեր բարի հօրն են:

— Ազնիւ որդեակը իմ, ինչուան այսօրս  
Աստուած օրհնեց զձեզ, և միշտ ալ պիտի  
օրհնէ: Մխիթարութիւն ունեցաք տեսնե-  
լու ձեր հայրը յառաջ քան զմահն բոլորու-  
վին փոխուած. այն բարի հոգին ձեզի նմա-  
նելու ջանաց, և Աստուած ալ որ ներեց ի-  
րեն՝ առաւ զինքն իր ծոցը: Մխիթարուե-  
ցէք ուրեմն և համակամեցէք զձեզ Անոր  
կամաջը՝ որ մեզի կենար շնորհեց, որ երբ  
ուզէ և կամենայ՝ տէր է մեզմէ վերացնե-  
լու զայն: Մեռնիք, սիրելիք, ոչ սպառիլ է  
և ոչ ալ փճանալ, այլ երթի՛ր ուր որ մեր  
երկրաւոր գործերը պիտի վարձատրուին,  
և ուր ամենքնիս ալ պէտք է երթանք:

— Իբրա է, կ'ըսեն չորս եղբարքը հեծե-  
ծելով:

— Լացէք սիրելիք, մարմնաւոր ենք, բը-

նութեան հարկը հատուցանենք: Մի թէ  
չենք լար երբոր մեր ընտանեացմէ մէկը,  
կամ բարեկամ մը հեռու տեղ երթալու ըլ-  
լայ, թէպէտ և նորէն զինքը տեսնելու յոյս  
ունենանք: Բայց մտքերնիս առ Աստուած  
ուզենք, ու ցաւերնիս իրեն նուիրենք:  
Այս ընձաները շատ հաճութեամբ կ'ընդու-  
նի, և անվրէժ փոխարէնը կը պատրաստէ:  
Կուք առաքինի էք, կը ճանչնամ զձեզ, և  
զիտէք որ բարի օրինակը աւելի զօրաւոր  
է քան զեղեցիկ խօսքերը, և պէտք է որ  
թող տաք ինձի որ պատմեմ տանուտեարց  
թէ ի՞նչպէս ձեզմէ խրաբանչիւրը կրցաւ ինք  
իրմէ ձեռք բերելու հանգիստ ու ազատ  
փրճակ մը, միանգամայն չգազրելով բարի  
բրիտանեայ ու ազնիւ քաղաքացի ըլլալէն:  
Գիտէք որ ընտանեաց զլուխներն իրիկուն-  
ները քովս կ'անցընեն. ևս ալ իրենց օգտա-  
կար բաներ կը պատմեմ. իրենց արուեստ-  
ներուն վրայ կը խօսիմ, միշտ նոր բան մը  
սորվեցընելով, ետքը քիչ մըն ալ կը խա-  
զանք: Այսպիսի գրազմունքներով միշտ  
կը ջանամ գարգացընելու իմ թեմն թէ նիւ-  
թապէս և թէ բարոյապէս. զիւզապետն ալ  
բարի սկզբանց տէր ըլլալովն ինձի կ'օգնէ:  
Երբեմն երբեմն ձեր գործոցը վրայ խօսած  
եմ, բայց հիմա կ'ուզէի մանրամասն պատ-  
մել Գոմինիկոսի որդւոց ամբողջ պատմու-  
թիւնը: Ի՞նչպէս. կը հաճիք:

— Ի՞նչ որ մեզի ու մեր նմանեացը օգուտ  
կը համարիս, հայր սուրբ, կատարէ: Բայց  
թէ որ կարելի է մեր անունները չըսել:

— Այն իմ գիտնալու բանս է, կը ճանչնամ ձեր խոնարհութիւնը. այնպիսի ոճով պիտի ջանամ պատմելու որ ոչ ոխ, և ոչ նախանձ ազգեմ ունկնդրացս, այլ մանաւանդ աւելի եռանդնին շարժի ձեզի նմանելու:

— Բարեաւ մնա, հայր սուրբ. չնորհակալ ենք ձեր առ խեղճ հայրն մեր ցըցուցած խնամոցն համար: Ազօթիցդ մէջ զմեզ յիշէ. և երբեմն երբեմն արժանի բրէ զմեզ քու այցելութեանդ:

— Գուր ալ ողջ եղիք. յօժար սրտով կընդունիմ ձեր հրաւերքը և կը փութամ շուտով կատարելու. երբոր ձեզի եմ կարծեմ թէ իմ առնս եմ: Աստուած օրհնէ ձեր արտասուքը, ձեր որդիքը, օրհնէ նաև ձեր բոլոր ընկերները. սիրա առէք. հայր մը կորսընցուցիք, ահաւասիկ զիս ունիք աւոր տեղը. կ'ուզեմ որ բուն ձեզի հայր համարիք զիս: Զձեզ կը սիրեմ, վասն զի արժանի էք. երթայք բարեաւ:

Չորս եղբարքը ելան երթալու իրենց տունը: Ժողովրդապետը երեկոյեան գրազմանցը կը դառնար, եռանդեամբ կ'ազօթէր, և սակաւապէտ ընթրիքէ մը ետքը՝ կը սկսէր շրջել այն դահլըճին մէջ ուր թեմական հանդէսներուն ասթովը կը խմբուէին եկեղեցականք և քահանայք, կը հաւարուէին ընտանեաց գլխաւորք բարեկամական խօսակցութեամբք զրօններու, ինքն ալ նոյն երեկոյեան ըլլալիք խօսակցութեան նիւթոյն վրայ կը մտածէր շրջադայելով:

ԱՌԱՋԻՆ ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՆ

Գործաւոր մշակ

Երեկոյեան ութին մօտերը տանուտեարք կը մտնեն դահլիճը, գլխարկնին ձեռքերնին, բարեկամական սիրով ընդունուելնուն վրայ ուրախամիտ մեծաւ յարգանօք կը բարևեն զժողովրդապետը:

— Աստուծոյ բարին, սիրելիք. սովորականէն շատուոր էք այսօր, բայց շատ ուրախ եմ, որովհետև կ'ուզեմ այս իրիկուն սկսիլ պատմել ձեզի՝ ձեր քանի մը արուեստակցաց պատմութիւնը, որոնք արժանի են օրինակ առնելու թէ՛ ձեզի և թէ՛ ձեր որդւոցն, որոնց կրկնեցէք իմ խօսքերս. և այս ըլլայ իմ աշխատութեանս ձեր հատուցանելիք վարձը: Կ'ուզէք պատմութիւնը չսկսամ թիչ մը խաղալ:

— Եթէ ներէք, հայր սուրբ, կ'ըսէ կարողա՞մ, որ միշտ ինքը կը խօսէր ընկերակցացը բերնէն, խաղալու փափաք չունինք. մեր Գովինիկոսին մահը սաստիկ տալաւ:

ըրութիւն ըրած է վրանիս: Ի՛նչ բարի գա-  
ւաւիներ թողուց: Եթէ չնորհ, բնէք ըսելու  
մեզի անոնց պատմութիւնը՝ ուշադրու-  
թեամբ միտք կը դնենք: Ասով մեր սիրելի  
ընտանեաց ալ բան մը կ'ունենանք հաղոր-  
դելու:

— Հատ լաւ, ես ալ այսպէս կը մտածէի:  
Ուրեմն ուշ գրէք: Գուք ամենքնիդ ալ  
ճանչցաք զԳոմինիկոս, զոր յուզարկեցինք՝  
ուր ամենուն կենաց կատարածը կը վեր-  
ջանայ:

— Յիրաւի, այն բարի որդւոց հայրը:

— Քսան տարի առաջ բոլորովին ուրիշ  
մարդ էր. ծանր հիւանդութեամբ մը բռն-  
նուելով՝ գրեթէ ամբողջ օրէ մը աւելի հո-  
գեւարք կրեց: Այն հիւանդութիւնը չա-  
փազանց արեւցութենէ առաջ եկած էր. և  
իրեն այս ատենէն պատճառած հիւան-  
դութենէ զատ, Յովբայ պէս ալ ազբըտցաւ,  
և թեմականքն ստիպուեցան իրեն օգնու-  
թեան հասնելու: Վարձու առած երկիր-  
ներուն կալուածատերանցմէ վաճառած,  
հարկ եղաւ որ բոլոր ունեցածը չունեցածը  
ձախէ թէ՛ իրեն սարրուստին և թէ՛ զինու-  
վութեան մարտիւնն ալ աւելի տածելու  
համար. ս'ըջափ ցաւազին արցունքը թափեց  
իր թշուառ կինը:

— Ազնիւ Մարիամ, կ'ըսէ Կարոլոս:  
Իմ բարի քոյրս էր: Որչափ բան կրեց:

— Եւ ինչպիսի՛ ցաւեր. մեռաւ իմ բազ-  
կացս մէջ իբրև սուրբ մը յետ նոր ձախոր-

դութեան մը որ հասաւ Գոմինիկոսին իր  
ուզելովը, որուն վրայ ետքը պիտի խօսիմ:  
Հիմա՛ ալ ցաւ չկրէր: Այնպէս ցասկոտ  
բարբ մը ստացեր էր Գոմինիկոս այս ար-  
բեցութեան պատճառաւ, որ իր չորս որդե-  
քը որ արդէն տարիքին առած էին, և ու-  
րոնց երեցագոյնը ամուսնացած ու որդւոց  
տէր էր, արտասուալից աչքերով քանի մը  
տարի առաջ անէն փախան: Ողորմած հո-  
գին այնչափ խուլ եղաւ իմ ազգարարու-  
թեանցս: Առտուոց կամբը գրեթէ հրա-  
չիւք բժշկուեցաւ այնպիսի հիւանդութենէ՝  
ուսկից հազիւ թէ հազարէն երկուքը կ'ա-  
պրին. բայց դեռ զղջման չէր եկած: Գոմի-  
նիկոսի բժշկութենէն ետքն անցուցած կեան-  
քը պատմելէն առաջ կ'ուզեմ՝ ձեզի իր որ-  
դւոց պատմութիւնը պատմել, որոնք միշտ  
բարի եղան ու աշխատասէր, և բարի օրի-  
նակ ամենուն: Իրենց անունը զիտէք-  
Փրանկիսկոս, Եւզինէոս, Յովհ. Մկրտիչ ու  
Սնգրէաս:

Փրանկիսկոս, առջինեկն, որ սկզբան  
հօրը հետ արտորէից մշակութեան կը զբա-  
ղէր, իմ յանձնարարականովս ուրիշ տեղ  
գնաց, յիսուն լծվար երկիր վարձեց, այս-  
չափ ինչ արմտիք տալով վարձք: Այն եր-  
կրին մէկ մասը գաղտային էր, մաս մ'ալ  
սյգեւտան: Տալիք վարձքներ եօթը չափ  
ցորեն առ իւրաքանչիւր լծվար գետնի, որ  
ընդ ամենը կ'ընէր.....

— Տասը գրիւ, եօթը քսեստ և երկու

4795  
59



չափ ըստ հին չափու, կամ հարիւրալիզը 15-99, կ'ըսէ կարողութեան թանկէ, հայր սուրբ, ինչպէս պիտի ապրի:

— Սիրելիք, օրէնքը մենք պիտի չզննենք: Աստուծոյ շնորհքն մ'էր, որ Փրանկիսկոս, որդի այնպիսի երկրագործի մը, զոր ամեն կալուածատեարք վաճանակէին, կրցաւ կտոր մը երկիր ձեռք բերել: Թող տուէք որ խօսիմ, ետքը գուր ալ կը խօսիք,

— Թողութիւն քէ, հայր սուրբ:

— Յարմար տեղն ըսէք ձեր պատճառներն, որ ես ալ պատասխանը տալով համազեմ գտնեմ: Գինին կիսուակէս նուազ քան զմէկ հարիւրալիզը, զոր երկիրն տիրոջը պիտի տար. շերամի որդն ալ նոյնպէս կիսուակէս, ասոնց վրայ իբրև յաւելուած տարուէ տարի պիտի տար չորս որձատ, չորս հաւ, քառասունըութը հաւկիթ, միանգամայն տիրոջը պէտք եղած օրերուն՝ աւնոր հաշուն աշխատելի, ամառը 50 սանդիւմ աւուրչէքով և ձմեռը 40:

— Իսկ տանը համար բան մը չէր հատուցաներ:

— Մտոցայ բնիլու որ եօթը բնակարանաց իւրաքանչիւրին համար, միատեղ առեալ նաև գոմը ու կաթնատունը, տարին տասուերիտ ֆռանք կը հատուցանէր. ասոնց վրայ պարտական էր դարձեալ տէրութեան ու թաղական հարկաց կէսն ալ ինքն հատուցանելու: Բայց երկնից օգնութեամբք և իրեն բարի յօժարութեամբք՝ Փրան-

կիսկոս յաջողութիւն գտաւ: Ես ու կարուածատէրը մէկտեղ կը հողայինք իրեն սերմանելու համար իրեք հարիւրալիզը ցորեն, և չորս հարիւրալիզը մորացորեն, որուն կէս հարիւրալիզը ցանելու դորձածեց. 20 ֆռանք առ հարիւրալիզը առաջնոյն և 15 ֆռանք առ հարիւրալիզը երկրորդին, կ'ընէին 60 ֆռանք պարտք ցորենին համար, նոյնպէս 60 ֆռանք ալ մըրացորենին համար, 100 ֆռանք կոպու մը համար, և 20 ֆռանք ալ ասձուսն փոխ տուի իրեն ազի և ուրիշ կարեւորաց համար, որ ընդ ամենը կ'ընէին 240 ֆռանք պարտք: Տեսնելու էիք թէ ինչ եռանդով աշխատելու ձեռք զարկաւ Փրանկիսկոս: Նոյեմբերի կիսուն երկիրն հերկած ու ցանն ալ ըրած էր: Առաւօտը կանուխ առաջին պատարազը տեսնելէն ետքը, իր անդրանկին հետ արտը կ'երթար և ինչուսն ծամը 8 կ'աշխատէր. ութին կողակիցն իրեն նախաձայը կը բերէր, որ էր ապուր եր, երբեմն արգանակէ, կարագէ կամ գիրուցէ, երբեմն մածուն, երբեմն կաթին շիճուկն հացով եփած, և երբեմն ալ կաթով խահուէ: Մէկտեղ նախաձայ կ'ընէին և կինն հետը մէկտեղ կը բերէր իր պզտի տղան ալ. ետքը ութուկիտուն ուրախ զուարթ իր աշխատութեանը կը դառնար Փրանկիսկոս, թողլով որ երէց որդին թաղական դպրոցն երթայ, կողակիցը տանը աշխատութեանցը զբաղի մինչև տասնումէկուկէս, որ նոյն ժամանակը

մետաքս կը կծկէր. և անկէ ետքը փոքրիկ ընտանեաց ճաշը կը պատրաստէր:

Վերջապէս կը զարնէր այն օրհնեալ ու աշխատատեղաց սիրելի օրհասարակը, ուրոնք գործիքնին ձգելով աչքերնին երկինք վերուցած ջերմ աղաչանքներ առ Աստուած կ'ուղղեն որպէս զի իրենց աշխատութիւնը օրհնէ. և այս երկրորդ անգամ Փրանկիսկիոսի կը բերէր ընտանիքը ուրիշ թեթև կերակուր մը, և ժամ մը կ'անցընէր կնոջն ու որդւոցը հետ, պատմելով անոնց թէ եկող շաբաթ, զալ ձմեռ ինչ ունի գործելու, և հարցունելով թէ ինչ յառաջադիմութիւն կ'ընէ որդին գալոցին մէջ, և ցուցնելով թէ ինչպէս օրէ օր կը գեղեցկանայ կովը, որ 8 կամ 10 լիգր կաթ կուտար օրը, իր երկու հաւերը որոց իւրաքանչիւրն հաւ կիթ մը կ'ածէր օրը. այսպիսի խօսակցութիւններէն վերջը՝ պզտիկ գրքոյկ մ'ալ ունէր քովը, մէջէն քանի մը հատուած կը կարդար անոնց:

— Ո՛րչափ բաղդաւոր էր Փրանկիսկիոս, վրայ բերին քանի մը տանուտեսարք:

— Սակայն ինքն ալ ունեցաւ իր տագնապները: Վարուցանը ընցընելէն ետքը, ժամանակ գտաւ վերիվերանց կարգաւորելու իր տնակը, պատուհանաց ասուափեղկ դրաւ, պատին ծակերը խցեց, դաւիթը մաքրեց հոն ընտուած ամեն աղտեղութենէ, անցքեր ու առուներ փորեց, որպէս զի գոմէն աղբաջուրը դաւիթէն դուրս փոս մը

հանէ, որով զարչահոտ ու սպականեալ օդը մաքրեց որ տանը չորս դին պատած էր, վաան զի տունը այնպիսի երկրի վրայ էր, որ երկար ժամանակէ ՚ի վեր հոտած ջրէ և ալբէ խխուսն զարձած էր: Երկու օրը մէյմը գոմը կը մաքրէր ու բակորը որու շած տեղը կը տանէր, ուր կը դիզէր նաև գաւթին և սենեկաց աւելածքը: Սահմանեալ օրերը կ'երթար իր կալուածատիրոջն համար աշխատելու, երկրագործութեան կարևոր գործիք կը պատրաստէր, ինչպէս են կողով, սապատ, փոցղ, սակասի և մանուղաղ: Ամեն օր իր արտը տեսնելու կ'երթար, երբեմն ցանկապատ մը կը շտկէր, երբեմն որմնապատ մը կը նորոգէր որ չփլչի: Կինն ալ կ'օգնէր երկանն ամեն բանի մէջ, հնազանդելով իրենն ու միատեղ աշխատելով, տունը մաքուր կը պահէր, դաւկընելուն վրան գլուխը կը լուար ու կոկէր, և կերակուրը կը պատրաստէր: Եր աշխատութեամբն օրը 30 սանդիմ կը վաստըկէր, որ շաբաթը կ'ընէր մէկ ֆոանք և 80 սանդիմ, գրեթէ եօթը ֆոանք ամիսը. հաւնոցը սկզբան 12 հաւկիթ կուտար շաբաթը, որոնցմէ 6 հատը կը վաճառէին՝ 5 սանդիմ հատը: Գոմը եօթը օր մէյմը 56 լիգր կաթ կը բերէր, և այս կաթէն 25 լիգր կը վաճառէին՝ 10 սանդիմ լիգրը, որ շաբաթը կուգար 2 ֆոանք և 50 սանդիմ. 25 լիգրէն սեւրը կ'առնէին կարագ շինելու համար, և մնացածին կէսը տան համար կը գործաւ

ձէին, միւս կէտով ալ թարմ պանիր կը շինէին ու կը վաճառէին՝ 70 սանդիւմ քիլոկրամը: Արդ խօսքս համառօտելով, որպէս զի կարենաք ամեն բան մտքերնիդ պահել, կ'ըսեմ թէ զոմին տուրքը, հաւնօրը ու կնոջ աշխատանքը հետեւեալ եկամուտը կը բերէին Փրանկիսկոսի ամեն շաբաթ:

Քրիստինէի աշխատութիւնը	Փռ.	1.80
Հաւնօր կամ 6 հաւկիթ՝ 5 սան-		
դիւմ հատն . . . . .	»	— .70
Կաթ 25 լիդր՝ 10 սանդիւմ լիդրը	»	2.50
Պանիր 5 քիլոկրամ, 70 սանդիւմ		
քիլոկրամը . . . . .	»	2.10
Կարագ մէկուկէս քիլոկր.	1.50	
քիլոկրամը . . . . .	»	2.25

Գումարը կ'ընէ Փռանք 8.95

որ է ծիշդ 8 Փռանք և 95 սանդիւմ շաբաթը, և ամիսը 4 շաբաթ գնելով կ'ըլլայ Փռանք 55.80, գրեթէ երկու նաբօւնն ոսկի ամիսը. վասն զի միայն փետրուար ամիսն է 28 օր, որ 29 կ'ըլլայ ամեն նահանջ տարի կամ ամեն չորս տարի մէյմը:

— Աղէկ կը խօսի հայր սուրբը, կ'ըսէ Կարոլոս, բայց Փրանկիսկոս միայն թարմ պանրով և մնրացորենի հացով կ'ապրէր: Թէ որ կարելի ըլլայ քանի մը տարի բերանը գոց պահել, որչափ դրամ ևս ալ չէի կրնար մէկդի գնել:

— Այս 55 Փռանքէն ու 80 սանդիւմէն անշուշտ ծախք ալ կ'ընէր զգեստուց և ուտելեաց համար. որովհետեւ աղէկ գիտեմ այն աղնիւ երիտասարդին անցուցած կեանքը, կրնամ ըսել ձեզի թէ որչափ ծախք կ'ընէր իւրաքանչիւր նիւթի համար: Գրեթէ 100 կրամ աղ պէտք է յաղելու ապուրը, հացը ու պանիրը, որ գնեցք թէ շաբաթը 40 սանդիւմ ըլլան. օրը կէս լիդր բրինձ, կ'ընեն 3 լիդր վեց օրուան համար. վասն զի շաբթուն մէջ անգամ մ'ալ ճաշուն մնրալիւրէ փոխինգ կը թխէր, որով բրինձը կ'արժէ միջին հաշուով, վասն զի 10 լիդր մէկէն կը գնէր իւրաքանչիւր անգամուն, Փռանք 1.08: 200 կրամ գիրուց՝ ուտիք օրերուն ապուրը համեմելու, 20 սանդիւմ առ հարիւր կրամ՝ կ'ընէ 40 սանդիւմ. դարձեալ օրը 5 սանդիւմ քիչ մը լուրիս և ուրիշ ընդեղէն գնելով՝ ապուրին մէջ խառնելու համար. դարձեալ պատահական ծախք հինգ սանդիւմ՝ որոնք բոլորը կ'ընեն.

Բրինձ 5 լիդր, 56 սանդիւմ առ լիդր	Փռ.	1.08
Աղ . . . . .	»	— .40
Գիրուց . . . . .	»	— .40
Խառն աղցանք՝ օրը 5 սանդիւմ . . . . .	»	— .35
Պատահական ծախք շաբաթական	»	— .55

Կ'ընեն Փռ. 2.58

Իւրաքանչիւր շաբաթ: Աղէկ գիտէք որ ձմե-



որ 2 ֆունթէն նուաղ չարժէր մէկ քիւր-  
կրամ կարագը. դարձեալ շաբաթ կ'ըլլար որ  
կոյն աւելի կաթ կուտար, նոյնպէս հաւ-  
կիթն ալ աւելի կ'ըլլար՝ որոնց երբեմն և ոչ  
մէկ հատը կ'ուտէին. և բարի Փրանկիսկոսն  
արթնամիտ զգուշութեամբ զիտէր որ թէ-  
պէտ առջի բերան քիչ մը պիտի նեղուի,  
բայց ետքը Աստուծոյ օրհնութեամբ աղէկ  
տարիներ պիտի անցընէ: Ամենեին անօ-  
թութիւն չէր կրեր, վասն զի առատութեամբ  
հաց ունէր և ըստ բաւականի կ'ուտէին  
ինքն և ընտանիքն ալ: Չճամբիտ խօսելով  
ամենեին կարօտութիւն չէր քաշեր: Առա-  
ւօտը, ինչպէս ըսի, հաց բրդած ապուր մը  
կ'ուտէր, կէսօրը աղէկ թան մը, իսկ իրի-  
կունը մտրալիւրէ փոխինդ, երբեմն ձուա-  
գեղով, երբեմն ալ կաթով, որ համեղ կերա-  
կուր մը կ'ըլլայ մտրալիւրի հետ խառնուե-  
լով, երբեմն կարագով և երբեմն ալ խորո-  
վեալ ընդեղինօք. և կիրակի օրերն ալ ստէպ  
միս կը գնէր, երբոր աւելի վաստակ ունե-  
նար: Ստոյգն այս է որ ընտանիքը շատ  
հանգստեամբ կ'ապրէր. կրցաւ գնել նաև  
բահ, բրիչ, իրեն ու որդւոցը համար ասու-  
եայ ծածկոյթ, քիչ մ'ալ կտաւ ու կանեփ  
ընտանեաց ճերմակեղէն գործելու համար:

— Հագուստի համար զորք մը չէր ընէր:

— Իր ազնիւ կինը իրիկունները կրակին  
քով նստած երբ Փրանկիսկոս ուրիշ զբա-  
ղանք մը ձեռքը ունէր, ինքը որդւոց և ա-  
մուսն ոյն հագուստները կը կարկըտէր, դուր-

պայ կը հիւսէր, երկրորդ օրը ծախուելու  
կտրագն ու պանիրը կը պատրաստէր: Բո-  
լոր ձմեռը ունեցած հագուստովնին ան-  
ցուցին. սկսան օգիւրը մեղմանալ. բազը  
ձեռքը սկսաւ մտրացորեն ցանելու համար  
երկիրը պատրաստել. այգիները յօտեց,  
թիթենիքը կարգի դրաւ, և այնպէս աղէկ  
մշակեց երկիրն ու ծառերն, որ երբ տերեւ-  
ները սկսան ծլիլ, իմացուեցաւ թէ Փրան-  
կիսկոս ժիր մշակ մ'էր: Յանկապատին եր-  
կայնութեամբը լուբիս և բակլայ ցանեց, և  
այդեաց չորս եղերքը մինչև ծնեբեկ ու զուսն  
ցանեց: Պիտէք թէ ուրիշ ինչ մտածեց՝ որ-  
պէս զի առանց դրամ վատնելու ընտա-  
նեաց պիտոյքն հոգացուի: Գաւթի պատե-  
րուն չորս դին քանի մը տեսակ ընդեղէն,  
բանջարեղէն, խստոր և ուրիշ կանանչե-  
ղէններ ցանեց. և զանոնք հաւերէն աղտա-  
պահպանելու համար, պարտապոյ միջոցները  
ցանկապառ մը շինեց, և անէէ ետև ալ  
դադրեցաւ կերակրոյն հետ խառնելու կա-  
րևոր եղած բաները գնելէն: Արինն ալ չորս  
շաբաթ հաւկիթ չծախելով և չուտելով, ու-  
րովհետև նոր ընդեղէնները անոնց տեղ կը  
լեցունէին, քիչ օրուան մէջ 48 ձագ հա-  
նեց. և այնպէս խնամքով պահեց զանոնք  
որ չըլլայ թէ զաւթէն դուրս անցնին ու ար-  
ար աւրըշտրկին: Շերամի որդին հունա ձգե-  
լու ատենն ալ հանած էր. — արդ հօս քիչ  
մը երկընկեկ պիտի խօսիմ, սիրելիք, կ'ու-  
ղէք որ ժամանակ մը ընդհատներ խօսքեր-

նիս: Գուցէ հոգնած ըլլաք մտիկ ընելէն:

— Առաջ տարէք խօսքերնիդ, կ'ըսեն աւ մենքը: արդ չերամի մշակութեանը հասաւ կարգը, թերեւ կարենանք օգտուիլ:

— Գիտէ՞ք որ շերամի որդը մեր Լոմպարտիոյ ոսկեհանքն է, մեր Գալիֆոունիայն է: 40 օրուան մէջ որչափ ստակ կը շահուի: Երբոր որդերու հնտին ատենն եկաւ Փրանկիսկոսին այցելութեան գնացի ու ըսի իւրեն. Այնքա՛ Փրանկիսկոս, արթուն եղիք զիչեր ու ցորեկ, հնազանդէ գործակալին ինչ որ կը կարգադրէ քելի. վասն զի աղէկ բերքով մը կրնան թշուառութենէ ելլալ և վիճակդ լաւցընել: Իր արտը կրնար սնուցանել 100 կրամ և աւելի սերմն: Առաջին քնոյն ժամանակ չորս մեծ տերև որդ ունեցաւ, դրաւ զանոնք լաւագոյն սենեկի մը մէջ, զոր ըստ ժամանակին ճերմըկցուցած ու մարբած էր իբրև հայլի մը, ու զրտէն պաշտպանած, այնպէս որ քիչ մը կրակով կրնար տաքցուիլ ինչպէս կը կարգադրէ կանոնը: Ինքը, իր կիներ և երէց որդին փութով մը այս աշխատութեան ետեւէ եղան, ոմն տերեւներ ընտրելու ու կտրտելու, ոմն անկողինը մաքրելու, ոմն ալ կերակուր տալու որդերուն: Առաջին քունէն ետքը անկողնէն վերցունելով չորս մեծ տախտակաց վրայ զետեղեցին զանոնք, շարունակ ջերմաչափին ու զնելով որ միշտ նոյն բարեխառնութիւնը պահուի սենեկին մէջ: Մերթ ընդ մերթ օգալովս ծակը կը բանային

օդը նորոգելու համար. վասն զի դուք ալ զիտէք որ մեր թոքերէն և ուրիշ ամեն կենդանեաց բերնէն արտաշնչած օդը՝ ապականեալ է, խկ դրան ծծածնիս առողջարար է, այնպէս որ ամենեին դէշ հոտ չկար որդերուն բնակարանին մէջ, որոնք աշխուժով ուտելով զգալապէս կը մեծնային և երթալով կը ճերմկնային: Երկրորդ անգամ քուն կը մանեն և այն ատեն տախտակները ութը կ'ընեն և տերեւները աւելի խոշոր կը կտրտեն: Երկրատէրը, զործակալը և ես ստեպ Փրանկիսկոսի որդերը տեսնելու կ'երթայինք, և երբէք պզտի պակասութիւն մը չգտանք: Մանաւանդ թէ մի անգամ երբոր մթնոլորտը ամպերով ծածկուած էր ու հազին մրբիկ մը կը սպառնար, ինչպէս զարմացայ անոր աշալքութեանը վրայ, երբոր անսայ որ մէկէն ուսնուոյ ճիւղեր վառեց ծխանին մէջ, որպէս զի սենեկին խղղուկ տաքը մեղմացնէ, և դուռը ու շնչահանը բանալով շարունակ ջերմաչափը կը դիտէր: Եւ տեսայ որ որդերը, փոխանակ թմրած կենալու՝ ինչպէս սովորաբար մրբիկայ ժամանակ կը հանդիպի, այնպիսի աշխուժով կ'ուտէին որ մեծ զուարճութիւն էր տեսնելը: Երբորդ քնոյն տախտակները 20 եղան, չորրորդին՝ 30, և անտառ չգացած՝ 40: Քառասուն տախտակ պէտք է 100 կրամ սերման համար:

- Խիտ շատ է, ըսին ոմանք:
- Ուսկից գանելու է այսչափ տախտակ, ըսաւ ուրիշ մը ցած ճոյնով:

— Թէ որ դու ալ, Գրիգոր, քաջ մշակ մ'ըլլայիր, ինչպէս որ քաջ երգիչ ես, չատ անգամ չէիր գանդատեր որդերուն պզտի հիւանդութիւն մը տեսնելով ու աւելի հանգիստ կ'ապրէիր. մէյմըն ալ ինծի մտիկ ըրէ:

— Թողութիւն ըրէք, հայր սուրբ, կ'ըսէ Գրիգոր. մեր ձերերը երկրորդ արթննալուն մէկ տաստակ կը գնէին, երրորդին՝ երկու, չորրորդին՝ չորս, և վերջին արթննալուն՝ հինգ:

— Մեր ձերերը աղէկ գիտէին երկիր մշակել ու անատուն դարձանել. բայց շեքամի որդը նոր ընրք մ'է, և պէտք է որ այս բանիս մէջ ձեզմէ աւելի գիտնոց խորհուրդներուն ուշ գնէք: Սյս յայտնի է որ Փրանկիսկոս առաջին քաղելուն ժամանակ յաջողութիւն ունեցաւ և 100 կրամ առատ հունտերէ ժողվեց 155 քիլոկրամ ընտիր խոզակ, և երբ վաճառականն ուզեց՝ այն ժամանակ անտառէն վար առաւ: Զեմ կրնար ստորագրել ձեզի, սիրելիք իմ, այն մխիթարութիւնը զոր ընտանիք մը կ'ունենայ երբ անսնայ իր աշխատանաց ու հնազանդութեան գեղեցիկ պտուղը: Եկան ինծի շորհակալ ըլլալու և գիտէք զեռ ուրիշ ինչ ըրին, ոչ միայն ոսկի մը ուզեցին տալ, այլ և երկու ոսկի ամբողջ պարաքերնին հատուցին: Չէի ուզեր ընդունել այն գրամը, բայց վերջապէս ստիպուեցայ անելու, և դիրենք յորդորեցի որ չարունակեն իրենց ըարութիւնը,

զործունէութիւնը, հնազանդութիւնը ու մեծարանքը առ կայսաւատէրն, որով զործերնին երթալով ալ աւելի յաջողի: Կայսաւատէրն ալ ինծի եկաւ և զամեն փրանկիսկոսի ընտանիքը և ըսաւ թէ իր ունեցած վարձուորներէն լաւագոյնն էր անիկայ: Չկարծէք թէ ծով կը պահէր Փրանկիսկոս. այլ ընդհակառակն ուրիշներուն հաւասար և թերևս աւելի ալ լաւ կ'ապրէր: Մանաւանդ կիրակի օրերն ալ չափ մը աղէկ գինի կը դնէր, ու ընտանեօք միասեղ կը խմէին. նոյնպէս կը դնէր նաև մէկ քիլոկրամ միս, երբ մն ալ ապուխտ՝ եփելու համար, մէկ ֆունդը և 50 սանդիւմ ծախք ընելով, և այսպէս կ'ուրախանային և վերջը քաղելու կ'ըլլէին թէ որ հիւանդ մշակի մը օղնելու առիթ չունենային:

Սկսան պտուղները հատունալ. ինչ ուրախութիւն եղաւ Փրանկիսկոսի տանը և ինչ գրամոց ինայութիւն. վասն զի երբոր օրուն մէջ շատաշխատութիւն չունենային՝ նախաճաշէկին պտուղ ու հաց կ'ուտէին: Պտուղները ժամանակէ առաջ չվատնեցան, ինչպէս երբեմն գեռ կատարեալ չհատնեցած քաղելուն պատճառաւ կ'ըլլայ, այլ ըստ ժամանակին ժողովեցին և չափաւոր քանակութեամբ ալ ծախեցին: Կորենի հունձքէն առաջ Փրանկիսկոս 85 ֆունդի գեղեցիկ հորթուկ մը վաճառեց, իսկ պըտղովաճառէն 70 ֆունդը չահեցաւ՝ պտուղը, ընդեղէն ծախելով, ու ասոնց հետ միացը-

նելով իր շարաթական խնայողութեամբ ժողովածն ալ ինծի ունեցած պարտքը բոլոր հատոյց . 70 Փո. աւելնայով, և 66 Փո. ալ վառեակներ ալ ծախելով ձեռք բերաւ . որով գումարը եղաւ 136 Փոանք : Եւ գիտէք այս ստակը ինչ բանի գործածեց :

— Ըսէք, ինչ բրաւ, վրայ բերին ա՛ մենքը :

— Հիմա կ'ըսեմ ձեզի : Փրանկիսկոսի մշակած երկիրը գառիվերեր ալ ունէր, ուրոնցմէ այնչափ թարմ ու չոր խոտ կը հանէր, որ կովուն բաւելէն ետքը կ'աւելնար ալ . վասն զի ժամանակին յակ կու տար ա՛նոր, և ամեն օր դուրս կը հանէր դալար խոտ արածելու, որ շատ կարևոր է կովուն առողջութեանը և կաթին ազնուութեանը : Միշտ գոմը կ'աւելէր, և ասով երկու օդուտ կը քաղէր . մէյմը կենդանին կը գեղեցկանար, ինչպէս բայ օդուն մէջ բարեխառն կողմերը կ'ըլլայ, և մէյմ'ալ առատ պարարտութիւն կը պատրաստէր : Ուրիշ կովմ'ալ գնեց 84 Փոանքի : Բայց զիտէք որչափ շահ կը բերէին իրեն այն երկու աղէկ դարմանած կովերը :

— Օրը 20 լիդր կաթ, ըսաւ կարողոս, այսինքն օրը երկու Փոանք, ամիսը՝ 60, և ահա երեք ամսուան մէջ երկու կովերուն ալ գինը կը հանէ :

— ձիւդ լաւ բսիր, միայն ասոնք քիչ մ'ալ աւելի կաթ կու տային . ոչ երբէք 24 լիդրէն պակաս : Յունիս ամիսը գեղեցիկ

էր, եղանակները կանոնաւոր կերպով առաջ կ'երթային, խաղողը առատութեամբ ծաղկած էր : Ամենայն ինչ գեղեցիկ հունձք կը գուշակէին ցորենի, խաղողի և մարա ցորենի : Մոռցայ ըսելու որ Փրանկիսկոս շողգամ ալ ցաներ ու առատութեամբ ծոզվեր էր : Յունիսի 20ին կը կանչէ իր իրեք բարեկամները ցորենը հնձելու, տալով ա՛նոնց օրը երկու Փոանք . բայց իրիկուան անոնց հետ աղօթք մը ընելէն ետեւ, և իր սիրած գրքուկէն կտոր մը բան կարդալէն վերջը՝ կը թողուր որ երթային : Ութ օր վերջը ուրիշ երեք անձինք ալ կը կանչէ, զորոնք նոյնպէս կը հոգար, ցորենը կը ծեծէին, կը մաղէին և չափելով կու տային կալուածատիրոջ գործակալին . բայց երբոր 13 երորդ հեքստիդր կը հասնէր՝ ալ չափելու քիչ բան կը մնար . 33 լծվար երկիրն որ ցորեն ցանած էր, փոխանակ պայմանեալ վարձուն կամ 15 հեքստիդր և 99 լիդր ցորեն տալու, զրեթէ երեք հեքստիդր նուազ տուեր էր :

— Առաջուց ալ ըսեր էի թէ այդ երկիրը շատ թանկ էր : Այն երկիրներն որ այդի ու թթենի ունին, անկարելի է որ մէկ լծվարն 33 լիդր ցորեն տայ, երեք լծվարին՝ երկուքը միայն ցորեն ցանելով . այսպէս կ'ըսէր կարողոս :

— Աղէկ է որ ինծի օգնես քու յիշողութեամբդ . առ այժմ իրաւունք ունիս : Խօսքս լինցընելէն վերջը պիտի տեսնես որ իրա՛

ուռնքը իմն է ու գու կը սխալիտ Իրաւ սուջի բերան քիչ մը մահացաւ Փրանկիսկոս, և կինն սկսաւ արանջալ կալուածատիրոջ գէմ՝ որ շատ սուղ վարձու տուեր էր երկիրը: Փրանկիսկոս սիրոյ կշտամբանօք մը լռեցուց զՔրիստոսինէն, և համակամութեամբ աչքերը երկինք վերուցած հեզութեամբ ըսաւ գործակալին՝ թէ գալ տարի այսպէս չըլլար, եթէ Աստուած իր ակնկալութեանը համեմատ օրհնէ իր աշխատանքը: Եւտ մը սեպտեմբեր ամիսը վրայ հասաւ, և շաբաթական վաճառքէն, որովհետեւ երեք ու կէս ամիս էր որ երկու եղեր էին կտվերը, և շարունակ մի և նոյն քանակութեամբ կաթ կու տային՝ իրեն մեծ խնամքովը, 350 ֆունք մէկդի գրեր էր: Այն ալ նայեցէք որ ձմեռը սղայոց հագուստը պատրաստեր էր առանց պարտք մը ընելու. արգէն երեք կտոր (քօփ) հաստ կտաւ տուն մտեր էին, ինչպէս նաև խոհակերոցի կարևոր գործիները: Եւ 300 ֆունք ալ խնայութեան Արկղը գրեր էր, որ տարին կը բերէր իրեն 12 ֆունք:

Իր որդիքը կը զարգանային Աստուծոյ երկիւղովն, առողջութեամբ ու ճարտարութեամբ. վեց էին, չորսը մանչ ու երկուքը աղջիկ. երէց որդին 11 տարուան էր, և տարի մըն ալ մնացեր էր գեղին Կախնական դպրոցէն ելլելու. զիտէր անսխալ կարգալ և վարժապետին արտասառնելովը գրել. թուաբանութեան մէջ մինչև

Երկի կանոնն հասեր էր, շարագրութեան կը վարժէր, ու բնական պատմութեան, աշխարհագրութեան և ուրուագծութեան տարերքը սորված էր և վարժապետին կ'օգնէր. բայց Փրանկիսկոս կ'աղաչէր վարպետին՝ որ իր որդւոյն խտրութիւն չընէ:

Սեպտեմբերի վերջի օրերն հասան, երբ խաղողը կ'եփի կը հասունանայ: Փրանկիսկոս խաղողին հոգ տարած էր, այդիները մշակած ու պարարտութիւն ալ դրած՝ դարնան սկիզբը, որով առատ կ'իծոց կը սպասէր: Արդևոցը կը պատուիրէր որ չըլլայ թէ ուտեն, ըսելով թէ քանի որ չեն հասունցած՝ առողջութեան կը վնասեն. երկրորդ՝ ժամանակէն առաջ ուտելով կէսէն աւելին կը փճանայ. և երրորդ՝ կերածնուն մեծ մասը գողութիւն կ'ըլլայ, վասն զի կալուածատիրոջն էր:

— Քիչ մ'ալ խաղող պիտի չկարենանք ուտել: Ասիկայ իրաւցընէ չափազանց է: Եւրամ՝ հարուստներուն, ցորեն հարուստներուն, և աւելի քան զոր երկիր կը բուսցընէ՝ հարուստներուն. խկ մենք եթէ ողկոյզ մ'ալ խաղող ուտենք, գողութիւն կը սեպուի: Եսա չափազանց է, ըսաւ Գրիգոր:

— Գրիգոր, Գրիգոր, շատ կը շտապիս խօսելու: Փրանկիսկոս իրաւունք ունէր. և երբ նոյեմբերի կիսուն հաշուի նստելու ըլլա՝ կը տեսնեն ըսածս: Իր որդւոյն, որոնց հետ միշտ համողողական կերպով կը խօսէր

և կը ջանար որ հարկաւոր բան մը չպակոխ անոնց, երբեմն առատ դեղձ, երբեմն քիչ մը թուղ կը բերէր և իրենք ալ կը հնազանդէին անոր, մանաւանդ թէ կ'օգնէին իրեն, աչքերնին միշտ զգոյշ պահելով որ չըլլայ թէ մէկը երթայ օղկոյղ մը իրցունէ Փրանկիակոսի այգիէն:

Հոկտեմբերի առջի շաբթուն քաղոցը սկսաւ: Երկրատէրը պատուիրից որ քաղէն այգիները, գործակալը և նոյն խկ երկրատէրը եկան և հրաման տուին Փրանկիակոսի որդւոցը որչափ որ կ'ուզեն ուտեն այն խաղողէն, և այն իրենց նոյն օրուան մէջ գործած տեսակ մը անկարգութիւնը իրենց առողջութեանը շատ օգուտ ըրաւ, որովհետեւ խաղողը աղէկ հասած էր: Կոխուեցաւ խաղողը, 26 հեքտոլիդր միայն զուտ գինի ելաւ, և 9 հեքտոլիդր չեչոտ գինի: Փրանկիակոս մեծ ուրախութեան մէջ էր, տաք սրտով Աստուծոյ շնորհակալ կ'ըլլար, և գովութիւն կ'ընդունէր երկրատէրէն, գործակալէն ու բոլոր մերձաւորներէն. և ընտանիքն ալ ցնձութեամբ կը ճխային: Կը տեսնէք թէ շարունակ, խելացի ու աստուածային կամաց հպատակութեամբ եղած աշխատանքը ինչեր կը ծնանի:

— Աղէկ տարի մը ունեցաւ, կ'ըսէ մէկը:

— Բայց և ոչ և 4 հեքտոլիդր ցորեն ժողվեց. կ'աւելցընէ ուրիշ մը:

— Եատ կը սխալիք. վերջը կը տեսնենք թէ Փրանկիակոս միայն իր աշխատութեամբ

բը որչափ բան երկրէն հանեց, Այդեկութքը լինալուն պէս, կը հասնի բուն խեղճ մշակին իրեն յատուկ քաղոցը: Փրանկիակոսին երեսը խնտում էր. մարացորենը գեղեցիկ հասունցած էր. ինքը ու իր ընտանիքը կը ճխային. մանաւանդ որդիքը, որոնց դպրոցական հանդստի ժամանակն ըլլալով ազատօրէն իրենց հօրը հետ կ'աշխատէին, կողովներով տուն կը կրէին մարացորենը և սենեկի մէջ կը լեցընէին որ մատանի տեղ կը ծառայէր, և հոն դրած էին նաև չեչոտ գինին, չորս կողմէն աղէկ մը պատասպարելով որ տաք մնայ և գարշահատութենէ հեռու: Մարացորենը պարարտացուցած էր շատ, հողը փորած ու մտքած ժամանակին, ընտանիքը երեկոցեան աղօթքնին բնեղնեալը մարացորենի գլուխները տերևներէ կը մաքրէին, և հայրը պատմութիւն մը կը պատմէր, երէց որդին և աղջիկը դպրոցը հանդիպած բաներուն վրայ կը խօսէին, և երբեմն ալ մէկը կամ միւսը հոգեշահ գրքոյկ մը կը կարդար: Գիտէք թէ այս աշխատանքը լմբնեալէն վերջը որչափ մարացորեն ժողովեց Փրանկիակոս իր վարձուորութեան առջի տարին:

— Երեսուն հեքտոլիդր, կ'ըսէ Գրիգոր, այն ալ հրաշք է:

— 35 հեքտոլիդր, ցորենը, ինչպէս տեսաք, նուազ եղաւ. որովհետեւ հոկտեմբերին ցանած էր և երկիրն ալ անբեր էր, վասն զի դեռ ինքը պարարտութիւն չու-

ներ: Բայց մտադորենը որովհետև գարնան ցանած էր և ինքն առատ պարարտութիւն ունէր, կրցաւ աւելի բերք քաղել. ոչ թէ հրաշքով, ինչպէս կ'ըսէ Գրիգոր, այլ գործածած պարարտութեան շատութեանը պատճառաւ: Արդ զբեթէ տարին լրացուցինք, կրնանք քիչ մը հանգչիլ: Ես անկողին կ'երթամ, վասն զի վաղը առտու կանուխ պիտի ելլեմ Գոմինիկոսին հանգըստեան պաշտօնը կատարելու, և կը վախաքիմ որ ամենքնիդ ալ ներկայ դա՛նուիք:

— Յօժարութեամբ կը կենայինք մտիկ ընելու խօսքերուդ. շատ օգտակար է մեզի Փրանկիսկոսի պատմութիւնը:

— Ուրեմն վաղը ամենքդ ալ հոս գրտնուեցէք. և երբ աշխատութեան վրայ էք՝ այս իրիկուան լսածնիդ ուրիշներուն ալ պատմեցէք: Վաղը՞ աւելի առաջ կ'երթանք և կը սկսինք այն հաշիւներէն որ կալուածատէրը կ'ընէր Փրանկիսկոսին, և պիտի տեսնէք թէ առջի տարին ինչ պտուղ բերին իր աշխատանքն. իսկ դու, Գրիգոր, գիտցած եզրի որ աշխատութիւնը մեծածնեմ հրաշք կը գործէ, մանաւանդ երբոր շարունակեալ ու խելացի գործադրութեամբ ըլլայ, ինչպէս Փրանկիսկոսինն էր:

— Գիշեր բարի, հայր սուրբ. չնորհակալ ենք ձեր մեծ բարութեանը՝ որ մեզի համար անհանգիստ եղաք:

ԵՐԿՐՈՐԳ ԽՕՍԱԿՅՈՒԹԻԻՆ

Երկրագործիև պարունոքեալև  
շարունակուոքիշնը:

Երկրորդ առաւօտը ժողովրդապետական եկեղեցւոյն մէջ Գոմինիկոսին հանգըստեան պաշտօնը կը կատարուէր, և բոլոր զեղը ներկայ էր, որ արդէն սկսեր էին ճանչնալ անոր չորս որդւոց պատմութիւնը, որոնք աւագ խորանին մօտիկ քովընտի ծունկ չորած կ'աղօթէին: Պաշտօնէն ետքը զեղին աղքատները ժողովրդապետին տունը մտան, որ իւրաքանչիւրին երկու քիլոկրամ ալիւր կու տար և տեղրակ մ'ալ՝ որուն վրայ ետքը պիտի խօսինք: Տանուտեարքն որ այս եղբարց ազնիւ սիրտը ազէկ կը ճանչնային, կը վախաքէին որ շուտ մը իրիկուն ըլլայ, որպէս զի ժողովրդապետին տունն երթան լսելու պատմութեան շարունակութիւնը: Եւ այն օրը՝ դաշտերուն վրայ, մերձակայ անտառաց մէջ և գիւղական ճաշուն ժամանակ միշտ հանգուցելոյն և Փրանկիսկոսի վրայ կը խօսուէր: Ետա-

պաւ իրիկուան կերակուրը ուտելով՝ բոլոր պատանիք ալ կը փափաքէին իրենց հօրն հետ երթալու այն նախանձելի խօսակցութիւնը լսելու, և մինչև ժողովրդապետին տանը դուռը կ'ընկերէին հօրերուն: Իսկ ժողովրդապետը թղթի կտորի մը վրայ քանի մը թիւ գրած էր ու սովորական դահլըճին մէջ կը քալէր՝ ժողովրդեան սպասելով, որոնք որոշեալ ժամուն մեծարանօք ներս կը մտնեն:

Յարգանօք կ'ողջունեն ամենքը զժողովրդապետը, և մասնաւորապէս կարուտնն ու Գրիգոր աւելի բարձրաձայն, ինչպէս որ սովորութիւննին էր խօսելու:

— Բարի գտանք, սիրելիք, ձեզի կը սպասէի. մարդ պակաս չէ. շատ գոհ եմ, նշան է թէ խօսքերս ձեզի պաշտօնէս կ'ըլլան:

— Ծնորհք ընէիք շուտ մը սկսելու, կ'ըսէ Գրիգոր:

— Պատրաստ եմ զձեզ հաճեցնելու: Երբոր Փրանկիսկոս ցորենը ցանեց լճնացուց իր զիտցածին պէս, և առատ պարարտութիւն գրաւ, մինչև իր գրացիները կ'աղաչէին որ անկէ իրենց ալ մաս մը ծախէ, և կ'ապահովցնէին թէ անօգուտ է այնչափ քանակութեամբ աղբ փճացնել, ինքը կրցաւ նաև ուրիշ մերձաւորի մը օգնելու երթալ, երկիրը փորել և տասը աւուրչէք վաստըկեցաւ, իւրաքանչիւրը երկու ֆուանք: Երբ նոյեմբերի առջի օրերուն

հանդէսներն ալ անցան, որդիքը զիւզին դպրոցը տարաւ, անուննին գրել տուաւ, և դասերն սկսելուն պէս՝ ամեննին չափսեցան: Անոնց առաջինը շատ կարօտութիւն մը չունէր, բայց հայրը կ'ուզէր որ իմաստուն օրինաց հպատակի, որ կը պատուիրէր մինչև 12 տարեկան դպրոց երթալ, վասն զի կը ճանչնար զիտութեան մեծ կարևորութիւնը: Վերջապէս կը հասնի Ս. Մարախնոսի օրը (նոյեմբեր 11) որ զեղացոց ուրախութեան կամ տրամուլթեան օր է, ըստ որում տարին յաջող կամ ձախող գնացեր է: Փրանկիսկոս գործակալին չէր տեսնուած, որպէս զի անհանդուտութիւն չպատճառէ անոր. բայց նոյն օրը կալուածատէրը զինքը իր պաշտօնը կը հրաւիրէ: Փաշուելով բայց միանգամայն ուրախ սրտով, մաքրուած ու կոկուած, տոնական հագուստները հագուած կ'երթայ կալուածատիրոջը պալատը, որ համարակալին հետ հաշուի նստոր էր:

— Բայց համարակալը այնպիսի հաշուներ կ'ընեն որ մարդ բան չըհասկնար:

— Քիչ մը սպասեցէք և կը տեսնէք, ու դուք ալ կը հասկնարք: Ար յիշէք որ չափ բերք ունեցեր էր Փրանկիսկոս:

— 155 քիլոհրամ շերամի խողակ, 12 հեքտոլիդր ցորեն, 26 հեքտոլիդր զինի:

— Ինք հեքտոլիդր ալ չենոտ զինի, կ'ըսը կարողոս:

— Աւելցուր 42 աւուրչէք, որոնցմէ 20ը



երկայն, և 22ը կարճ. կրնանք հաշիւ ընել, համարելով շերամի խողակին մէկ քիւտկրամը 5 Փռանք, ցորենի մէկ հեքաողիգրը 21 Փռանք, և ազնիւ գինւոյն հեքաողիգրը 55 Փռանք, խկ մնացածը ըստ պայմանադրութեանց. բայց կ'ուզեմ որ հաշիւը աղէկ ընէք: Յակորոս վարժապետը քաջ է այսպիսի հաշիւներու մէջ, վասն զի գիւղի դպրոցը վարպետ է. գրէ սա սև տախտակին վրայ, զոր մասնաւոր պատրաստեցի. առ այս կ'աւիճն ալ:

— Հիմայ, հայր սուրբ. մանաւանդ թէ ինձի մեծ պատիւ կ'ընէք:

— Գրէ.

77 1/2 քիւտկրամ շերամի խողակ, 5 Փռանքէն . . . . .	Փռ. 587.50
12 1/2 հեքաողիգր ազնիւ գինի, 55 Փռանքէն . . . . .	» 457.50
4 հեքաողիգր և կէս չեչոտ գինի՝ 20 Փռանքէն . . . . .	» 90.—
20 աւուրչէք, 50 սանդիմէն	» 10.—
22 աւուրչէք, 40 սանդիմէն	» 8.80
	<hr/>
	Փռ. 935.80

Ահա այս է մուտքն, ըսաւ ժողովրդապետը.

— Բայց պէտք է դուրս հանել տան վարձքը, պակասձ ցորենը, վարձքին յա-

ւելուածքը՝ զոր կ'ալուածատէրներէն ոմանք կ'ուզեն որ ստրկով վճարուի և չէ թէ ուրիշ բերքերով. դարձեալ կը պահանջեն որ հաւ չպահուի, որպէս զի չըլլայ թէ արտերը ու տունկերը աւրըշարկեն, ըսաւ Բեռնարգոս:

— Այ՛, թող որ ևս լինցընեմ խօսքս. գրէ ուրեմն ծախք.

Տան վարձք, 7 բնակարան՝ 12 Փռանքէն . . . . .	Փռ. 84
Պակասձ 5 հեքաողիգր ցորեն՝ 21 Փռանքէն . . . . .	» 65
Տէրութեան և գիւղին տուրքը, ինչպէս հարկահանին մուրհակէն կ'իմացուի, մէկ լծ վարը 4 Փռանքէն և 50 սանդիմէն, որոնց կէսը տիրոջը պարտքն էր հատուցանելու . . . . .	» 117
	<hr/>
	Ծախուց դուստրն է Փռ. 264

Ուրեմն կը տեսնէք ծախքը կ'ելլէր, ինչպէս որ գրուած է տախտակին վրայ, զոր մուտքէն հանելով . . . . . գրէ

Մուտք . . . . .	Փռ. 935.80
Ծախք և վարձք տեղեաց . . . . .	» 264.—
	<hr/>
	Զուտ մուտքն կ'ըլլայ Փռ. 669.80

— Բայց, հայր սուրբ, կը տեսնեմ որ Փրանկիսկոս զիչեր ցորեկ աշխատելով և ոչ երկու ֆուանք վաստըկեր է օրը, և իր ընտանիքը ութ հոգւով կը բաղկանայ: Այս վաստակն ալ շատ կը նուազի երբոր ցորեկն և մնրացորենի սերմունքը կալուածատիրոջն հատուցանելու ըլլայ, կ'ըսէ Գրիգոր:

— Իրաւունք ունիս: Ուրեմն նորէն գրէ վարժապետ, և ցըցօր ինձի մէկն որ ցորենին ու մնրացորենին զինը ու քանակը միտքը պահած ըլլայ:

— Ես կ'ըսեմ, վրայ բերաւ կարողոս:

— Բարի է, ըսէ, կրկնեց ժողովրդապետը:

— Բոլորն ալ միտքս է, կը պատատիւնէ կարողոս. մանաւանդ թէ ամեն բան իմ օրդւոյս ըսի որ դպրոց չգնացած՝ գրէ: Ուրեմն պատուելի վարժապետ գրէ:

3 հերտոլիգր ցորեն	20 ֆուանքէն	Ֆա.	60
4 հերտոլիգր մնրացորեն	15 ֆուանքէն	»	60
		Ֆա.	120

Արդ 669. 80 ֆուանքէն հանէ 120 ֆուանք, և կը տեսնաս որ Փրանկիսկոս հանգերձ իր յաւելուածոյ վճարքը հատուցանելով՝ 549 ֆուանք և 80 սանդիմ շահեր է:

Գրէ՝

Մուտք . . . . .	Ֆա.	669.80
Կանխիկ հատուցումն ցորենի և մնրացորենի . . . . .	»	120.—
Փրանկիսկոսի մաքուր մուտքն է ֆ.		549.80

— Իրաւունք ունիս, վրայ բերաւ վարժապետը:

— Ես հաշիւները մտքով կ'ընեմ, ըսաւ կարողոս պարծենալով մը:

— Ազէկ բան, ըսաւ Գրիգոր. ինչ չափեցաւ Փրանկիսկոս յետ հատուցելու 155 քիլոկրամ շերամի խողակ, 26 հերտոլիգր զինի, 12 հերտոլիգր ցորեն. բան մըն ալ չաւելցուց որ գոնէ կարենար խմոր մըն ալ բանալ: Իրենք ութ հոգի են, որով իւրաքանչիւրին տարին կ'ընկնայ 68 ֆուանք և 72 սանդիմ, կամ օրը 18 սանդիմ, որով հազիւ կէս քիլոկրամ մնրացորեն կրնայ գնուիլ թխելու համար, աս ալ նայէ որ տարին յաջող և առանց մրրկի գնացեր էր:

— Սիրելի ժողովուրդ, ինձի մտիկ ըրէք: Փրանկիսկոս տարի մը աշխատելէն ետքը և ոչ կէս քիլոկրամ մնրացորեն պիտի ունենայ իր ընտանեացն ամեն մէկուն տալու: Իրաւ կ'ըլլար թէ որ Գրիգորին ըսածին պէս հաշիւ ընէինք, Բայց ես կը հարցընեմ, Փրանկիսկոս ընտանեացը հետ տարի մը ամբողջ չապրեցաւ. միթէ հայրիկ

պէս մարտը տանը ամեն պէտքն հոգացողն ինքը շէր, երկրագործութեան կարեւոր գործիները մի գնեց, մինչև կարողը շուտով և լաւ շինելու գործիքն ալ: Կերած հացը վճարողը ինքը շէր. փոքրիկ շանմարանին մէջ միթէ չունէր 26 հերտովից մարացորեն, խել մը չոր ոլուն, լուբիա, կարմիր ու գեղին սակաղին, կազամբ և զգում՝ որոնք ամենն ալ արտօժ համ մը կուտան ապուրին, մանաւանդ զգումն, որ փռան մէջ ալ կ'իփուի կամ կը տապկուի, խնձոր, աման: Կնքը շէր որ այն երեք կտոր կտաւը դնեց, զաւելներն հագուեցուց ձմեռն ու ամառը, ու կալուածատիրոջ և ինձի ունեցած պարտքն հատուց: Գարձեալ այնչափ պարարտութեամբ խնամած ցորենին սերմն ալ գնեց՝ որ գալ տարի պիտի տեսնէք թէ ինչպէս պիտի աճին ու պըտաբերեն. և երկու կով ալ ունի՝ որ այնչափ կաթ կու տան իրեն:

— Օրը 24 լիգր, որ ամիսը կ'ընէ 72 ֆունք, կամ 876 ֆունք՝ տարին 365 օր սեպեղով, կ'ըսէ Կարողս:

— Ճեղ 876 ֆունք կ'ընէ տարին, և հանդիստ ապրեցաւ ու պահեց ընտանիքն ալ, որոնք աճեցան ՚ի բարին, յարգելի են ամենուն, նոյն իսկ կալուածատէրը կը սիրէ. զորոնք Փրանկիսկոս ճոխացուց այն փոքրիկ հարստութեամբը զոր մէկէն Միլանու խնայութեան Արկղին յանձնեց, ժողովրդական պանդայէն ալ երկու բաժանորդու-

թիւն ստանայով: Արտվ խնայութեան Արկղին մէջ ունէր զբանագլուխ մը 600 ֆունք, որ տարին կու տար 24 ֆունք և 100 ֆունք ժողովրդական պանդան ունէր, որ թերեւս տասնէն աւելի շահ բերեն իրեն, — այս ամենն առանց հրաշքի, միայն գործունէութեամբ և նախահոգ զգուշութեամբ կ'ըլլան:

— Ինչ է այն խնայութեան Արկղն, հայր սուրբ, որ մինչև հիմայ երկու անգամ յիշեցիր. և ես բան մ'ալ չհասկըցայ:

— Խնայութեան Արկղը տեղ մ'է, մեծ արկղ մըն է, զոր տէրութիւնը կը պահպանէ և խելացի ու բարեբար մարդիկ կը մատակարարեն զայն, ուր թէ հարուստը և թէ աղքատը, որոնք աւելցած գումար մը զբանոյ ունին, կրնան ապահովել ու շահու գնել զայն: Ամեն տարւոյն վերջը այս արկղ մատակարարքը կը հատուցանեն սղտիկ կամ մեծ գումար դնողներուն տերանցն՝ ամեն անգամ որ իրենց տետրակը ներկայացընեն, հարիւրին չորս ֆունք. և թէ որ շտանուն այս չորս ֆունքը, այն գումարներուն վրայ կ'աւելնայ: Եթէ երկրորդ տարւոյն վերջը երթան ամենլու անցեալ երկու տարիներուն շահը, առաջին տարւոյն համար կու տան չորս ֆունք, երկրորդին՝ 8 ֆունք և 16 ամսդիտ: Այնպէս որ եթէ խնայութեան Արկղին յանձնէք 100 ֆունք՝ 20 տարուան համար, կը գումարուի ու կ'ըլլայ ֆունք 219.02. և թէ որ մոռնաք շահը ամենլու՝ կորուստ

չէք ընենք, այլ երթալով կ'աւելնայ այն գումարին վրայ զոր այս բարերար Արկղիս յանձներ էք, որ մեծաւ մասամբ ազբա-տաց ինչքով ձեւացած է: Այս ալ ըսեմ ձեզի որ միայն խաղիկոյ խնայութեան Արկղին մէջ 400 միլիոն ֆուանքէն աւելի կայ, զոր գրեթէ աշխատաւորք խնայութեամբ դրած են: Արդ Փրանկիսկոսն ալ իր վարձուորութեան առջի տարին 600 ֆուանք ունէր այս Արկղիս մէջ:

— Հապա ինչ է ժողովրդական պանդան՝ ուսկից բան մ'ալ ձեռք բերեր է Փրանկիսկոս, կ'ըսէ ուրիշ մը:

— Այս ալ խնայութեան Արկղ մ'է, բայց աւելի շահաւոր, կ'ըսէ ժողովրդապե-րը. ուր գեղացին ու գործաւորը կրնան մեծագոյն ևս շահով աւանդել իրենց խնայմունքը, և կրնան ատենէ դուրս ալ մաս մը փոխ առնուլ անկէ, երբ պէտք ունե-նան վարձք հատուցանել, աշխատութեան կարևոր գործիք մը գնել, կամ երբ զբժբազդութիւն մը հանդիպի ընտանեաց, երբ հարկ կ'ըլլայ առուտուր մը ընել, ա-նասուն մը գնել, կամ արուեստ մը հաս-տատել: Եւ այս պանդան օտրի վրայ կը պահեն արթուն և կանխատես մարդիկ, ամեն շաբաթ սղտիկ գումար մը գնելով ասոր արկղին մէջ, ինչուան որ հասնի ը-լայ 50 ֆուանք, ինչպէս Միլանինն է և ու-րիշ շատ տեղեր. կամ հասնի ըլլայ 100 ֆուանք ինչպէս է Գոմոյ. և այս 50 կամ

100 ֆուանքին ընդունելութեան անդորրա-զիրը կ'ըսուի Բաժին կամ Բաժանորդարէն: Իսկ տարւոյն վերջը այն շահերն որոնք որ փոխ առնողներ հատուցեր են, յետ հա-նելու մատակարարութեան համար եղած ծախքը, ընկերութեան անդամներուն վրայ կը բաժնեն, այնպէս որ շատ անգամ կը հանդիպի, այն ընկերներէն մէկը որ երեք կամ վեց ամսու համար փոխ առած է 500 ֆուանք՝ 6 առ 0/0, հատուցանելով պանդա-յին 4.50 ֆուանք երեք ամսուն համար, կամ 9 ֆուանք վեց ամսոյ համար, մէկ բա-ժանորդութիւն մը միայն ունենալով, կ'ըն-դունի 20 կամ 15 կամ դոնէ 10 ֆուանք. ասով կ'իմացուի որ փոխ առեր է ստակ վասարկելով, կամ գոնէ բան չկորսնցը-նելով:

— Ո՛հ, ինչ կ'ըսէք, հայր սուրբ, թողու-թիւն ըրէք. ասոնք ամենն ալ պառաւական առասպել են որ կը պատմուին տղայոց քու-նը բերելու համար, կ'ըսէ Գրիգոր:

— Շատ կը սխալիս. մանաւանդ այս ալ ըսեմ. գրքի մը մէջ գտայ որ Գերմանիա, ուր անթիւ են այս ժողովրդական պանդա-ները, մէկը շահեր է մինչև 58 1/3 առ 0/0. այնպէս որ փոխ առնողները իրենց գոր-ծերը աղէկ կատարելէն ետև, փոխանակ շահերը հատուցանելու, որ իրօք կը հա-տուցուին, ընդուներ են 20 և 30 առ 0/0 ի-րենց բաժանորդազին:

— Սակայն թէ որ ուզէի ամենայն ճըշդութեամբ հաշիւն ընել, կ'ըսէ ժողովրդականաց, և բովանդակել Փրանկիսկոսի վաստակն որ ունեցեր էր գործակցական ընկերութիւններէն, իրեն ընկած մասն վերոյիշեալ գործակցական կալուածին եկամուտներէն, որուն վրայ այս իրիկուն պիտի խօսիմ, գոմէն՝ ուր տարին տասուերկու խողառ նուազն կը սնուցանէր և չորս կով՝ որով իր երկիրը կը պարարտացընէր այնպէս որ խոտն ու արմատիքը չափէ գուրս կ'ուռնանային, ինչպէս զիւղակիցները կ'ըսէին հակառակութեան ոգով. դարձեալ եթէ հաշուի տակ ձգէի բողկուկներու բերքը, թթենոյ տերեւներուն, պտղոց եկամուտը, ծնէրեկաց շահն, որոնցմէ ապրիլի և մայիսի մէջ՝ օրը տասուերկու քիլոկրամէն աւելի կը վաճառէր, մէկ ֆառնքէն վար չտարով քիլոկրամը, թէ որ աւելցուցած ըլլայի իր ըրած ցորենի առուտուրը, առանց ցուցընելու թէ վաճառականութիւն կ'ընէ, միայն որովհետեւ կ'աղաչէին իրեն և ոմանց ալ օգնելու համար, որպէս զի չըստիպուին չատ ցած գնով ծախելու իրենց վաճառքը, և թէ որ աւելցուի իր քանի մը զրամագլխոց 5 առ 0/0 բերած շահերն (որոնց ես ալ վկայ եմ, վասն զի միջնորդ եղայ փոխ տալու կալուածատիրոջը՝ որուն երկիրը կը

մշակէր), չափազանցութիւն չէր բլլար Ըսելա՛ թէ քսան տարուան աշխատութեամբ առանց տաժանման և հանգստութեամբ և զուարթութեամբ Փրանկիսկոս ոչ միայն մէկդի գրաւ գրամագլուխ մը Փոանք 141,474.90, այլ տէր եղաւ գործակցական կալուածին, ընկերակցութեան շահուցը, շարժական կահուց, ընդ ամէնն 100,000 Փոանքէն աւելի, և իրեն ապրելու կերպովը թշնամի մ'ալ չհանեց իր գէմը, մանաւանդ ամէնուն համարունն ստացաւ, մինչև անգամ տեղական կառավարութեան, և կրցաւ իր երկու աղջիկունքը հարսնացնել բարեկենցաղ զեղացուց հետ, որոնք արդէն բանի մը տարիէ 'ի վեր սկըսեր են իրեն հետեիլ:

— Այս երկու աղջկանց մէկն, կը յաւելու կարողս, ինծի առնելուս վրայ շատ զոհ եմ. իրազընէ անգիւտ մարգարիտ մ'է, իր բարեսրտութեամբը, բարեպաշտութեամբը, գործունէութեամբը, տունս գալէն վերջն այնպիսի երջանկութիւն մը կը վայլեմ որ չեմ կրնար բացատրել թէ որչափ ծանր կու գայ ինծի մեռնիլն. իսկ միւսն ալ բարեկամացս մէկուն հետ հարսնացաւ, ուր շատ բաւ է, ու այն տունն ալ տարաւ երկնից օրջնութիւնը:

— Ուզեց, կը կրկնէ ժողովրդապետն, իր երկու որդիքն որ զինուորութեան տակ կ'ընկնէին, երթան հայրենեաց ծառայելու, և մէկն արդէն տուն գարձած է առա-

ջուան պէս առաքինի, հետն ալ քանի մը ճարտարութիւն բերելով. որովհետև զինուորութեան ատեն ետեէ եզաւ սովորելու ինչ որ կարելի էր, վասն զի բանակին մէջ արդէն ամէն արուեստի դպրոցք կան, որոնց մէջ ամէն զինուոր պարտական է իր արուեստին վարժելու և հայրենեաց օգտակար բլլալու. ուստի զիմնալու էք որ հիմայ ուր որ գունդ մը զինուոր կայ, այն տեղ ճամբաներ կը շրտկուին, ջրանցներ կը բացուին, հասարակաց և առանձնակալնաց տունք կը շինուին, միով բանիս այնպիսի շէնքեր կը շինուին, որոնք քաղաքացիք շատ ժամանակով ու մեծ ծախքով կըրնային կանգնել. որով ըսել է հիմա մեր զինուորներն ոչ միայն մեր ստացուածքն ու կեանքը կը պաշտպանեն, այլ նաև կը նպաստեն ու կ'աշխատին ամբողջ ընկերութեան համար, մասնաորաբար այն շինուածոց մէջ զոր մենք հասարակաց շէնք կ'անուանենք, ինչպէս են ստիկանութեան, գաւառին, տէրութեան շէնքերը: Իսկ Փրանկիսկոսի միւս որդին գալ տարի տուն պիտի դառնայ: Երբորդ որդին 50 ըվար կալուածի մը վրայ գրաւ, ասկէ տարի մը առաջ, զոր գներ էր առանց որդուց գիտութեանը. ամուսնացոյց զինքն, որ հիմա հօրն հետեւելով կ'ապրի. ինչպէս անդամիկն ալ, հազիւ թէ զինուորութենէ դարձաւ, ամուսնացոյց զինքն ալ, որ վերակացու զրուեցաւ այն կալուածին վրայ զոր առաջ

հաշտին մէջ տեսանք, և ինչպէս ըսի պիտի խօսիմ այն կալուածին վրայ, փափագելով որ Փրանկիսկոսի որդիքը նոյն արուեստին մէջ առաջ երթան, քանի որ իրենց կարևոր առողջութիւնն ունին:

— Գրեթէ անհաւատալի բան մ'է, կ'ըսէ Գրեգոր:

— Եւ սակայն հասկըցար որ պատմածներս նոր աշխարհքի բաներ չեն, և թէ Փրանկիսկոս նոր գանձ մը գտած չունէր: Սիրելի բարեկամք իմ, գիտնաք որ ճշմարիտ գանձն՝ ուսից կրնանք ամբաւ հարստութիւն քաղել, աշխատանքն է: Մեր կարողութիւնքն են, մեր կամքն է: Աշխատինք կարգով կանոնով, մտաց աչքերնիս ապագային դարձուցած, ամէն բան ժամանակին գործելով, եղանակաց յարմարութեան ուշ զնելով, աշխատութեամբ ձեռք բերածնիս ամէնքն ալ չսպառենք, խնայողութիւն ընենք, օրը քիչ մ'ալ ըլլայ. նուիրենք մեր աշխատանքը Անոր որ երկիրնք է, վատահոթիւն ունենանք իրեն վրայ, սիրենք մեր ընկերը, ստակը պանդոկներու մէջ չիլծապենք, և ոչ ժամանակն ալ անօգուտ շատխօսութեանց ծախսենք, ու մեզի չընկած բաներու վրայ միտք չյոգնեցընենք, և ամէնքս ալ կ'ըլլանք բարեկեցիկ, ընչեզ և կը կրթենք մեր զաւկընորն ինչպէս Աստուած կ'ուզէ, ինչպէս որ պէտք է ըլլան բարի քաղաքացիք, որուն այնչափ պէտք ունին հայրենիք: Գեռ շատ ուրիշ բաներ

ալ կ'ըրնայի խօսիլ մեր բարի Փրանկիսկոսին վրայ, բայց պէտք է որ իր եղբարց վրայ ալ խօսիմ, որ անդու աշխատութեամբ և բարեպաշտութեամբ իրեն նմանեցան: Առիթ պիտի ունենամ դարձեալ խօսելու Փրանկիսկոսի բարեգործութեանց վրայ, իրեն ստուգիւ շահաւոր ողորմածութեանը վրայ, առ հայրն ու առ եղբարս և առ ազգականս ունեցած սիրոյն վրայ, որդւոց տուած կրթութեան կերպին վրայ, որոնք մէյմէկ բարի օրինակ եղան, այնպէս որ դժուարաւ կրնան գտնուիլ իրենց նման շատ բարի օրինակներ. բայց սակայն շատ սեղեր ալ սկսան Փրանկիսկոսի օրինակին հետեիլ: Այսպէս բարինք միշտ աճելուն ամէն տեղ, ՚ի մեծ օգուտ հայրենեաց և հայրենակցաց: Այս իրիկուն քիչ մ'աւելի հոգնեցուցի դձեզ, այնչափ հաշիւներով, և ստոյգ ալ բնմ, քիչ մ'ալ ես հոգնեցայ, և զլիտեցաւ ունիմ: Երթաք բարով, խնդրեմ որ վազն ալ հրամմէք, վասն զի պիտի խօսիմ Եւգինեոս կօչկակարին և Մկրտիչ ոստայնանկին վրայ:

— Երթալէն առաջ, հայր սուրբ, քանի մը խօսք ալ կը փափագէի ըսել այն մեծ կտոր երկրին վրայ, զոր Փրանկիսկոս կը մշակէ իր մէկ որդւոյն ձեռքով:

— Ապրիս, Գրեգոր, քիչ մնաց պիտի մոռնայի խոստմունքս. քանի մը խօսք ալ այն նոր տեսակ ընկերութեան վրայ ըսեմ, որ Փրանկիսկոս մտածեց և գործ զրաւ:

— Շնորհք ըրէ, հայր սուրբ, խօսէ մեզի այս նոր տեսակ ընկերութեան վրայ:

— Աւտի մեր Փրանկիսկոսն որ անձ նախնդիր չէր, և երբ իր սեփական բարին կը գործէր, միանգամայն ուրիշի բարեքն ալ կը մտածէր, իբրև ճշմարիտ քրիստոնէայ, իբրև ընտիր քաղաքացի, տեսնելով որ ամենայն խնամքով մշակած երկիրը բաց ՚ի իրեն ընտանեաց՝ ուրիշի ալ կրնար բաւական ըլլալ, գրեթէ 350 լծվար երկիր մ'ալ գնեց, տարով լծվարին Փռանք 200 (կը յուսամ թէ հասկըցար այն հաշին որ տախտակի վրայ գրեցինք): Այն երկիրն վրայ գրաւ եօթն ընտանիք, իր որդւոյն ընտանիքն ալ մէկ տեղ, նորոգելով քիչ մը այն տուներն որ արդէն կային, որպէս զի հանգիստ կարենան բնակիլ, և ըսաւ այն ընտանեաց.

« Գուք հիմա 38 հոգի էք, աշխատեցէք իմ որդւոյս ձեռքին տակ 350 լծվար երկրին վրայ, այն կանոնով որ մէկտեղ պիտի հաստատենք. այսինքն ձեզմէ իւրաքանչիւրն ուծիկ մը պիտի ունենայ. ես, երկրի ու ընկերակցութեան վճարքով փոխ կու տամ ձեզի 76,000 Փռ., որոնց 70,000 Փռանք կարուածին զինն է, և 6000 Փռանք ալ ընկերակցութեան վճարքը, գործեաց, սերմանց, սայլից և կենդանեաց համար են. կարուածին գրամագլխոյն շահ պիտի ունենամ 3 առ 0/0, ընկերակցութեան վճարքին 10 առ 0/0: Բերքը կը ծախենք, և եղած

բոլոր ծախքը հատուցանելէն ետև մնացածը կը բաժնենք, այս կերպով կամայ կամայ եօթն ընտանիքն ալ կրնար մէյակէկ տէր ըլլալ իմ երկրիս »:

— Ինչ կ'ըսես, հայր սուրբ, կ'աղաղակէ Գրիգոր. ինչպէս կրնաս հաւատալ այս բաներու: Բայց այս եօթն ընտանիքն ինչպէս կրնան Փրանկիսկոսի 350 լծվար երկրին տէր ըլլալ:

— Ինչպէս ըրաւ Փրանկիսկոս որ քսան տարուած մէջ այնպիսի բախտ մը չինեց որ ըստ ինքեան մեծ է, ոչ թէ գումարին շատութեանն համար, այլ այն արդեանց որ պտղաբերեցին ու պիտի պտղաբերին իր բարի օրինակովն, որ կը խստաովանիմ անկեղծութեամբ թէ ունեցած ակնկալութեանէս շատ վեր եղաւ: Պիտի խօսիմ անոր եղբարց վրայ ալ, որ իր ձեռաց տակ նոյն հրաշքը գործեցին: Առ այժմ՝ այսչափս բաւական է գնացէք տուներնիդ:

Ամենքն ոտք կ'ելլեն ու յարգանքով ողջունելով զժողովրդապետը՝ տուն կը դառնան: Քիչ մը ետ կը մնայ Գրիգորը, ու ներուճն կը խնդրէ ստէպ ստէպ խօսքն ընդ հասելուն համար: Իսկ ազնիւ քահանայն անոր ուսը ձեծելով կ'ըսէ. — Գնա հանգիստ քուն եղիր ու նայէ որ վաղն աղէկ երգես. վասն զի ուրիշ հոգեպաշտօն մ'ալ պիտի կատարուի Գոմինիկոսի համար: Քեզի հրամանն խօսքս կարելու վաղը իրիկուն և միշտ: Պատմեմ պիտի քեզի վերն հաշուի մէջ

յիշուած գործակցական ուրիշ ընկերութեանց վրայ ալ, որոնք այնպիսի բաներ են՝ որ աշխարհս 'ի լաւն պիտի փոխեն:

Քանի մը տանուաւերք ալ կեցեր էին տեղեկանալու և խորհուրդ Հարցընելու տէրութեան պարտամուրհակաց վրայ, խնայութեան Արկեղ տնտրակաց վրայ, ապահովագրութեան ընկերութեանը վրայ, ժողովրդական պանքաներուն վրայ: Պատշաճ հրահանգներ առնելով ամէնն ալ գնացին. և բարի ժողովրդավետն ալ ճրագն առած ելաւ սանդուխներէն վեր, և յետ եռանդեամբ առ Սատուած աղօթելու, որպէս զի իրեն միտք և սիրտ տայ ժողովրդեանը բարւոյն համար աշխատելու, մտաւ անկողին լի վստահութեամբ յՍատուած, և գոհօր մ'ալ բրիստոնէաբար անցընելուն վրայ՝ քուն եղաւ:

## ԵՐԿՐՈՐԴ ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՆ

Կ օ շ կ ա կ ա ռ և և գ ո թ ճ ա տ ա ն  
գ Ղ խ ա շ ո թ ռ :

Երկրորդ առաւօտն ուրիշ հանգստեան պաշտօն մըն ալ կը կատարուէր Դոմինիկոսի հսգւոյն համար, որ Սմենասուրբ Հաղորդութեան եղբայրութիւնը կատարել կու տար, որուն ննջեցեալն ալ եղբայր էր: Եկեղեցին ժողովրդով լի էր, որովհետև գեղն սկսեր է լաւ ճանչնալ անոր պատմութիւնը: Եկեղեցւոյն խորը արանց կողմը չորս հոգի կը տեսնուէին քառասունէն քառասունուհինգ տարեկան, քանի մը այլ և այլ հասակով պատանեաց հետ մէկտեղ, միշտ ծունկի եկած արտասուալից աջօր, ներկայ կ'ըլլային այն տխուր պաշտամանը. կանանց կողմն ալ կար Փրանկիսկոսի ամուսինն իր հարսնացեալ աղջկամբ և Արմանտոյի ընկերաւն (որ Փրանկիսկոսի անդրանկին անունն էր): Պաշտօնէն ետև քանի մը տանուաւերք ժողովրդավետին



գնացին, և աղաչեցին որ քանի մը գու-  
մարներ ընդունի խնայութեան Արկղը ու  
ժողովրդական պանքաները գնելու համար :  
Կարողոսն որ աւելի խնայող էր, այնչափ  
գումար մը տուաւ որով կարելի էր գնուիլ  
ժողովրդական պանքային այլ և այլ բաժա-  
նորգութիւններ :

Ամէնքն ալ մէյմէկ քիչ բան բերեր էին  
առ բարի քահանայն, որ մէկէն ճամբայ ե-  
լաւ նոյն առաւօտը Միլան երթալու, խոս-  
տանալով իրիկուան բերել իւրաքանչիւրին  
իրեն մուրհակները, բաժանորգութիւնները  
և տեսարակները : Մեծ ակնկալութեան օր  
մ'եղաւ զեղացւոց, և մարացորեն ցանկելու  
եղանակն ըլլալով, արտերուն մէջ խօսքը  
միշտ Փրանկիսկոսին և աւագերէցին ճամ-  
բորգութեան վրայ պտըտեցաւ : Իրի-  
կուան զէմ Կարողոսն, Գրիգոր ու զիւղին  
վարժապետն հետեւին զիւղապետն ալ ի-  
րենց հովուին ընդ առաջ գնացին, որ գե-  
ղէն շատ հեռու չէր, ուր կառքէն իջնելով  
զուարթ զէմքով ձին տուաւ Գրիգորին,  
որ սանձէն բռնած տանի. իսկ ինքը կամաց  
կամաց քալելով զէպ 'ի տուն դարձաւ :

Երբ հասաւ, գամէնքն ալ ճամբեց, յանձ-  
նելով որ աղէկ ընթրիք ընեն և շուտ մը  
դառնան լսելու սովորական խօսակցու-  
թիւնն :

Իսկ ինքն հանելով ճամբու հագուստը և  
քիչ մը մաքրուելէն ետև նախ եկեղեցի  
կ'երթայ շնորհակալ ըլլալու Աստուծոյ, կը

դառնայ տունը ու քիչ մը կերակուր ուտե-  
լէն ետքը կ'երթայ իր սովորական դահլի-  
ճը, հետ առած խնայութեան Արկղ տե-  
տըրները, ժողովրդական պանքային բա-  
ժանորգութիւնները, պարտամուրհակնե-  
րը զորոնք գներ էր, և կը սկսի նոյն երեկո-  
յեան խօսելիքին վրայ մտածել : Շատ չանց-  
նիր, շուտով մը կը հասնին զիւղացիք, այս  
անգամ հետեւին մէկտեղ եկեր էր զիւղին  
կօշկակարն ալ, Յովսէփ անունով նիհար  
մէկն, ինչպէս են սովորաբար բոլոր կօշկա-  
կարք, գերձակք և նստած աշխատող զոր-  
ձաւորք. զժգոյն զէմք ունէր, քիչ մը զեղ-  
նորակ, և սակաւախօս ու մաղձոտ մարդ  
մ'էր : Ամէնքն յարգանքօք ողջունեցին ժո-  
ղովրդապետն, որ նստելու հրաւիրելով  
զամէնքը, կ'ըսէ .

— Ապրիք, այսպէս զձեզ ջանասէր տես-  
նալով, ապահով եղիք որ շատ հաճութիւն  
կը զգամ խօսելու ձեզի հետ, և յոյս ունիմ  
որ խօսքերս իրենց ակնկալեալ արդիւնքը  
պիտի ունենան : Գու ալ եկեր ես, Յովսէփ :  
Շատ ապրիս, ճիշդ այս իրիկուն խօսքս ա-  
րուեստիդ վրայ է :

— Կերեցէք, հայր սուրբ, համարձա-  
կութեանս, կ'ըսէ Յովսէփ :

— Մի թէ տունս բոլոր ժողովրդոցս  
տունը չէ՞. մանաւանդ ես քեզի շնորհակալ  
կ'ըլլամ : Նախ ասէք խնայութեան Արկղ  
տեսարները, դուն ալ Կարողոսն սուքու պար-  
տամուրհակներդ : Երբ 10 ֆուսնք ալ ունե-

նաք, մէկէն խնայութեան Արկղը տարէք  
 դրէք, որ շուտ մը շահ բերեն. այնպէս թէ  
 թթենի մը անկած ըլլայիք, որ անկածնուգ  
 պէս կը ծլի, կ'ածի ու արդիւնք կը բերէ, ու  
 բուն եթէ արմատն օդուն մէջ թողած ըլ-  
 րայիք, անպտուղ կը մնար ու կը չորնար:  
 Գիտցէք դարձեալ, թէ որ չէք յիշեր, այն  
 ստէպ հրատարակուած յայտարարութիւն-  
 ները, թէ գիւղապետն և թղթատան պաշ-  
 տօնեայք գործակատար պիտի ըլլան խնո-  
 յութեան Արկղին, ուստի ժամանակ մի  
 կորսնցընէք ձեր աւանդներ յանձնելու:

— Աւրեմն Եւզինէոսը...

— Կը ճանչնամ զինքը, վրայ կը բերէ  
 Յովսէփ. ժիրածիր պատանի մ'էր, ու Մոն-  
 ցայի վարպետը վրան շատ աղէկ կը խօսէր:

— Եղբայրը զինքն Մոնցայի կօչկակարի  
 մը քով գրաւ, և տարի մը իմ յանձնարա-  
 րութեամբս օրը 50 սանդիմ կը վաստակէր.  
 գիտէք, սիրելիք, որ գրեթէ այն սղտիկ  
 վաստակով կ'ապրէր: Առաւօտը կը գնէր  
 8 սանդիմով մարալիւրէ շինուած մեծկակ  
 հացի կտոր մը, ցորեկը արուր մը կ'ուտէր  
 12 սանդիմով, իրիկուան ալ կ'ուտէր կտոր  
 մը հատարակ հաց 8 սանդիմ տալով: Արով-  
 Հետեւ բարեկիրթ էր, վարպետը հրաման  
 տուաւ որ իր տունը պառկի ելլէ: Իսկ եղ-  
 բայրն ամէն ջանք կ'ընէր որ բաւական հաց  
 ունենայ, հետք քիչ մը պանիր կամ որ և  
 իցէ ուրիշ ուտելիք, կրկին յանձնելով որ  
 խնայութիւն ընէ. անոր համար զանձանակ

մ'ալ պարզեւ տուաւ, որուն մէջ կը ճգէր  
 այն ամենախեղճ խնայութիւնն որ կրնար  
 ընել:

— Հողիդ սիրես, ինչ կրնար օրը 50  
 սանդիմէն խնայել, կ'ըսէ Գրիգոր:

— Ախրն 50 սանդիմէն պակաս չէր  
 խնայեր, որոնց վրայ քիչ ատենէն աւել-  
 ցուց քանի մը սանդիմ ալ, ինչպէս հիմա  
 պիտի պատմեմ: Եւզինէոսը առաւօտը կա-  
 նուխ կ'ելլէր, խանութը կը բանար, աղէկ  
 մը կ'աւէր դայն, առանձին տեղ մը գնելով  
 կաշեաց կտորքն և աւելուքն և կ'ընտրէր  
 անտնցմէ բանի ծաւայող կտորներ:

— Աղէկ կ'ըսէ, հայր սուրբը, վրայ բե-  
 րաւ Յովսէփ:

— Այն ընտրած կտորուանքն Եւզինէոս  
 վարպետին կը ցուցընէր, որ սկզբան քիչ  
 մը կը զարմանար, յետոյ Եւզինէոսի դա-  
 նոնք մէկդի գնելու մտադրութեանը վրայ  
 կը ծիծաղէր: Երբ օրուան մէջ պէտք կ'ըլ-  
 ար կօչկի տակի կամ հաստարանի համար  
 կաշի կարատել, Եւզինէոս այն ատեն վար-  
 պետին երեսը կը նայէր, ու կ'ըսէր յարգա-  
 նօք թէ արդեօք այն մէկդի գրած կտո-  
 րուանքը բանի չեն գար: Վարպետն այն  
 ժողովածները բերել կու տար, ու զանոնք  
 յարմար գտնելով կ'ուրախանար, ու ոչ  
 միայն առ երեսն աչկերաք կը գտվէր, այլ և  
 ամէն կիրակի օրերը կ'ըսէր անոր. « Ա՛ռ  
 քեզի 20 սանդիմ, շագանակ գնելու »: Եւ  
 Եւզինէոս տասնուվեց սանդիմը գանձաւ

նակը կը ձգէր, և որովհետև կը շարունակէր միշտ յարմար կտորուանք գտնելու, անոր համար աշկերտն ամէն կիրակի գրեթէ վաթսուն սանդիմ կ'ունենար, որուն յիսունը միշտ գանձանակը կը ձգէր: Գիտէք որ կիրակի օրերը կօչկահարաց աշկերտները նոր կամ կարկըտած հողաթափներն ու կօչիկներն առգնողաց տունը կը տանին: Եւզինէոս փութաջան աշկերտ մ'ըլլալով, լաւագոյն առգնողներուն ինք կը տանէր, որոնք միշտ քանի մը սանդիմ պարգև կու տային, զոր յարգութեամբ և գրեթէ ամբնալով կ'ընդունէր, թէ որ 5 սանդիմ ալ ըլլար առածն, երկուքն որոշած էր գանձանակը ձգելու: Ինամբով կը գործածէր Հագուստները, ճերմակեղինաց նախ իր մայրն և Փրանկիոսի կինը հող կը տանէին. յետոյ վարպետին ընտանիքը կը հողային, որոնց շատ սիրելի էր իր պատրաստական կերպովն: Կիրակի օրերն վարպետին հետ եռանդեամբ եկեղեցական պաշտամանց ներկայ կը գտնուէր, երբոր Մոնցա էր, և երբ տուն կը գառնար՝ զինքը մեր եկեղեցին կը տեսնէի. կու գար զիս ալ բարեւելու: Երբ վարպետը խնջոյք մը կ'ընէր, Եւզինէոս կ'օգնէր խոհանոցին մէջ վարպետին կնկանը, փոխանակ աստիս անդին ծուռ գտլու միտաստար ընկերաց հետ, չէ թէ բան մ'աւելի վատաբերելու համար, մանաւանդ թէ սեղանի ժամանակ կը ձգէր կը փախչէր, ծակաչք շերեւտլու հա-

մար, ու շատ ազաշել պէտք էր զինքը սեղանի բռնելու: Այսպիսի սովորներով կը խնայէր իր ցորեկուան ճաշն, ու ապուրին 12 սանդիմը կը դնէր գանձանակը, և երբեմն ալ ընթրեաց 8 սանդիմը:

— Ինչ բարի պատանի է, վրայ կը բերէ Յովսէփ:

— Վեց ամիս էր, և գանձանակը մինչև բերանը լեցուած էր, կտորեց զայն՝ միտքը գնելով որ շահեցունէ այն գրամը: Գիտէք որչափ ստակ գտաւ. պատուելի վարժապետ հրամմէ սեղանաստախտակին մօտ ու գրէ:

— Ահա տախի կ'ոմ:

— Աւրեմն գրէ

Վեց ամիս . 50 սանդիմէն .	Ֆու .	5 .
Երկու կիրակի 16 սանդիմէն	»	52
Քսան կիրակի կտորոց համար 50 սանդիմէն . . .	»	10 .
26 կիրակի առած ձեռածիրը		
13 սանդիմէն . . . . .	»	3 . 90

Իտլանդակութիւն Ֆու . 17 . 22

— Ինչ պիտի ընէ Եւզինէոս այս 17 Ֆուանքով ու 22 սանդիմով, կ'ըսէ Գրիգոր:

— Պէտք է գիտնաս որ Եւզինէոս դեռ

ևս 13 տարեկան էր: Այս ստակը դրաւ Մոնցայի խնայութեան Արկղը, 13 ֆռանքով տեարիկ մը ստանալով ու ուրիշ գանձանակ մ'ալ առաւ Տ հարիւրորդ տարով, որուն մէջ աւելցածը կը գնէր իբրև սերմն: Նոյն ջանքով շարունակեց, ու տէրը տեսնելով որ Եւզինէոսի օրինակն իրեն շատ օգուտ կը բերէր, որովհետև ուրիշ գործաւորք և խանութի մանչերն ալ աւելի կ'աշխատէին, և խանութն ալ միշտ 'ի կարգի էր. և թէ յաճախորդք շատ գոճ էին, վասն զի Եւզինէոս շատ մաքուր կը փայլեցընէր կօշիկներն ու հողաթափները, և մինչև որ կակղած, մաքուր ու փայլուն չըլլային հաշիւոյ պէս չէր տանէր գանձնք իւրաքանչիւր տիրոջը, ասոր համար կ'աճէին միշտ ձեռածիրք ամէն կողմանէ. կ'ընտրէր խնայութեամբ կաշեաց և մորթոց ձգուածներէն կտորներ, պղտիկ բան մ'ալ չէր կորսընցընէր, ոչ ասղանի, ոչ թեւ, ոչ կաշի, ոչ ներկ, ոչ վրձին, ոչ արջասպ ներկ շինելու. խնամքով կը պահէր երկաթէ կտրոցները, ձիւթը, այնպէս որ տէրն օրականը 60 հարիւրորդ բրաւ, շարունակելով միշտ կիրակի օրերն 50 սանդիւմ ալ տալու: Արով տարւոյն վերջը լեցուն գտնուեցաւ գանձանակը: Աւրեմն գրէ պատուելի վարժապետ.

Աւուրք 160, օրք 20 սանդիւմէն ֆռ. 32. —  
 Կիրակէք 26, կիրակին 50  
 սանդիւմէն . . . . . » 15. —  
 Կիրակէք 26, կիրակին 36  
 սանդիւմէն . . . . . » 7.80  
 ֆռ. 52.80

— Եթէ աւելցնենք ասոնց վրայ ֆռանք 1.92 որ մնացեր էր յետ գնելու Տ սանդիւմով գանձանակը, 25 սանդիւմով խնայութեան Արկեղ տեարիկը, ու նոյն Արկեղ յանձնած 15 ֆռանքը, Եւզինէոս կ'ունենար . . . . .

— Երեք նարտէն ոսկի, հինգ ֆռանք, կրկին երկու ֆռանքնոց, մէկ 50 սանդիւմնոց, մէկ 20 սանդիւմնոց, ու երկու սանդիւմ, կ'ըսէ կարօլոս, այսինքն ֆռանք 69 և սանդիւմ 72:

— Բարի է: Աւրեմն ձայնդ բարձրացուր, կարօլոս: Դուտով առաջ երթանք, վասն զի այսօր կ'ուզեմ Մկրտչին վրայ ալ խօսիլ: Երկրորդ տարին 50 ֆռանք ալ կը գնէ խնայութեան Արկեղ մէջ, մնացածը կը գործածէ զոյգ մը տաբատ գնելու, բաճկոն մը ու կրկնոց մը նորոգելու, աղաչելով մօրն և Քրիստինէ հարսին որ ալ նեղութիւնը չկրեն իր հազուստներուն համար, վասն զի բաւական կ'ըլլայ ինքն իրեն, միայն ճերմակեղմնացն հօգ տանին: Ահա տասիկ հազուստի համար ստակն այսպէս կը բաշխեմ. գրէ պատուելի վարժապետ.

Պլինարկ մը . . . . .	Ֆու. 4.—
Տարատ, մէկ մէդր լաթ 6	
Փռանքով . . . . .	» 6.—
Կարողչէք . . . . .	» 1.50
Բաճկոն որ պատրաստ կը	
դնէ . . . . .	» 1.50

Պուճար Ֆու. 13.—

— Հիմա Եւզինէոսի քովը, որ 50 Փռանք խնայութեան Արկղը դրաւ, 15 Փռանք հազուատի ծախեց, ընդ ամէնը 45 Փռանք՝ դարձեալ կը մնայ Ֆու. 11.72. ուսկից 8.72 Փռանք կը հատուցանէ ժողովրդական պանքային, ընկեր գրուելով 14 տարեկան հատակէն, մնացած 5 Փռանքն ալ դանձանակը ձգեց:

— Իրաւ դարմանալի տղայ է, կ'ըտէ կարողոս:

— Կը տեսնաք թէ խնայողութիւնն և նախատեսութիւնն ինչ բաներ կը դորձեն, սիրելի ժողովուրդ: Եւզինէոս 14 տարեկան է, ու 45 Փռանք խնայութեան Արկղն ունի, սկսեք է ընկեր ըլլալ ժողովրդական պանքային, մարտը հազուած, վրան զըլուխը միշտ կոկ, այնպէս որ թէ վարպետն և թէ անոր ընտանիքն իրեն հետ շրջագայութեան կ'ըլլեն ու երբեմն զինքն ալ մէկտեղ կը տանին բարեկամաց հետ նախաձայլի, թէ և աւելի առ հնազանդութեան քան թէ ուրիշ պատճառաւ երթայ: Իրեն

մեծ դրօսանքն էր, պարտքը կատարելէն ետեւ քիչ մը պարտելու ելլել, որ պէտք են ընկանոր արուեստն ունեցող ամէնքը, և ես ալ գնոյնը միշտ կը պատուիրէի իրեն: Իսկ երբ կարող կ'ըլլար տուն գալու զմայրը տեսնելու համար ալ ուրախութիւնը չափ չէր ունենար: Չէք կրնար երեւակայել թէ ինչ հաճութիւն զգաց՝ երբ 14 տարին լմընցուց, վասն զի անկէ ետեւ ինքն ալ ինչպէս որ և իցէ քաղաքացի գործակցական ընկերութեան օրինաւորապէս մասնակից կրնար ըլլալ, ուր կ'երթար իր ամէն պէտք եղածը գնելու, ուր երբ կրնար՝ կ'երթար գիրք մը կարգալու և ուրուագծութեան դաս առնելու:

— Վերջապէս պատմէ մեզի թէ ինչ է այս օրհնեալ գործակցական ընկերութիւնը:

— Գեռ ասենք եկած չէ. այսչափն բնեմ որ մեր հացեփող ընկերութեան տեսակ մ'է, ինչպէս մենք մէկու մը կը հատուցանենք, վրան կը զգուշանանք, իրեն կ'օգնենք, որպէս զի կամայք ժամանակ վաստակին, զոր երբեմն կը կորսնցունէին, մերթ մէկուն մերթ միասին տանելով եփելու համար իրենց հացն, որով շուտ մը կը բորբոսէր 'ի վնաս ամենուն առողջութեանը: Ուր հիմա ունինք հացն աւելի նորեփ, առողջարար, որով նաև սննդարար ու քիչ ծախքով, և հիմա կրնանք մեր սովորական փուռերը գործածել կիրակի օրերը

Հաւ, միս, կարկանդակ և ուրիշ կերակուր-  
ներ եփելու, ինչպէս թէ աւելի խնայողա-  
կան հասարակ խոհակերպք մ'ըլլար: Այս-  
չափս բաւական է առ այժմ, չարունակներ  
Եւզինէոսին պատմութիւնը:

— Լաւ, լաւ. անշուշտ յետոյ կը խօսին  
գործակցական ընկերութեան վրայ, որուն  
մասնակից է Եւզինէոս, կ'ըսէ Գրիգոր:

— Այո՛, այո՛. կամ ես կամ գիւղապետը  
կը խօսինք այս օգտակար ընկերակցու-  
թեանց վրայ: Ուրեմն երկրորդ տարին Եւ-  
զինէոսի աւուրչէքը յեղաւ 75 սանդիւմ, և  
ուրուսագծութեամբը որ կը սորվէր, ու ա-  
բուեստին մէջ ցոյց տուած արժնութեամբն  
այնպիսի յաջողակութիւն ստացեր էր, որ  
ինքն իրեն կրնար գործ տեսնել: Արդէն  
գիտէր աղէկ կարկըտել կօշիկներ ու առ-  
նուազն օրը զոյգ մը կրնար լրմընցընել:

Ազնիւն Եւզինէոս նախանձելի էր Հա-  
սակակից արուեստակցացը, վասն զի ա-  
մենէն աւելի աշխատատէր էր, ստէպ եկե-  
ղեցի և գործակցական ընկերութեան ըն-  
թերցարանը կը յաճախէր, և թէ ամենուն՝  
ընտանեաց և զրսեցոց շատ սիրելի էր:  
Խեղճը կը վշտանար առ ինքն ուզղեալ նա-  
խատալից խօսքերովն ու շատ անգամ ալ  
դառնապէս կու լար. բայց դառն պատաս-  
խան մը կամ նախատանաց բառ մ'ալ նա-  
խատջաց չիփոխարինեց. միայն կը ջանար ե-  
կեղեցին ու ընթերցարանն անոնց աչքին  
շատ չերևալ, որուն համար յանդիմանեցի

զինքն, և երբ պատճառն իմացայ՝ խրատե-  
ցի զինքն՝ առ սէրն Աստուծոյ և ընկերին՝  
տանել նախատանաց. կրածներուն վրայօք  
խօսք մ'ալ չբացաւ վարպետին: Անգամ  
մը ըսաւ ինձի թէ միտք ունի այն խանու-  
թէն ելլելու, ու ես միտքը փոխեցի, յոր-  
դորելով որ միշտ անխռով ըլլայ. վերջա-  
պէս յաղթեց Եւզինէոս համբերութեամբն  
ու արտասուօք՝ չարութեան ու տղիտու-  
թեան: Գեռ աւելին ըբաւ: Երկրորդ տա-  
րին կէս չէր եղած, որ ընկերքն սկսեր էին  
սիրել զինքն եղբօր պէս, ու կը յարգէին  
զինքն՝ ինչպէս թէ հասակով, խորհրդով,  
ծանօթութեամբ ու առաքինութեամբ ի-  
րենցմէ վեր ըլլար. և որ աւելի մխիթա-  
րականն է, սկսան անոնք ալ իրեն նմանիլ:  
Երկրորդ տարւոյն վերջն, ինչպէս հիմա  
հաշիւը պիտի ընեմ՝ ձեր զիմացը, սլզախ  
գումարիկ մ'ունէր, արգասը վատաբերած:  
Գրէ պատուելի վարժապետ:

— Պատրաստ եմ, կը պատասխանէ վար-  
ժապետը:

540 օր՝ 50 սանդիւմէն . . .	Ֆռ. 102.—
52 կիրակի՝ 60 սանդիւմէն . . .	» 51.20
52 կիրակի՝ 50 սանդիւմէն . . .	» 26.—
25 խնայեալ ճաշ՝ 15 տան- դիւմէն . . . . .	» 5.75
10 խնայած ընթերլը՝ 10 սանդիւմէն . . . . .	» 4.—

— Արդ հաննէր հազուստի ծախքը, և ժողովրդական պանքային առածը: Աս ալ կայ որ ուսից աղանելեաց գանկ մ'ալ չէր վճարեր, որովհետև վարպետն ամեն եղանակին զոյգ մը կօշիկ կու տար իր խանութին ծախքով: Աւրեմն գրէ

Հատոյց ժողովրդական պանքային 50, ֆռանքնոց բաժանորդութեան մնացորդը . . . . .	Ֆռ. 41.28
3 1/4 մէզր բամբակէ կտաւ տարատի ու կրկնոցի համար՝ մէզրն 2 ֆռ. . . . .	» 6.50
2 մէզր կտաւ ուրիշ տաւ բատի մը համար՝ մէզրը ֆռ. 1.50 . . . . .	» 3.—
Բաճկոն . . . . .	» 2.—
2 վրիթ աչիկնակ՝ ֆռ. 1.50 առ մին . . . . .	» 3.—

Ֆռ. 55.78

Կարողչէք . . . . . » 11.—

Գումար ֆռ. 66.78

— Կը տեսնէր որ Եւզինէոս 66.78 ֆռանքով վիճակին համեմատ և աւելի ալ հազուեցաւ: Հատոյց ժողովրդական պանքային բաժանորդութեան մնացորդը և կրցաւ այնչափ ալ աւելցունել մինչև խնայութեան

Արկեղ տետրիկն ալ ճոխացուց ֆռ. . . . . Կարողս դու խօսէ:

— 97 ֆռ. և 17 սանդիւմ մնացին Եւզինէոսին քով, որոնցմէ ֆռ. 97 կրնայ խնայութեան Արկղին տալ, և կամ չորս նաբոյէոն ոսկի, երեք հատ 5 ֆռանքնոց, և մէկ հատ 2 ֆռանքնոց, և կրնայ գնել նոր գանձանակ մը 12 սանդիւմ, կ'ըսէ Կարողս:

— Լաւ է, կ'ըսէ վարժապետը, մինչդեռ հաշուետախտակին մէկ անկիւնը հաշուի դրաղած էր:

— Տասնըհինգ տարեկան էր և մէկ ֆռանք աւուրչէք ունէր, միշտ նոյն ձեռածիրներն ալ առնելով, և միով բանիւ ունեցածն հետեւեալքն են.

500 օր՝ 50 սանդիւմ խնայմունքով . . . . .	Ֆռ. 90.—
62 տօն՝ 60 սանդիւմէն . . . . .	» 57.20
62 ձեռածիր՝ 50 սանդիւմէն . . . . .	» 31.—
25 խնայեալ ճաշ՝ 50 սանդիւմէն . . . . .	» 12.50
20 խնայեալ ընթրիք՝ 20 սանդիւմէն . . . . .	» 4.—

Գումար ֆռ. 174.70

— Շարունակէ, պատուելի վարժապետ, ըսելիք ծախքերս գրելու:

Գլխարկ մը . . . . .	Փռ.	4.—
2 մէդր լաթ, կրկնոցի ու տաբատի համար, 4 Փռանքէն . . . . .	»	8.—
Կարողչէք . . . . .	»	12.—
3 1/2 կտաւ բաճկոնակի ու տաբատի համար՝ Փռ. 1.50 առ մէդր . . . . .	»	5.25
Կարողչէք . . . . .	»	10.—
Բաճկոն ու վզի թաշկինակ . . . . .	»	5.50
Երեք սովորական թաշկինակ . . . . .	»	5.—

Գումար Փռ. 45.75

Եւ Եւզինէոս աւելօք ալ ծախք ըրաւ, ուրովհետեւ կ'ուզէր միշտ կոկ երևնալ. բայց մոլութիւն մը չունէր, բնաւ պանդոկ չէր հանդիպէր, անօգուտ ծախք չէր ընէր, բազդի խաղ չէր խաղար, գիտնալով որ մենք պէտք է մեր բախտը շտկենք աշխատանօք, խաղի մէջ չէր կորսընցընէր, վասն զի չէր խաղար, ամենեւին չէր ծխեր: Թէ որ աւելորդ ժամանակ ունենար՝ ինչպէս ըսի, կարդալու, գրելու, ուրուագծելու կ'անցունէր, և հաշուէզիրք բռնելու կ'օգնէր վարպետին. և այս ծառայութեան համար քանի մը ստակ ալ ձեռք կը ձգէր, զոր փոխանակ իր հաճոյիցը՝ միշտ 'ի բարին կը գործածէր: Այս տարի վաստըկած ըլլալով

Փռ. 174.70 և ծախած՝ Փռ. 45.75, կըրցաւ խնայութեան Արկղը դնել Փռանք 128.95:

Հասակը 16 տարուան մէջ էր, ու Եւզինէոս սկսաւ գործի վրայ աշխատիլ. հիմա ինչ երջանիկ է, ինքը զինքը մարդ կը կարծէ, երբ կը մտածէ թէ աշխատանքն ու վաստակն այսուհետեւ իրմէ կը կախուին: Վարպետին սակարկեց զոյգ մը հողաթաւ փին՝ Փռ. 1.25 ու զոյգ մը կօշիկն՝ Փռանք 2 1/2 կարողէք: Գիտէք որչափ կ'աշխատի Եւզինէոս: Օրը հողաթաւի մը ու քիչ մ'ալ աւելի կը կարէ, ու մէկ ու կէս օրուան մէջ՝ մեծկակ կօշիկ մը: Որով տարւոյն 290 աւուր մէջ աշխատանօք վաստըկածը կ'ըլլայ... գրէ, պատուելի վարժապետ,

Հողաթաւ 150 զոյգ՝ 1.25	
Փռանքէն . . . . .	Փռ. 187.50
Կօշիկ 90 զոյգ՝ 2.50 Փռանքէն . . . . .	» 225.—
	Փռ. 412.50

Հիմա հաշուենք թէ որչափ խնայած է մէկ տեղ դնելով գնողաց տուած ձեռածիրներն. որ Փռանքէն պակաս չէին, որովհետեւ ինքն էր հողաթաւները և կօշիկները կարողն ու անոնց տանողը. հաշուի մէջ դնելով նաև թէ տէրը ժողոված կաշիի կտորներուն համար շաբաթը փոխանակ 50



սանդիմ տալու, ամէն ամիս ողջ հինգ  
Փռանգնոց մը կը պարգևէր իրեն:

— Հոս, կ'ըսէ Կարոլոս, պէտք է Եւզի-  
նէոսի բոլոր վաստրկածը նշանել. ներէ,  
հայր սուրբ, եթէ ես ըսելու ըլլամ:

— Հրամանքդ ըսէ:

— Ուրեմն գրէ, պատուելի վարժապետ.

Հողաթափը և կօշիկը . . . » Փռ. 412.50

12 ամիս՝ Տ Փռանքէն . . . » 60.—

52 տօնական ձեռածիրք՝

մէկ Փռանքէն . . . » 52.—

Խնայեալ ճաշք և ընթրիք՝

ենթագրենք . . . » 30.—

Փռ. 554.50

ԾԱԽԲ

Օրական սպրուստն՝ 70  
սանդիմէն . . . . . Փռ. 255.50

— Հագուստի համար  
անցեալ տարուան պէս  
գրեմ, կ'ըսէ վարժապետը:

— Գրեթէ կրկինը, կը  
պատասխանէ ժողվրդա-  
պետը, այսինքն . . . . . » 90.—

Փռ. 345.50

Սրգ եթէ հաններ Փռանք  
345.50 նախընթացէն . . . » 554.50

Կը դանենք որ Եւզինէոս  
խնայած կ'ըլլայ . . . » Փռ. 209.—

— Օրական վաստակն և ոչ Փռանք մը,  
և ոչ վաթսուն սանդիմ, կ'ըսէ Գրիգոր:  
Խեղճ Եւզինէոս:

— Առանց մտածելու կը խօսիս. ամէն  
բանէ առաջ Եւզինէոս 16 տարեկան հա-  
սակէն վաստակ ունեցեր էր Փռ. 554.50  
որ օրը գրեթէ մէկ Փռանք ու 52 սանդիմ  
ըսել է, տօներն ալ մէկ տեղ առնելով, ու  
ստոնցմով չափաւորապէս ապրեցաւ ու  
օրը գրեթէ 60 սանդիմ խնայեց: Համբերէ  
քիչ մը, ու պիտի տեսնես թէ ինչպէս քի-  
չով գիտցաւ շատցընել, երբ քչին հետ  
միացած ըլլայ բարի կամք ու ճարտար աշ-  
խատանք: — Ուրեմն մտաւ հիմա 17երորդ  
տարին, խնայութեան Արկեղ 175 Փռանք  
տալով:

— Բայց այդ Եւզինէոսը բնաւ չի՛հիւան-  
դանար, կ'ըսէ Գրիգոր:

— Երբ մէկը չափաւոր է ու տելեաց մէջ,  
գինետուն չհանդիպիր ու վտահ է յանձն  
և առ Արտուած, ու կ'աշխատի մտադրու-  
թեամբ և ըստ կարի լաւազոյն ընելու շա-  
րունակեալ փափազանօք, անիկայ ատող-  
ջութիւնն ալ լաւ կը պահէ: — Առաջ եր-  
թանք: — Ուստի 18 տարին կը սկսի նոր  
175 Փռանքով, 19երորդը 160 Փռանքով  
ու ժողովրդական պանրային 50 Փռանք-  
նոց բաժանորդութեամբ մը. 20երորդը  
կը սկսի 140 Փռանքով ու դորձակցական  
մթերանոցին 20 Փռանքնոց 4 բաժանոր-  
դութեամբ. 20երորդ ու 21երորդ տարին

ստիպուեցաւ զինուորազրութեան պատ-  
ճառաւ քիչ մը ստակ ու ժամանակ ծախել:

— Բայց Եւզինէոս միշտ գործաւոր պի-  
տի մնայ:

— Ահա հասակին նշանաւոր ժամանակն  
հասանք, որուն մէջ պիտի իր գործոյն տէր  
ըլլայ՝ ինքն իր գլխուն խանութ բանալով:

— Այսպէս լաւ է, կը պատասխանեն ու-  
մանք:

— Խորհուրդ տուեր էի այս բանս ընե-  
լու, վարպետն ալ ոչ միայն անձին, այլ և  
այլոց բարիքը կ'ուզէր, ինձմէ աւելի 'ի նոյն  
զինքը կը յորդորէր, ինչուան միտք ալ ու-  
նենալով մէկ աղջիկն հարս տալ անոր,  
այնպէս սիրելի եղած էր ամենուն: Գիտ-  
նաք որ Եւզինէոսի և ոչ մտքէն կ'անցնէր  
այսպիսի բան մը, այլ վարպետն ինքնին,  
թէպէտ և քահանայից պէտք չէ այսպիսի  
գործոց մէջ մտնելու, աղաչեց ինձի որ  
խօսք բանամ: Եւզինէոս այս եղած առա-  
ջարկութեանը վրայ զարմացաւ մնաց, ե-  
րեսները կարմրեցան, և սրտին գոհու-  
թենէն սկսաւ լալ: Ըսի որ Աստուծոյ շնոր-  
հակալ ըլլայ, որ օրհներ էր իր աշխատանքը  
բարի քրիստոնեայ ու բարի քաղաքացի ըլ-  
լալուն համար, և որովհետեւ այսպիսի ա-  
ղէկ բողոք մը ընդառաջ ելեր էր (նոյն ժա-  
մանակ մայրը մեռած ըլլալով) սիրտ կու  
տայի որ ընդունի իմ միջնորդութեամբս  
իրեն եղած առաջարկութիւնը:

— Իրաւքընէ այսպիսի բախտի մը ար-  
ժանի էր Եւզինէոս, կ'ըսեն ամէնքը:

— Կանչեցի զՓրանկիսկոս, որ քանի մը  
տարի էր վարձու առեր էր այն դաշտն որ  
իր քրտամբ ոռոգուած ու իր խնամքով  
մշակուած՝ այնչափ արգասաբեր եղեր էր.  
բանն յայտնեցի անոր՝ խորհուրդ տալով  
որ ջանայ յորդորել եղբայրը խանութ բա-  
նալ, ու կին առնուլ վարպետին աղջիկն.  
Իրեն յանձնեցի խնայութեան Արկեղ տետ-  
րիկը ու բաժանորդութիւններն որ քովս  
էին, որոնք կոչկակար պատանւոյն խնայած  
ստակը կը ներկայացնէին: Կրնաք երեւա-  
կայել Փրանկիսկոսի խնտումն երբ աե-  
սաւ այն տետրն, ու բաժանորդութիւններն  
և լսելով այսպիսի բարեգուշակ լուր: Խոս-  
տացաւ մէջ մտնել, և որովհետեւ լաւ կը  
ճանչնար իր եղբայրը, գրեթէ խօսք տուաւ  
հաճել զամէնքն: Հիմայ քիչ մը տեսնանք  
թէ Եւզինէոսի խնայութեան հաշիւն ար-  
դեօք կրնանք ընել ինչուան խանութ բա-  
նալու օրն իր դրամովը:

Երեքտասաներորդ տարի:

1. <sup>o</sup> Գրամագլուխ. յԱրկզն խնա- յութեան . . . . .	Փռ.	15.—
2. <sup>o</sup> Գրամագլուխ. յԱրկզն խնա- յութեան . . . . .	»	30.—
3. <sup>o</sup> Գրամագլուխ 'ի հաշիւ Ժողո- վըրդական պանքայի բաժանոր- դութեան մը . . . . .	»	8.72
<hr/>		
Արդ Եւզինէոս 13 տարեկան հա- սակին կ'ունենայ գումար մը	Փռ.	53.72

Նախընթաց գումար Ֆռ. 53.72

Չարեքուտասներորդ տարի:

Առաջին և երկրորդ դրամագլխոյն հատուցած շահն . . . . .	Ֆռ.	1.80
Իր մասին բաժանորդագինը ժողը- վըրդական պանքայէն . . . . .	»	— 80
4. <sup>o</sup> Դրամագլուխ. յԱրկին խնա- յուլթեան . . . . .	»	97. —
5. <sup>o</sup> Դրամագլուխ 'ի լրուսն հաշուի առաջին բաժանորդութե ժա- ղովրդական պանքային . . . . .	«	41.28

Ուրեմն Եւզինէոս 14 տարեկան  
հասակին կ'ունենայ գումար մը Ֆռ. 194.60

Հեզատասներորդ տարի:

Խնայութեան Արկեղ մէջ 143.80 Ֆռանքաց դրամագլխոյն հատու- ցած շահն . . . . .	Ֆռ.	5.75
Բաժանորդագին պանքայի բաժա- նորդութեանը 10 առ 0/0 . . . . .	»	5. —
6. <sup>o</sup> Դրամագլուխ. յԱրկին խնա- յուլթեան . . . . .	»	128.90

Ուրեմն Եւզինէոս 15 տարեկան  
հասակին կ'ունենայ գումար մը Ֆռ. 334.25

Նախընթաց գումար Ֆռ. 334.25

Վեչատասներորդ տարի:

Խնայութեան Արկեղ մէջ 278.45 Ֆռանքաց դրամագլխոյն հա- տուցած շահն . . . . .	Ֆռ.	11.13
Բաժանորդագին պանքայի բաժա- նորդութեանը 10 առ 0/0 . . . . .	»	5. —
7. <sup>o</sup> Դրամագլուխ. խնայութեան Արկեղ մէջ . . . . .	»	175. —

Ուրեմն Եւզինէոս 16 տարեկան  
հասակին կ'ունենայ գումար մը Ֆռ. 525.38

Եօրեկտասներորդ տարի:

Խնայութեան Արկեղ մէջ 464.75 Ֆռանքաց դրամագլխոյն հա- տուցած շահն . . . . .	Ֆռ.	18.59
8. <sup>o</sup> Դրամագլուխ. յԱրկեղ խնա- յուլթեան . . . . .	»	175. —
Բաժանորդագին պանքայի բաժա- նորդութեանը 10 առ 0/0 . . . . .	»	5. —

Ուրեմն Եւզինէոս 17 տարեկան  
հասակին կ'ունենայ գումար մը Ֆռ. 723.97

Ոչրեկտասներորդ տարի:

Խնայութեան Արկեղ մէջ 658.17 Ֆռանքաց հատուցած շահն Ֆռ. . . . .	26.32
--	-------

Գումար Ֆռ. 750.29

Նախընթաց գումար ֆու.	750.29
Բաժանորդագին պանքայի բաժանորդութեանը 10 առ 0/0 . . . »	5.—
Թիւ 2 1/2 բաժանորդութիւնը, որ վատըկեցաւ դորձակցական միջերոցէն վեց տարուան համար բոլորական դին կորելով ֆու. 500, հաշուելով 10 առ 0/0 . . . »	50.—
9.° Գրամագրուիւ յԱրկիւղ խնայութեան . . . . . »	160.—
10.° Գրամագրուիւ Ժողովրդական պանքային երկրորդ բաժանորդութեան մը համար . . . . . »	50.—
<b>Ուրեմն Եւզինէոս 18 տարեկան հասակին կ'ունենայ գումար մը ֆու.</b>	<b>1015.29</b>

Ինկետասաներոյ տարի:

Խնայութեան Արկիւղ մէջ 844.49 ֆուանքաց հասուցած շահն ֆու.	33.77
Բաժանորդագին պանքայի երկու բաժանորդութեանց 8 առ 0/0 . . . »	8.—
Գործակցական ընկերութեանց 2 ու 1/2 բաժանորդութեանց 5 առ 0/0 շահն . . . . . »	2.50
Գործակցական միջերոցին վրայ ծախուած 250 ֆուանքին բաժանորդագինը 7 առ 0/0 . . . »	17.50
<b>Գումար ֆու.</b>	<b>1077.06</b>

Նախընթաց գումար ֆու.	1077.06
11.° Գրամագրուիւ յանճուած խնայութեան Արկիւղ . . . . . »	140.—
Թիւ 4 բաժանորդութիւնը 20 ֆուանքնոց դորձակցական միջերոցին . . . . . »	80.—
<b>Ուրեմն Եւզինէոս 19 տարեկան հասակին կ'ունենայ գումար մը ֆու.</b>	<b>1297.06</b>
<b>Քուսաներոյ տարի:</b>	
Խնայութեան յԱրկիւղ 1018.26 ֆուանքաց հասուցած շահն. ֆու.	40.73
Բաժանորդագին պանքայի երկու բաժանորդութեանց 9 առ 0/0 . . . »	9.—
Գործակցական ընկերութեանց 6 1/2 բաժանորդութեանց 5 առ 0/0 շահն . . . . . »	6.50
Գործակցական միջերոցին վրայ ծախուած 280 ֆուանքաց բաժանորդագինը 10 առ 0/0 . . . . . »	28.—
12.° Գրամագրուիւ խնայութեան Արկիւղ աւանդուած . . . . . »	200.—
Թիւ 5 բաժանորդութիւնը դորձակցական ընկերութեանց իւրաքանչիւրը 20 ֆուանք . . . . . »	100.—
<b>Գումար ֆու.</b>	<b>1681.29</b>
<b>Ահաւարիկ Եւզինէոս իր 20 տարուան հասակին սկիզբն</b>	
<b>Գումար ֆու.</b>	<b>1681.29</b>

Նախընթաց գումար Ֆա. 1681 • 29  
 ունէր Ֆա. 1684 • 29, որոնք  
 տարւոյն ընթացքին մէջ ամե-  
 ցան խնայութեան Արկեղ 4  
 առ 0/0 շահովն, ժողովրդական  
 պանքային 10 առ 0/0 շահովն,  
 զանազան գործակցական ըն-  
 կերութեանց բաժանորդու-  
 թեանց 5 առ 0/0 շահովն, և  
 գործակցական մթերոցին վրայ  
 ծախուած գրամոյն 6 առ 0/0  
 շահովն, ընդ ամէնը կ'ընեն  
 Ֆա. ....

— Ինծի թողէք, հայր սուրբ,  
 կ'ըսէ Կարոլոս, որ տախտա-  
 կին վրայ հաշուեմ:

— Հաշուէ, կը յաւելու քա-  
 հանայն:

Քասկերոյ առաջներոյ տարի:

Խնայութեան Արկեղ մէջ 1258-99  
 Ֆա. գրամուզլոյն հասուեցած  
 շահն 4 առ 0/0 . . . . Ֆա. 50 • 35  
 Բաժանորդագին 10 առ 0/0 երկու  
 բաժանորդութեանց ժողովը  
 գական պանքային . . . . » 10 • —  
 Մահ 11 առ կէս բաժանորդութեց  
 գործակցական ընկերութեան  
 ներու՝ 5 առ 0/0 . . . . » 11 • 50

Գումար Ֆա. 1753 • 14

Նախընթաց գումար Ֆա. 1753 • 14  
 Բաժանորդագին 275 Ֆանքայ,  
 զոր ծախեց գործակցական մթե-  
 րոցին վրայ 6 առ 0/0 . . . . » 16 • 50

Ուրեմն թէ որ աւանդած չըլլայ  
 խնայութեան Արկեղ և ժողո-  
 վըրդական պանքաներու՝ տա-  
 րւոյն անսուրբ ծախուցն հա-  
 մար զինուորադրութեան պատ-  
 ճառաւ, խանութ բանալու ա-  
 տեն պետի ունենայ . . . . Ֆա. 1769 • 64

— Ի՞նչ կարծէք, կ'ըսէ ժողովրդապե-  
 տը, այս գումարը բաւական չէ կոչկարի  
 խանութ բանալու:

— Եթէ ամէն գործաւորը այսպէս ընէին,  
 կ'ըսէ ձայն մը անգիւն, չորս կամ հինգ  
 տարուան մէջ ամէն մանուկ աշակերտ՝  
 վարպետ կ'ըլլար:

— Անուշա, վրայ կը բերէ ժողովրդա-  
 պետը, կամբով, առաքինութեամբ, ճար-  
 տարութեամբ, ու քիչ մ'ալ անդուլ խնա-  
 յողութեամբ, ինչպէս բրին Փրանկիսկոս և  
 Եւզինէոս, ամէն մէկ կրնայ տէր ըլլալ իր  
 աշխատանքին, որով մէկէ մը կ'ախտուն  
 չունենար: Շարունակենք:

Եւզինէոս տանն ու խանութին կէս  
 վարձքն 200 Ֆոանք վճարեց, տանը չա-  
 փաւոր կահույց ու կարտեսայ համար ծա-  
 խեց Ֆա. 445. տալով 180 Ֆոանք գնեց  
 խանութին կարոցներն ու գործիները. 600

Ֆոանք ալ տուաւ արուեստակցաց ընկերութեանը, զովը պահելով կարևոր պիտոյիցն համար միայն 200 Ֆոանք: Հարսին հայրը մտածեց տան կահէքը ինքն հողալ, կարևոր հագուստը, ակունքը աղջրկան տալ, այնպէս որ Եւզինէոս բացի մատանիի մը ծախքէն, որ արժեց 48 Ֆոանք, ու տուած անչուք ճաշէն, ուր հրաւիրեալ էին իր եղբարքն ու հարսին ընտանիքը, ընդ աւելնը 125 Ֆոանքէն աւելի ծախք չըբաւ: Այնպէս որ պսակին երկրորդ օրն ունէր պատրաստ տուն մը, խանութը բոլորովին կարգի գրած ու բաւականապէս պէտքն հողացած, սնտուկն ալ քչիկ մը ստակ, ուր դրաւ նաև ժողովրդական պանքային և գործակցական ընկերութեանց բաժանորդութիւնները, և սկսաւ աշխատիլ ինքն իրեն հաշտին, առանց ունենալու մասնաւոր յանձնարարութիւն մը: Քովը մնացածին ճիշդ հաշիւն ընենք:

Սակայն դիտնայք, սիրելիք, որ Եւզինէոս եթէ 1769-64 Ֆոանք խնայողութեամբ մէկդի գրած չըլլար, և ասկէ քիչ ալ ունենար, կրնար փոխ առնուլ ժողովրդական պանքայէն ունեցածին կէսն ու աւելի ալ, մինչև կրկինը, եթէ ուզէր: Ուստի եթէ 1000 Ֆոանք պահանջ ունենար ժողովրդական պանքայէն, կրնար առանց մէկէ մը կախումն ունենալու փոխ առնուլ 2000 Ֆոանք. եթէ 400 միայն Ֆոանք պահանջ ունենար, կրնար փոխ առնուլ 800

Ֆոանք: Եւ այս դէպքին մէջ կրնար փոխ առնուլ 200 Ֆոանք մը. թէ որ լաւ գործ մը դիմացն ելլեր, այն ատեն ընկերակցէ մը երաշխաւորեալ ինչուան 5000 Ֆոանք ալ կրնար փոխ առնուլ ժողովրդական պանքայէն:

— Կը հաւատանք, կ'ըսէ Գրիգոր, վասն զի հրամանքդ ես ըսողը:

— Գիտցած ըլլաս, Գրիգոր, որ ըսածս պարզ ճշմարտութիւն մ'է: Պատուելի վարժապետ, անցիր տախտակին դէմը:

Կէս վարձք տան՝ վճարուած ֆո.	200.—
Տան կահէք և կարասի . . . . .	» 515.—
Գործիք . . . . .	» 180.—
Կաշեաց և մորթոց . . . . .	» 400.—
Հարսնածութեան ծախք . . . . .	» 125.—

Ընդ ամէնը ֆո. 1220.—

Գրէ վարն ունեցածը . . . . . » 1769-64

Ուրեմն տունն ու խանութն ունեցածէն զաս, Եւզինէոս ունի . . . . . ֆո. 549-64

Բայց հապիւ թէ լմնցուցեր էր դոյզ մը հողաթափ կամ կօշիկ, շուտ մը գնուեցան սովորականէն աւելի սուղ գնով, որովհետև տե շինուածքն աղէկ էր, նիւթն ընտիր, և ձեւը հաճոյ:

Հարկ եղաւ շուտով աշակերտ մը բըս-

նելու, ու ամէկ մ'ետե ուրիշ մ'ալ, տարիէ մը վերջը՝ չորս աշխատաւոր եղան խանութին մէջ: Որովհետե քաղցր էր բնաւորութեամբ և անուշ կը վարուէր գործաւորացն հետ, ուստի ամէնքը կը փութային իրեն քով աշակերտա ըլլալ, և ընտիր պատանիք կ'աշակերտէին ճրի և ստակ ալ տալով: Տարիէն վերջը, թէ ընկերակցութեան, և թէ կաշուոյն տուած վճարքը՝ բազմացաւ. վեց գործաւորք էին, զորոնք կը բռնէր ինչպէս որ կու գային յանձնարարութեանց ուշ չդնելով, միայն թէ առողջ ըլլային, չնայելով ոչ բարին և ոչ չարն, որովհետե զինքը այնպէս սիրելի կ'ընէր, որ չարք անգամ բարի կ'ըլլային և բարիները լաւագոյն կը փոխուէին: Տասներութ տարիէ ամուսնանալէն 'ի վեր, չորս զաւակ ունեցաւ. Աստուծոյ օրհնութիւնն անպակաս էր վրայէն: Երկար հաշիւներով գձեղ չյոգնեցնելու համար այսչափս բռնմ որ տունն ուր կը բնակի, Մոնցայի մէջ գեղեցիկ դիրք մ'ունի, մաքուր դուրսէն ու ներսէն գոհարի նման, իրենն է. մէջը բնակւէն գաա՝ 1000 ֆռանք ալ վարձք կ'առնու: Իր խանութն երկու մասն է, մէկն աշխատանոց գործաւորաց համար, միւսը վաճառատեղի. հարկաւորն անպակաս է, ու ամէն օր ընդ հողաթափ, կօշիկ ու կաշի 100 ֆռանքէն պակաս առուստուր չընէր:

Բաց 'ի խնայութեան Արկեղ տետրակներէն, ժողովրդական պանքային և գոր-

ծակցական ընկերութեանց բաժանորդութիւններէն, ազարակիկ մ'ալ ունի, ու իր ծանօթքը կ'ըսեն թէ 100 հազար ֆռանքէն աւելի վիճակ մ'ունի. թող կնոջն օժիտն, որ չուզեր առնուլ, գոհ է 4 1/2 առ 0/0 շահով աներով ձեռքը թողուլ, գրաւ մ'ալ չսահանջելով: Բաց 'ի բերածէն հետք կնոջն օժիտն էր 6000 ֆռանք: Յարմար ժամանակ մ'ալ կը խօսիմ իր ըրած բարիքին վրայ, զոր մինչև հիմա ալ կ'ընէ: Սակայն չմոռնալու համար կ'ըսեմ որ ինքն ընկերութիւն ժողվեց բոլոր կօշիկակարները, որպէս զի իրենց արուեստին կարեւորները շատը մէկէն դնեն, և միջներին բաժնեն ամենուն պիտոյիցն համեմատ, որով մեծապէս շահաւոր կ'ըլլայ:

— Միով բանիւ, այս Եւզինէտն ալ հրաշալի մէկն է:

— Եւզինէտս հիմա գրեթէ հարուստ է, և այս հրաշքը գործեցին իր բազուկները, կամքը, անգուլ խնայողութիւնները, օրն երկու սանդիմ սխևելով գանձանակին մէջ դնել: Ինչ հաճոյք կը պգամ, երբ ամէն անգամ Մոնցա կ'երթամ, տեսնելով զինքն ընտանիքն ու աշխատաւորները չորս կողմն առած, որ քան գէայր աւելի կը սիրեն զինքը: Տնէն գուրս ամենեկն չէի ուզեր ելլել, ու կը յիշեմ անգամ մը՝ երբ վերջին շտաբակաւոր դարձայ Միլանէն ու կառք շիգրաւներով տուն գալու, ստիպուեցայ Եւզինէտսին հիւր ըլլալու: Չէք կրնար երեւակայել

թէ ինչ մարդասէր ընդունելութիւն ըրին ինծի, և այն ինչ ուրախութիւն էր ամենուն: Իրեկունք սղտի ընթրիք մ'ըրինք. բայց տեսնայիք թէ ինչպէս մարութ էին սեղանին ճերմակեղէնքը, փայլուն պնակները, համեղ կերակուրները, կոկիկ ամէն բան: Իրաւի ուրախութիւն մ'էր տեսնել այս ամէնը, ու այն օրհնեալ տանն օղը ծծելը: Երեկոյեան ազօթքնիս ըրինք, առաւօտն ալ ուղեցին մէկ տեղ գալ մայր եկեղեցին ու հոն իմ պատարազս տեսնան: Այսպիսի մտազրութեան մը արժանի չէի:

— Այս աւելիին արժանի ես: Հրամանք չչտակեցիր Փրոնկիսկոսի ու Եւզինէոսի բախտը, ըսաւ Կարոլոս:

— Ես պատրաստ եմ օգնելու իմ ամէն ժողովրդեանս, ինչպէս օգնեցի այն երկու բարի երիտասարդաց: Հիմա որ Եւզինէոսի վրայ խօսեցանք, քիչ մ'ալ Մկրտչին վրայ խօսինք, որ ինք զինքը ձեռնարուեստի տուաւ:

— Այն օրհնեալ ձեռնարուեստք՝ որ այսպէս աժանցուցին մեր քթանն ու բամբակէ կտաւը, որով Հիմայ այնչափ քիչ կը վաստըկինք: Այս նորաձեւութիւնները վերջապէս ճիշտ 'ի վնաս ազքատաց եղան, կ'ըսէ Գրիգոր:

— Կ'անիրաւիս այդպէս խօսելովդ. այն մեծամեծ ձեռնարուեստներով չապիկ մը կ'արժէ իրեք ֆունք, ուր քու կտաւէդ թելի մը հաստութեամբ ալ ըլլայ, կրկինէն

աւելի կ'արժէ. այս պատճառաւ Հիմա չուխան առաջուան կէսը կ'արժէ, որով ազքատներն ալ կրնան գործածել, և ամէն կտաւ ու կերպաս որ մեքենայով կը շինուին՝ աժան են: Տեսէք քանիներ կ'ապրին այնչափ երկիրներու գործատուներն աչխատելով: Հագարուորք և բիւրաւորք: Ատենօք տղայ մը գպրոցէն ելլելով շատ տարիներ պիտի աշխատէր առանց սանդիմ մ'ալ վաստըկելու. Հիմայ ով որ կ'երթայ այն մեծամեծ գործարանները, կ'առնու մէկէն օրն 50 սանդիմ, պարգևներ և ճրի ուսումն: Գոհացէք Աստուծոյ որ թոյլ կուտայ մարդուս այսպիսի օգտակար գիւտեր գտնելու: — Ուրեմն Մկրտչը, Գամինիկոսի երրորդ որդին, նոյնպէս 13 տարեկան էր երբ Մոնցա վաճառականի մը քով մշտաւ, որ իրեն պայման դրաւ իրեք տարի մէյմէկ զոյգ կօշիկ, հագուստ մը և կերակուրը տալու, առանց ուրիշ վարձուց: Գուք ալ լաւ գիտէք որ այսպիսի տեղ գտնելը դժուար չէ, վասն զի թէ որ դուք ալ ձեր որդին խանութպանի մը քով աշկերտ դընէք, ապրուստէն դատ ուրիշ բան չէք պահանջեր, շատ շատ լաւ ծառայելուն համար տարին քանի մը հինգնոց ձեռածիր պիտի ունենայ:

— Այդպէս է, կ'ըսէ Կարոլոս. ես մէկն ունիմ քովս, որուն ամիսը հինգնոց մը կուտամ, ապրուստը ու զոյգ մըն ալ կօշիկ տարին:



— Դատ լաւ, երեք տարիէն ետև Մը-  
կրրախն 500 Փռանք վարձք ունեցաւ տա-  
րին. 17 տարեկան՝ 600 Փռանք, 18 տարե-  
կան՝ 700 Փռանք և 5 Հատ ալ 20 Փռանք  
նոց Մննդեան ձեռածիր. 19 տարեկան՝ 800  
Փռանք, Մննդեան նոյն ձեռածիրներով. 20  
տարեկան՝ 1000 Փռանք: Այնպէս քաջ էր  
եղեր արուեստին մէջ, որ գործարանին  
տեսուչը զինքը խրկեց ճամբորդութիւն  
մ'ընելիր համարուեստ գործարարաց քով,  
ամենայն ծախքն ու 500 Փռանք ալ պար-  
զև տալով: Իր բարի վարուքն առաջին  
գործակատարն եղաւ վաճառատան, և ու-  
րիշ շատ պաշտօններու ալ հասաւ: Տեսնէիր  
թէ ինչպէս ժիր էր, ճիշդ, գործօն ու յաջ-  
ղակ հաշուին, կտախ պատատները բանա-  
լու, ու շատ անգամ մանելու և հիւանելու  
գործերն ուղղելու որոնց մէջ ստուգիւ վար-  
պետ եղեր էր. և բոլոր յանձնարարութիւն-  
ներն ալ իր վրայ էին: Բաւական էր իր ներ-  
կայութիւնն ամէն բան կարգի դնելու,  
կատարեալ լուծիւն պահելու աշխատու-  
թեան ատեն և գործաւորաց բանելու ժա-  
մանակ: Ստուգիւ անգիւտ գոհար մըն էր:

— Միով բանիւ, Գոմինիկոսի արիւնն  
հրաշք գործեւլու սահմանեալ է, կ'ըսէ  
Գրիգոր:

— Նոյն է ամենեւին ձեր արիւնն ալ:  
Գուք ալ կրնաք գործել ինչ որ Փրանկիւս-  
կոս, Եւզինէոս ու Մկրտիչը գործեցին:  
Հիմա ալ լաւ մտիկ ըրէք. թոշակին կէսը

միայն կ'առնուր, մէկ քառորդը Միւսնի  
իննայութեան արկղը կը գնէր իր ձեռքովն  
երբ պէտք կ'ըլլար Միւսն երթալ գործոց  
պատճառաւ, կամ Մոնցայի իննայութեան  
արկղը կը գնէր, թողլով միւս քառորդը  
տերանցը ձեռքն, որոնք շահու կ'առնուին  
տալով 6 առ %: Եւ հիմայ որ 1500 Փռ.  
կ'առնու տարին, ո՞ գիտէ ինչ հարստու-  
թիւն ունի:

— Բայց ինչո՞ւ այսպէս առատ կը վճա-  
րեն տեարքը, կ'ըսէ Կարոյոս:

— Վասն զի անոնց կը վաստըկցունէ ո՞  
գիտէ քանի հարիւրաւոր 20 Փռանքնոց: Իր  
տեարքն այլ և այլ տեղ բամբակի գործարան  
ունին, և ինքը լաւ գործաւորներէն մէկն  
եղաւ: Դատ պաշտօնեայք փոխուեցան,  
ինքը միշտ իր տեղը մնաց: Դատ ծանր կու  
գար իրեն՝ տեսնել ընկերակցաց գործա-  
րանէն ելլալին չնչին պատճառաց հա-  
մար, ու իր մէկ խորհրդովն, որուն մտիկ  
բրաւ տէրն, գործաւորք ու զլխաւորք և  
տէրն հիմայ մէկ գերդաստան կը ձեւացը-  
նեն:

— Ներէ, հայր սուրբ, հրամանքդ այդ  
գեղեցիկ խօսակցութիւններով մեզի բա-  
նուր կը պատմես, որ անկարելի կ'երևան:

— Երբ պատմեմ թէ հրաշքն ինչպէս  
եղաւ, այն ատեն պիտի տեսնէք որ անկա-  
րելին միշտ կարելի եղեր է ու պիտի ըլլայ:  
Պատուելի վարժապետ, շնորհք կ'ընես հա-  
չիւ մ'ընել, որ քիչ մը դժուարին է:

— Բսէ, հայր սուրբ, հրամանքդ ալ գիտես որ միշտ իմ վարդապետս համարեր եմ զձեզ:

— Ուրեմն գրէ:

Մկրտչի վնչտասներորդ տարին:

- 1.<sup>0</sup> Կրամագլուխ. 500 Փռանքի թռչակին քառորդն իր ակրոջ քով թողած . . . . . Փռ. 125.—
- 2.<sup>0</sup> Կրամագլուխ. թռչակին քառորդը խնայութեան Արկղը դրած . . . . . » 125.—
- 3.<sup>0</sup> Կրամագլուխ. թռչակին կեսուն վրայ խնայելով՝ փոխանակ հազուասի ժողովրդական պանքային երկու բաժանորդութի գնեց 50ական Փռանք . . . . . » 100.—
- 4.<sup>0</sup> Կրամագլուխ. դործակցական ընկերութեան բաժանորդութիւն մը 20 Փռանք . . . . . » 20.—

Գումար Փռ. 370.—

Եօրեկտասներորդ տարի:

- Տիրոջն արկղն եղած աւանդին շահն 6 առ 0/0 . . . . . Փռ. 7.50
- Խնայութեան Արկղն եղած աւանդին շահը 4 առ 0/0 . . . . . » 5.—

Գումար Փռ. 382.50

- Նախընթաց գումար Փռ. 382.50
- Բաժանորդագին ժողովրդական պանքային 2 բաժանորդութեանց 9 առ 0/0 . . . . . » 9.—
- Գործակցական ընկերութեան բաժանորդութեան շահը 5 առ 0/0 . . . . . » 1.—
- 5.<sup>0</sup> Կրամագլուխ. թռչակին քառորդը ակրոջն արկղը թողուած . . . . . » 150.—
- 6.<sup>0</sup> Կրամագլուխ. միւս քառորդը խնայութեան Արկղը դրած . . . . . » 150.—
- 7.<sup>0</sup> Կրամագլուխ. ժողովրդական պանքային բաժանորդութիւն 100 Փռանք . . . . . » 100.—
- 8.<sup>0</sup> Կրամագլուխ. գին՝ տէրութի 5 Փռանք հասութի մը 60 առ 0/0 . . . . . » 60.—

Գումար Փռ. 852.50

Որեկտասներորդ տարի:

- Տիրոջն քովն եղած 282.50 Փռանք աւանդին շահը . . . . . Փռ. 16.95
- Խնայութեան Արկղն եղած 280 Փռանքին շահն . . . . . « 11.20
- Բաժանորդագին երկու բաժանորդութեանց 50 Փռանք բաժինը, 10 առ 0/0 . . . . . » 10.—
- Գործակցական ընկերութի բաժանորդութեանն 5 առ 0/0 շահն . . . . . » 1.—
- Ժողովրդական պանքային 100 Փռ.

Գումար Փռ. 891.65

Նախընթաց գումար Ֆու.	891.65
բաժանորդուժեան 6 առ 0/0	
շահք . . . . . »	6.—
Տէրուժեան 5 ֆուանդ հասուժի	
Թղթին շահն . . . . . »	5.—
9. <sup>o</sup> Գրամագրուխ. Թոշակին քա-	
սորդը ակրոջն արկղը . . . «	175.—
10. <sup>o</sup> Գրամագրուխ. Թոշակին միւս	
քաւորդը ինայուժեան Արկղը »	175.—
11. <sup>o</sup> Գրամագրուխ. տէրուժեան	
15 ֆուանդ, հասուժի Թուղթ	
65 առ 0/0 . . . . . »	195.—

Գումար Ֆու. 1447.65

Ինկենտասներորդ տարի:

Տիրոջը քոյն էղած 474.45 Ֆու.	
6 առ 0/0 շահն . . . . . Ֆու.	28.46
Խնայուժեք Արկղն էղած 466.20	
ֆուանդաց 4 առ 0/0 շահք . . . »	18.64
Գործակցական ընկերուժեան 20	
ֆուանդնոց բաժանորդուժեան	
շահք . . . . . »	1.—
Տէրուժեան հասուժի Թղթոց 5	
առ 0/0 շահն . . . . . »	20.—
Բաժանորդագին երկու բաժանոր-	
դուժեանց 50 ֆուանդ Ժողովը-	
դական պանդային 8 առ 0/0 . . . »	8.—
Բաժանորդագին 100 ֆուանդ բա-	
ժանորդուժեան 7 առ 0/0 . . . »	7.—

Գումար Ֆու. 1530.75

Նախընթաց գումար Ֆու.	1530.75
12. <sup>o</sup> Գրամագրուխ. Թոշակին քա-	
սորդը ակրոջն արկղը . . . . . »	200.—
13. <sup>o</sup> Գրամագրուխ. Թոշակին միւս	
քաւորդը ինայուժեան Արկղը »	200.—
14. <sup>o</sup> Գրամագրուխ. երկաթուղուց	
պարտաթուղթ մը (obligation)	
500 Ֆու., դնուած 250 ֆուանդի՝	
մտքուր ամէն ծախքէ . . . . . »	500.—

Գումար Ֆու. 2430.75

Քասներորդ տարի:

Տիրոջը քոյն էղած 702.91 Ֆու.	
աւանդին շահք . . . . . Ֆու.	42.17
Խնայուժեան Արկղը 684.84	
ֆուանդաց շահք . . . . . »	27.40
Գործակցական ընկերուժեան 20	
ֆու. բաժանորդուժեան շահք »	1.—
Տէրուժեան հասուժի Թղթոց 5	
առ 0/0 շահք . . . . . »	20.—
Երկաթուղուց պարտաթղթոյն տա-	
րեկան շահք . . . . . »	15.—
Ժողովրդական պանդային՝ 50 Ֆու.	
երկու բաժանորդուժեանց բա-	
ժանորդագին 8 առ 0/0 . . . . . »	8.—
Բաժանորդագին 100 ֆուանդ բա-	
ժանորդուժեան՝ 7 առ 0/0 . . . »	7.—

Գումար Ֆու. 2552.32

Նախընթաց գումար Ֆու.	2551.32
15. <sup>o</sup> Դրամագլուխ. թոշակին քա- սորդը տիրոջն արկղը . . . »	250.---
16. <sup>o</sup> Դրամագլուխ. թոշակին միւս քաւորդը խնայութեան Արկղը »	250.---
17. <sup>o</sup> Դրամագլուխ. 5 բաժանոր- դութիւնք դործակցական ընկե- րութեանց՝ 20 Ֆունք բաժինը »	100.---
18. <sup>o</sup> Դրամագլուխ. աւանգուած ապահովագրութեան ընկերու- թեան մը՝ 5 առ. 0/0 շահով . . . »	100.---

Գումար Ֆու. 3251.32

Քասեկերոյ առաջեկերոյ տարի:

Տիրոջը քովն եղած 995.08 Ֆունք աւանդին շահը . . . . Ֆու.	59.70
Խնայութեան Արկղն եղած 962.24 Ֆունքաց շահն . . . . »	38.48
Գործակցական ընկերութեանց 6 բաժանորդութեանց շահը . . . »	6.---
Տէրութեան հասուծի թղթոց շահը . . . . . »	20.---
Երկաթուղւոյ ընկերութեան պար- տաթղթոյն տարեկան շահը . . . »	15.---
Ապահովագրութեան ընկերութե քովն եղածին շահն . . . . »	5.---
Ժողովրդական սննդային 50 Ֆու.	

Գումար Ֆու. 3395.50

Նախընթաց գումար Ֆու.	3395.50
Երկու բաժանորդութեանց բա- ժանորդագրին՝ 9 առ. 0/0 . . . »	9.---
Բաժանորդագրին 100 Ֆունք բա- ժանորդութեան՝ 8 առ. 0/0 . . . »	8.---
19. <sup>o</sup> Դրամագլուխ. թոշակին քա- սորդը տիրոջն արկղը . . . . »	250.---
20. <sup>o</sup> Դրամագլուխ. թոշակին միւս քաւորդը խնայութեան Արկղը »	250.---
21. <sup>o</sup> Դրամագլուխ. քաղաքապե- տական պարտաթուղթ 500 Ֆու. տարեկան շահը 15 Ֆու. 300 Ֆունքով գնուած . . . »	500.---

Գումար Ֆու. 4412.50

Քասեկերոյ կրկերոյ տարի:

Տիրոջը քով Ֆու. 1304.78 աւան- դին շահն . . . . . Ֆու.	78.28
Խնայութեան Արկղն եղած Ֆու. 1250.72 աւանդին շահն . . . . »	50.02
Գործակցական ընկերութեանց 6 բաժանորդութեանց շահը . . . »	6.---
Տէրութեան հասուծի թղթոց շահը . . . . . »	20.---
Երկաթուղւոյ ընկերութեան պար- տաթղթոյն տարեկան շահը . . . »	15.---
Ապահովագրութեան ընկերու- թեան քովն աւանդածին շահն »	5.---

Գումար Ֆու. 4586.80

Նախընթաց դումար ֆռ.	4586.80	
Քաղաքապետական 500 ֆռ. պարտաթղթոյն չափն . . . . .	»	15.—
Ժողովրդական պանքային 50 ֆռ. երկու բաժանորդութեանց 9 առ 0/0 բաժանորդականն . . . . .	»	9.—
Բաժանորդագրին 100 ֆռ. բաժանորդութեան 8 առ 0/0 . . . . .	»	8.—
22. <sup>0</sup> Դրամագլուխ. թռչակին քաւորքը տիրոջն արկը . . . . .	»	375.—
23. <sup>0</sup> Դրամագլուխ. թռչակին միւս քաւորքը խնայութեան Արկին . . . . .	»	375.—
24. <sup>0</sup> Դրամագլուխ. փոխ արուած իր գործատան բարեկամի մը նոյն ընկերութեան 5 առ 0/0 երկու բաժանորդութեան գնելու համար . . . . .	»	200 —

Մկրտին իր քսանուերկու տարուան հասակին մէջ դրամագլուխ մ'ունէր . . . . . ֆռ. 5568.80

— Կը տեսնէք թէ ինչ վաստակ ըրած է Մկրտիչը քիչ տարուան մէջ, կը յաւելու ժողովրդապետը:

— Հրաչք, հրաչք, կ'աղաղակէ Գրիգոր: Ար պատանին 22 տարուան հասակին վաստակած կ'ըլլայ ֆռ. 5568.80:

— Հրաչք, այո, հրաչք գործեց. ինքն ուղեց գործել այս հրաչքն իր խելացի, ան-

դուլ աշխատանքովը և իր աղէկ յատկութիւններովն: Եւ ասոր համար ուղեցին իր տեարքը անոր ունեցածին հաշիւը տեսնել և ըսին որ կրնար տրամադրութիւն ընել իր ստակին վրայ, բայց թէ որ կ'ուզէր թողուլ զայն իրենց քով, կանոնաւոր անդորրագիր մը կու տան իրեն, տարին սովորական 6 առ 0/0 հատուցանելով, և իրենց քով թողած դրամագլխոյն համեմատ զինքն ընկերութեան մէջ կ'առնեն, չարունակ տալով անոր սոսկին երեք քաւորքը ֆռ. 1125 իր գործածութեանն համար, որ է ըսել ինքն ալ մանելու գործարանին տէրերէն մէկը կ'ըլլար, նոյն ընկերութեան քովը քսանուիրեք տարեկան հասակին ունենալով ֆռ. 1758.06:

— Ո՞րչափ հեռաքրքրական է այս եղբարց պատմութիւնը: Բացատրէ մեզի քիչ մը թէ ինչ է տէրութեան հասոյթ բուռածն, երկաթուղեաց, քաղաքապետական պարտաթղթերը, կ'ըսէ Կարոյն:

— Քոյր այդ թղթոց ցնցոտիները գնելու համար տրուած ստակը կորսուած ստակ է, խօսքը կտրեց Գրիգոր:

— Ամէն բանէ առաջ պիտի գիտնայք որ տէրութեան տրուած փոխն աւելիապահով է քան թէ մասնաւորաց տրուելու ըլլայ նէ: Եթէ տէրութիւն մը 20 միլիոն ընակիչ ունի, փոխ տալը առ տէրութիւնն այնպէս է որպէս թէ բոլոր 20 միլիոն ժողովուրդը երաշխաւոր ըլլար փոխ տրուած

ստակին. ընդ հակառակն՝ եթէ սոսկական մէկն է փոխառուն, երբ անիկայ կորսուի կամ սնանկանայ, ձեր ստակն ալ կը կորսուի: Երբ քաղաքապետութեան փոխարուի, կորսընցըներու համար պէտք է որ երկրաչարժ մը տակնուվրայ ընէ փոխառութեան քաղաքը. քաղաքապետութիւնը մշտընջեւնուոր է և տեական գրեթէ աւելի քան տէրութիւն մը: Եթէ երկաթուղւոյ փոխառ ալ ուզէք, որ ձեզի 500 Փռանքի մուրհակ մը կու տայ պարտաւորակ կոչուած (obligation), 15 Փռանք տարեկան շահով, գրաւ առած կ'ըլլաք նոյն երկաթուղին, և ազաւոր էք որ շուտ կամ ուշ փոխանակ 500 Փռանքի 500 Փռանք պիտի առնուք: Իսկ գնելով այն պարտաթղթերն, որ Գրիգոր անպէտ կը կոչէ ու կրակ նետուելիք, մեծ բարիք մը կ'ընէք ձեր քաղքին, ձեր կառավարութեանը, երկաթուղւոյն, որ կ'ընտանեցնէ իրարու զիրս և զանձինս, տանելով զանոնք հոն՝ ուր պէտք կայ երթալուն: Ասոնք բացատրեն ինձի չէր իյնար, մեր գիւղապետին կը վերաբերի ստանց վրայ խօսիլը, և կամ վարժապետաց ընկերութեան մասնաժողոյն: Սակայն ձեր բարւոյն համար կը խօսիմ այնպիսի բաներու վրայ ալ որ ինձի չեն իյնար:

— Ծնորհակալ ենք, գերբարգելի, միաբերան կ'ըսեն ամենքը. ներեցէք խօսքդ ընդհատելուս համար:

— Մանաւանդ կ'ախորժիմ, վասն զի

սորվելու փառաքնիդ կը տեսնեմ: Հիմայ կարեւոր բանի մը վրայ պիտի խօսիմ, որ մեծ պատիւ կ'ընէ Մկրտչին:

— Որ հիմա տէր եղած է, կը յաւելու Գրիգոր:

— ձիւդ խօսելիք խնդրոյս վրայ ընրիդ գիտ: Մկրտիչ յանձն չառաւ միայն ինքն ըլլալ մանելու գործարանին տէրերէն մէկն ալ. շատ կը սիրէր իր ընկերակիցները, և կ'ուզէր մասնակցել զանոնք ալ իր բազմին. գործակցական ընկերութեանց և ժողովրդական պանքաներուն ժողովքներն յաճախելով սխտեր էր մտածել այս ընկերութեանց վրայ, և մտքին մէջ գտաւ կերպը իր գործատան մէջ ալ գործակցական ընկերութիւն մը հաստատելու, և այնպէս յարմարցընել որ նոյն ընկերութեան մէջ կարող ըլլան մանել նաև գործաւորք, ինքը և մանելու գործարանին տէրերը:

— Ինչ է այս գործակցական ընկերութիւնն, որուն տէրերն ու գործաւորներն անգամ կ'ըլլան, կ'ըսէ Գրիգոր:

Պիտի հասկընաք հետզհետէ տալու օրինակներովս: Գործակցել ըսել է ընկերութեամբ գործել, կ'ըսէ ժողովրդապետը, միաբան գործել. գալով Մկրտչին ու իր տէրանցը որ գործաւորաց հետ ընկերութեան կը մանեն ըսել է թէ ոմանք կ'աշխատին ու կը բանին իրենց բազիօքն ու մտօքը. տէրերը կ'աշխատին իրենց գրամազլիտովն որ են մեքենաները, գրամա որով

կարևոր բաները կը գնուին, թողակները կը հատուցուին, և իրենց ճարպկութեամբը: Ուրեմն ամէնքն ալ ունեցածներնէն մէյմէկ բան կը հանգանակին, և ետքէն կը բաժնեն վաստակն ըստ համեմատութեան ընկերութեան մէջ դրածնուն: Մկրտիչ ոչ սակաւ աշխատութեամբ հասկըցուց տեսարց որ եթէ ընդունելու ըլլան իր խորհուրդն, ինքն իրենց հետ միշտ կը մնար, և ամենայն յոյս ունէր առաջինէն աւելի օգտակար ըլլալու անոնց:

— Ո՛հ, այնպիսի բաներ կ'ըսէք որ զմեզ կը զարմացունէ, վրայ բերաւ կարողոս:

— Վերջապէս տէրերն ընդաւորացն հետ, դամակից ըլլալ իրենց գործաւորացն հետ, այսու պայմանաւ որ ցուցակ մը կազմուի շինուածոց, մեքենայից, մանուած ու մանկի բամբակին և բոլոր այն ամէն բանի որ մանելու գործարանին տեսարցը կը վերաբերէին, որոնց ամենուն արժէքն ելաւ գրեթէ 400,000 Ֆռանք: Բաժնեցիկն ոչս 400,000 Ֆռանքը այսչափ հաւասար մասունք, իւրաքանչիւրն 100ական Ֆռանք, որով կ'ընեն...

— Չորս հազար մասունք, ու Մկրտիչն իր 1758.06 Ֆռանքովը կ'ունենար տասներեօթը մասունք:

— Որոնք տասներութն եզան, վասն զի շուտով մնացորդն հատոյց 100 Ֆռ. լրացընելու համար կամ Ֆռանք....

— Յռանք 41.94, վրայ բերաւ կարողոս:

— Բայց ինչպէս գործաւորք կարող պիտի ըլլան խնայելու 100 Ֆռանք, որպէս զի մաս մը ունենան, կ'ըսէ Գրիգոր:

— Չոր ես, կ'ըսէ ժողովրդապետը, քաժակորդարիւն կը կոչեմ, որ կարողութիւն մըն է և դրական գորութիւն: Ըսեմ հիմայ թէ ինչպէս Եւզինէտի ընկերակից գործաւորք կարող պիտի ըլլան ստանալու այն բաժանորդութիւնները:

Մկրտչին առաջարկուած ու տերանցը և գործաւորաց ընդունելի եղած խորհուրդը, որ զրի առնուեցաւ, վրան խօսուեցաւ, և սահմանադրութիւն կ'ըսուի, կամ օրէնք իրենց ընկերութեան, այն է որ գործաւորք տարուէ տարի իրենց տարեկան թողակին համեմատ ընդունին մաս մը այն շահէն որ կը մնայ զուտ յետ հատուցանելու ամէն ծախք, և մաս մըն ալ 5 առ 0/0 շահուց 4000 բաժանորդութեանց: Ենթադրենք, կ'ըսէ ժողովրդապետը, որ տարւոյն վերջը գործարանին զուտ վաստակն ըլլայ 40,000 Ֆռանք: Ո՛րչափ կ'իյնայ առ իւրաքանչիւր բաժանորդութիւն 100 Ֆռանքաց:

— Չեմ կրնար հաշիւն ընել, կ'ըսէ վարժապետն, ինչուան որ կարևոր պայմանները չգիտնամ:

— Պայմաններն ստոնք են, կ'ըսէ ժողովրդապետն: Իւրաքանչիւր բաժանորդութեան 5 Ֆռանք շահ տանք, կամ 5 առ 0/0:

— Այն առնն Մկրտիչն իր 18 բաժա-

նորդութեանց շահ կ'առնուր 90 ֆուանք, 5 առ 0/0, մինչդեռ 108 կ'առնէր, կ'ըսէ Գրիգոր, եթէ առջուան պէս շարունակէին դործերը:

— Մէջերնին հաստատուած է որ վաստակին մնացորդն, ինչպէս մեր դէպքին մէջ 40,000 ֆու. է, ճիշդ հաւասարապէս բաժնուի չորս հազար բաժանորդութեանց տէրերուն ու գործաւորաց վրայ: Ուրեմն տէրերն ուրիշ 20 հազար ֆուանք ալ պիտի բաժնեն մէջերնին, որ է 5 առ 0/0 նոր շահ:

— Ո՛հ, այն ատեն մեր Մկրտիչն ալ փոխանակ 90 ֆուանքաց, պիտի առնէ միայն իր բաժանորդութեանցն համար 180 ֆու.:

— Ահաւասիկ իր 1500 ֆուանք թոշակն, յաւելեալ 5 առ 0/0 շահով 18 բաժանորդութեանց, կ'աճի ու կ'ըլլայ ֆուանք 1680: Բայց այս բաւական չէ, վասն զի ինքը միանգամայն գործաւոր մըն է, որ 1500 ֆուանք տարին թոշակ ունի: Գիտնալու է որ գործարանը 200 հոգի կ'աշխատին, ատուչն ալ մէկանդ սեպտեմբր, որ տարին 3000 ֆուանք թոշակ ունի, ինչպէս նաև քսան բաժանորդութիւն:

Այս 200 գործաւորաց թոշակները, միջին հաշուով 2 ֆուանք աւուրչէք սեպտեմբ մարդ գլուխ, տարին 565 օր ըլլալով կ'ընէ ֆու. 146,000. որ է ըսել թէ բաժնեւորով 20,000 ֆուանքը, որ ըստ սահմանադրութեան, գործաւորաց կը պատկանի, համեմատութեամբ թոշակաց, մաս մըն ալ կ'առ-

նուն՝ որ 15.70 առ 0/0 կը համապատասխանէ: Ուստի Մկրտիչը բաց 'ի 1680 ֆուանքէն, կ'առնենայ նաև 204.50 ֆուանք ալ, կամ 1884.50 ֆուանք տարին, կ'ըսէ Կարոյ. և տղայ մը որ 200 ֆուանք միայն վաստակի, տարւոյն վերջը 27.40 ֆուանքի ալ պահանջ կ'ունենայ, և գործաւոր մը որ տարին 800 ֆուանք կը վաստակի, որ կ'ընէ 15.58 ֆուանք շաբաթը, կամ 2 ֆուանքէն քանի մը սանդիմ աւելի օրը, պիտի ունենայ աւելի ֆու. 109.60. գործաւոր մը որ 900 ֆուանք տարեկան ունի, պիտի առնու աւելի 125.30 ֆու. գործաւոր մը որ 1000 ֆու. տարեկան ունի, պիտի առնու աւելի 157 ֆուանք և այսպէս շարունակաբար:

— Մեր Կարոյուն երևելի ուսուցիչ մ'է վաճառականական գիտութեան, կ'ըսէ ժողովրդապետը: Բայց ասիկայ ամէնը չէ: Սահմանադրութեան մէջ այս ալ կայ որ գործաւորը պարտական են ընկերութեան մէջ թողլու իրենց բոլոր աւելին կամ ձեռածիրնին երեք տարի, որ տարւոյն վերջը կամ տարին երկու անգամ եղած հաշիւներէն կ'իմացուին: Այս կերպով սիրելիք իմ, կը հասկընաք որ տարին 800 ֆուանք վաստակող գործաւորն, որ օրն 2 ֆուանք և բան մ'ալ աւելի կու գայ, երեք տարուան մէջ կ'ունենայ 5 բաժանորդութիւն կամ.:

— Ֆուանք 528.80 և տղայ մը որ հազիւ 200 ֆուանք կը վաստակի տարին, գրեթէ



բաժանորդութիւն մը կ'ունենայ, որ կրնայ հետեւեալ տարին դիւրաւ լրացնել, կ'ըսէ Կարոլոս:

— Երեք տարի վերջը գործաւորք ըստ քանի մը կանոնաց ու իրենց պիտոյցին համեմատ կրնան հանել ընկերութեան Արկղէն բաժանորդութեանց աւելին, որոշուած ըլլալով թէ ո՛վ որ բոլոր գրամագլուխն հանէ, բաց 'ի աղքատութեան պարագային մէջ, կ'արտաքսուի ընկերութենէ և աշխատանքէն ալ:

— Բայց թէ որ տեարց խելքը փչէ հանելու իրենց գրամագլուխն, ինչ ձիւն չգար գործաւորաց զխումն, կ'ըսէ մէկը:

— Սահմանադրութեան մէջ որոշուած է որ հին տեարք չկրնան հանել իրենց բաժանորդութիւնները եթէ ոչ ըստ չափու աճման գործաւորաց մասանցն. այնպէս որ եթէ կարելի ըլլար գործաւորաց իրենց խնայողութեամբն ստանալ բոլոր բաժանորդութիւնները՝ բնականապէս տէր կ'ըլլային այն գործաւորութեանն, ու Մկրտչիչը աննման վերակեցու մը կ'ըլլար: Բայց ուրովհետեւ հիմա գործաւորք շատ կը սիրեն իրենց հին տեարքն, որ և իցէ դէպքի մէջ ալ միշտ երախտագէտ պիտի ըլլան անոնց ու երջանիկ կը համարին իրենք զիրենք եւ թէ ուզեն տէրերնին իրենց ընկերութեանը մէջ մնալ:

— Արդար է, կ'աղաղակեն ամէնքն ալ:

— Ո՛ր և իցէ կերպով սահմանուած է որ

հին տեարք իրաւունք ունենան, միայն թէ կամովին չհրաժարին, երբ գործաւորք առանց անոնց գրամագլխոյն կարենան գործ տեսնել, բաժանորդութեանց կէսն իրենք առնելու, կամ 2000 բաժանորդութիւնք: Կը հասկընաք թէ ինչ օգուաներ չքաղուիր այս ընկերութենէն, զոր կրնանք գործակցական մասնակցութիւն կոչել:

— Բարեկամութիւն 'ի մէջ գործաւորաց և տեարց, կը յաւելու Կարոլոս, 'ի մէջ որոց ստակունին և որոց կ'աշխատին: Գուհութիւն ամէն գործարաններու մէջ ուր 'ի գործ կը դրուի Եւզինէոսի խորհուրդն:

— Եթէ երբ ձեր սունն էք, երբ դաշտաց մէջ գտնուիք՝ ըսածներուս վրայ մտածէք, կը տեսնէք որ Մկրտչի գիւտն Աստուծմէ սուն տրուած է, որ ամէն մարդիկ կը սիրէ, ճոխ և աղքատ. և այս գիւտն արդէն գործադրեց Փրանկիտիոս, որ բանին վրայ խօսք մը միայն ըսեր եմ, մնացորդը ուրիշ խօսակցութեան մը թողլով: Ուստի ըմբռնենք պատմութիւննիս:

— Եթէ յոգնած ես, կ'ըսէ Կարոլոս, կրնանք այն շարունակութիւնն ուրիշ իրիկունան թողուլ:

— Կ'ուզեմ սկսած պատմութիւնս ըմբռնել, կ'ըսէ ժողովրդապետը: Մկրտչին խորհուրդ տուին իր հին տեարքն որ աճուսանայ, զոր կատարեց: Գիտէք զո՞վ ընտրեց. իր գործատան ժրագոյն աղջիկն, որ օրն երկու ֆռանք կը վաստըկէր:

Արևար հանել զինքը գործարանէն, բայց ազաչեցին որ դեռ թողու հոն, որ վերահեցու եղաւ մանողաց ու հանդերձապետ: Արովհետեւ առաջ իր թոշակովը կ'ապրէր, անոր համար իրեն կապեցին օրը Փռանք ու կէս, տալով նաև ամբողջ ապրուստը, բնակելով ամուսնոյն հետ գործարանին մէջ: Մկրտիչը կրցաւ իրեն բնակարանը պատրաստել առանց դաշեղու ընկերութեան գրուած ստակին, կերակուրն ուտելով տեարցն հետ երբ գործարանը կը դանուէին, որոնք բաժանորդութեանց մեծ մասն իրենք ունէին: Եթէ զիսնայիք որչափ բարիք ըրած է այս բարի գործաւորն իր ընկերակցացը, սորվեցընելով անոնց արուեստի ճշգութիւն, ինայութիւն ժամանակի, ուտելու, հագուելու, և կիրակի պատարագէն վերջն երթալով անոնց հետ գործարանին գալորոցն, ուր օգնական էր վարժապետին, նաև մէկտեղ պարտելով երբ անոնց զխաւոր եղաւ, երբ վերակնցուն գնաց՝ չլիչելով այն անբաւ օգուտն որ ըրեր էր անոնց, կերպով մը պարզ գործաւորաց վիճակէն բարձրացնելով զանոնք գրամատէր գործաւորներու, միով բանիւ անկախութեան վիճակն հանելով զիրենք: Անոնց հայրն էր, եղբայրը, վաստաբանը, ուսուցիչը: Ար յարգէին զինքն ամենէն աւելի. շատ արդար և ճիշդ էր:

Ննջարանները կոկ ու հովահար, խոհակերտը մաքուր, ամենուն հագուստը ան-

մաշ, և ըստ կարելոյն մաքուր: Մարդ հաճոյք կը զգար այս ամէն բան տեսնելով: Իսկ իրմով բոլոր գործարանին մէջ տիրած կարգը, թէ սննեկաց մէջ և թէ աշխատանաց բաժանման մէջ, ամէն այցելուաց գովեստին արժանի էր:

— Գոմինիկոսի այս օրհնեալ որդիքն, իրաւացունէ ճշմարիտ բարերարը են կ'ըսեն ոմանք:

— Անշուշտ, վրայ կը բերէ ժողովրդապետը: Երբ զանդակին ձայնը կը լսուէր, գործարան պատկողները սոք կ'ելլային, և հեռաբնակք ալ գուռը պատրաստ էին, և թիչ անգամ կ'ըլլար որ վերջին գործաւորը ներս չեկած գուռը գոցուեր. վասն զի ամէն առաւօտ սահմանեալ ժամէն Ծ վայրկեան վերջն սով որ գործարան չէր գըտնուեր, նոյն օրը չէր ընդունուեր և օրականը կը կորսընցունէր: Վերջապէս այն գործարանը ամէն յաջողութեամբ առաջ կ'երթար. գործուածքն ու կերպարն ազնիւ, վաստակը մեծ՝ ի զարմանս ամենուն: Ինչուան հիմայ իմացաք Գոմինիկոսի առաջին իրեք որդուցը պատմութիւնը: Ար մնայ միայն չորրորդինն, այսինքն Անդրէասին պատմութիւնն: Անշուշտ յոգնած կ'ըլլաք, վասն զի այնպիսի բաներու վրայ խօսեցայ որ ձեզի ընտանի չէին. հրաման է չհասկըցածնիդ հարցընելու:

— Ա'ախորժէի զիտնալ, կ'ըսէ Գրիգոր, թէ ինչ բարիք կը բերեն երկաթուղիք, ո-

րոնց չենք ալ կրնար մօտենալ, վասն զի ոտքով կը քալենք. մեզի համար երբօրդ տեղին անգամ սուղ է:

— Իսկ ես կ'ախորժէի զիտնալ թէ ինչպէս Գոմինիկոս փոխեց վարքը, կ'ըսէ զիւղին վարժապետն, և այնպէս բարի մէկն եղած է:

— Ես աւելի հետաքրքիր եմ քանի մ'ալ բան լսել Փրանկիսկոսի բարեգործութեանց վրայ, որ զնեց այն ազարակն՝ որուն վրայ գրաւ իր որդին ուրիշներու հետ մէկտեղ աշխատելու աւելի օգտակար կերպով թէ՛ Փրանկիսկոսի և թէ՛ զիւղակցացն համար:

— Սիրելի ժողովուրդ, շատ աղէկ կ'ընէք խոստամունքս միտք ձգել. հիմա ձեր եմ և միտքս օր ըստ օրէ կը տկարանայ: Այս զիշեր և վաղը օրն ամբողջ ասոր վրայ մտածեմ, և վաղը իրիկուն ըստ ամենայնի կրնամ լեցնել ձեր փափաքը և պիտի խօսիմ նաև երկաթուղեաց վրայ, թէպէտ և ինձի համար քիչ մը դժուարին խնդիր ըլլայ, և մեզի իրենց սղութեամբ միայն փափագանաց ատարկայ են, և գեղացիք շատ չեն կրնար գործածել, վասն զի գեռ առաջուան պէս ոտքով կը քալեն, շատ չեն հեռանար իրենց երկրէն, բնական ազգամայր գոգցես գիտնալով որ այս է մեր կեանքը, և շիտակն ըսեմ, ես զՓրանկիսկոսն ամենէն աւելի կը սիրեմ, վասն զի պատուականազոյն արուեստի մը ետև է, որ մեր պապերուն քան զամէնն աւելի սիրելի էր, ա-

ւելի պարզ, որ առողջութիւնն ու բարուց մտքութիւնը լաւ կը պահէ, և մեծ բարիք կ'ընէ հայրենեաց: Բայց ամէն արուեստը ալ սրբազան են, վասն զի կարևոր են, և չկայ երկրագործութիւն առանց ճարտարութեան ու առանց վաճառականութեան: Ո՛վ պիտի մանկ ու պիտի գործէ ձեր մետաքսներն, երբ ժողոված էք խողակները: Երբ այն մետաքսները գեղեցիկ զիպակք եղած են, աղէկ ծալուած, և հակ հակ եղած, ո՛վ պիտի տանի դանոնք վաճառատեղիները, խանութներն, որպէս զի ծախուին, գնուին գերձակներէն, ուրիշներէն՝ հազուատ, օթոց, եկեղեցւոյ սպաս պատրասելու համար, եթէ ոչ վաճառականք: Ուրեմն յարգենք ու սիրենք ամէն աստիճանի աշխատատեղիները, թէ՛ ձեռնարուեստը ու վաճառականք, ամէնքն ալ եղբայր են: Ի՛նչ որ մետաքսի վրայ ըսի, կրնամ կրկնել բրդի, կտաւի, ցորենի, զինուոյ, երկաթի ու ամէն բանի վրայ ալ, զոր մարդ կը գործածէ իր ստոյգ կամ ենթադրեալ պիտոյքը լեցնելու համար, և զոր կամ ճարտարութեան արդիւնքովը կամ աշխատանօք ձեռք պիտի բերէ: Նիւթն յառաջ քան գործածուիլն զմեզ սնուցանելու, հազուեցունելու, զարգարելու մեր տները, և որ և իցէ մեր պէտքը լեցունելու, հարկ է նախ որ արտադրեն զայն կամ երկիրս, կամ հանրերը, կամ անտառները, և կամ երկրագործները. ետքն ալ պէտք է տեսալ

տեսակ կերպով պատրաստուի, կոկուի ճարտարաց ձեռքով, զոր մենք ձեռագէտք կը կոչենք. միով բանիւ գնուի, փոխադրուի, ծախուի վաճառականներէն, շատ կամ քիչ քանակութեամբ, գործակցաբար կամ անհատօրէն:

— Շատ լաւ, հայր սուրբ, կ'ըսէ վարժապետը: Արջափ բաներ սովորեցուցիր մեզի մեր բարեոյն համար, ես ուսեալ ըլլալովս չէի գիտեր, և թերևս յաւիտեան պիտի չգիտնայինք եթէ հրամանքդ չըլլայիր:

— Բարի է, կ'ազատեմ որ ստէպ յիշես խօսքերս, գրես յիշատակարանիդ մէջ, և երբեմն երբեմն տաշկերտացի պատմես, երբ քաջ են և խելօք. խառնելով այս գաղափարներս ուրիշ գուարճալի գէպերու հետ, մասնաւորապէս մեր սիրելի հայրենեաց պատմութենէն քաղելով:

— Ազատե՛՛մ եզիր որ տուած խորհուրդը պիտի կատարեմ:

— Առ այժմ գնացէք ձեր տուները, առնելով հետերնիդ խնայութեան արկեղ, ժողովրդական պանքային, գործակցական ընկերութեան ատարները, ինչպէս նաև քաղաքապետութեան, տէրութեան, երկաթուղւոյ և նախաձող ապահովագրութեան պարտաթղթերը: Ասկէ հինգ տարիէն կրնաք վստաբերիւ ըլլալ ձեր աղէկ գործածած պղտիկ խնայողութիւններով, ինչպէս սորվեցուցի, իւրաքանչիւրնիդ աղէկ գումար մը. ես այն ատեն մեռած կ'ըլլամ:

յիշեցէք ձեր հողերը հայրն, որ հիմա հրաշք կ'ընէր եթէ տեսնէր զձեզ բարի, ճարտար ու բարեկեաց, որպէս զի հանգիստ ապրիք առանց նեղութեան և կարող ըլլաք դէմն առնուլ վնասուցն որ կրնան հանդիպիլ ինչպէս ստէպ երկրադործաց կը հանդիպին. կարկուտ, երաշտութիւն, չափէ գուրս անձրև որ կ'ապականէ գաշտերը ու ցանքը կը փտեցունէ, կրի հիւանդութիւն, խաղողւոյ հիւանդութիւն. և այսպիսի դժբախտութիւններն որ Աստուած կը խրկէ մեր մեղացն համար է, և կամ մտքերնիս այն աշխարհքն ուզելու՝ որ կը սկսի մեր մահուամբն: Այն ատեն յիշեցէք զիս, և ազօթեցէք խեղճ հողւոյս համար, որպէս զի կարող ըլլայ շուտ մը լիովին վայելել Աստուծոյ յաւիտեանական, անպատմելի և քաղցր տեսութիւնն, եթէ բախտ ունենամ իր շնորհաց մէջ մեռնիլ: Ուստի կը պատուիրեմ սիրել մէկզմէկ, օգնել իրարու՝ հարազատ եղբոր պէս ինչպէս են ամէն մարդիկ:

— Մի խօսիր այդպէս, մեր լացը կը շարժես. զեռ շատ տարիներ պիտի ապրիս: Մեր հայրն ես, մեր ամենուն հայրն ես, մեր սիրելի հողերը տէրք:

— Գիտեմ որ զիս կը սիրէք: Ես ալ զձեզ կը սիրեմ, և շատ կը սիրեմ: Գնացէք բարեալ, սիրելիք. ձեր եմ:

— Մնացէք բարեալ, ուրախ եղիք, հայր սուրբ:

Փերեզակ .

Իրիկունը կը հասնի և բարի ժողովրդապետը բոլոր օրը աշխատեր էր իր ժողովրդեան բարիք ընելու համար . մտածեր էր երեկոյեան ընելիք խօսակցութեան վրայ, և գրի առեր էր քանի մը խօսք որ կարգաց անոնց : Դոմինիկոսի որդւոցը պատմութիւնը բննալէն ետև, արևը մանալէն վերջը ժամ մը անցեր էր և ժողովրդապետին սրահը լի էր մարդկամբք :

— Աստուած օրհնէ, սիրելի որդիքս :

— Ծառայ ենք, հայր սուրբ, տես թէ ինչպէս պատրաստ ենք, կ'ըսէ Կարոլոս : Կ'ուզէր հետս գալ նաև իմ հարսս, Փրանկիսկոսի աղջիկը, հրամանքիդ գեղեցիկ խօսքերը լսելու համար :

— Մեր կանայքն ալ կ'ուզէին լսել մեր սիրելի ժողովրդապետին ձայնը, կ'ըսեն ամենքը :

— Շնորհակալ եղիք անոնց իմ կողմանէս, և ըսէք որ կանայք իրիկունները տուն պէտք են կենալ, ըստ միտք զնեն իրենց գործոցը, մարտը պահեն ճերմակեղէնները, անօթները, սենեակներուն կահ կարասիքը, ըստ կրթեն զաւակին, զորոնք վայրկեան մ'ալ պէտք չէ թողուն, որպէս զի առողջութիւննին չաւրեն, կրակ, ջուր չկնան, երբէք պարսպ չկնան. տղայք պէտք է կամ խաղան կամ ուտեն կամ աշխատին կամ քնանան: Ըսէք իրենց որ տուններնուն մէջ թագուհի են, և էրիկ մարդիկ ալ են թագաւորը, թէ մշակած արտին մէջ, թէ խանութը և թէ գործարանները ուր կ'աշխատին:

— Իրաւ է, կ'ըսեն շատերը:

— Շուտ մը սկսինք Անդրէասին պատմութիւնը: Չկան պէս աշխոյժ պատանի մ'էր, որ գիտէր աղէկ կարգալ, աղէկ գրել, և հաշիւ ընել: Ախր խնտաք երբ մտքերնիդ բերէք այն պատանին՝ կոնակը սնտուկիկ մը, որուն մէջ կը գտնուէին ժապաւէններ, բամբակէ, բրդէ և մետաքսէ երկընէր, փոսիորք, հայլիներ, և ուրիշ շատ մը առարկայք, որոնք ընդ ամենը 20 ֆուանք չեն արժեր, կ'իւ մըն ալ կախած սնտուկէն: Կը պտըտէր ճամբաները, գեղերը, գեղեցիկ, յստակ և տղայական ճայնով մը կանչելով. « Կանայք՝ ահաւասիկ է փերեղակն »: Ինքն ալ այս արուեստը 13 տարուան սկսաւ, վասն զի ժողովրդական

ուսմանց ընթացքը կատարեր էր, ինչպէս օրէնք կը սրատուիրէին հասարակաց բարոյն համար: Կանայք երբ կը ըսէին այս գեղեցիկ ճայնը և կը տեսնային այս զուարթ պատանեակը՝ աներնէն, և գոմերէն զուրս կ'ելլային և կը գնէին մէկը ասեղներու ծրար մը, մէկը մատնոց մը, միւսը չորս գրիչ և պղտիկ տետրակ մը, մէկը չորս կանգուն բրդէ երկը, միւսը մետաքսէ, ուրիշը հայլի մը և միւս մը ուրիշ մանր մունր բաներ: Էրիկ մարդիկ ալ կը գնէին, ինչպէս փոսիոր, կաւիճէ ծխաբարը և ուրիշ նիւթեր: Իսկ Անդրէասն իսկզբան քիչ մը կ'ամչնար, վերջը խրախուսուելով, իր վաճառքը կը ցուցնէր չնորհրով, հանելով և նորէն արկղիկը գնելով զանոնք, այնպէս որ չարտին, չաղտոտին, և միշտ նոր կերեային տեսնողին աչքին: Առջի գեղին մէջ սիրտ չընէր ըսելու թէ այն կ'ելուք ինչ բանի պիտի ծառայէ: Այն առջի գեղը թողլով, ուր իր վաճառուց մեծ քանակութիւն մը սփռեր էր, կը սկսի մտածել և ըսել ինքն իրեն. « Ինչո՞ւ պիտի ամբնամ նաև ուղեւ այն վաճառքն որ մէկէն կրնամ վճարել. բայց կը զղուխմ այն առարկայից մէ...: Չեմ կրնար արգեօք զանոնք մարտը օգտով տեղ մը գնել, և զարձեալ չեմ կրնար զանոնք միայն գնել որոնք ինձի հաճոյ են: Միայն ճերմակները կը գնեմ, խօսիմ. իմ արուեստս է. պիտի ամչնամ արուեստս ընելէն և հացս ճարելէն »:

— Բայց ինքը ինչ պիտի գնէր, ինչ էր ամօթը. իշխանի մը զաւանկ էր որ կը վախ- նար չըլլայ թէ ձեռուըները աղտոտին, կ'ը- սեն ունանք :

— Թողուցէք որ խօսքս առաջ տանիմ, կը յաւելու ժողովրդապետը : Երբ եր- կրորդ գեղը հասաւ, միտքը գրաւ կռուելու առարկայէն ալ բնտռէ. նորէն կ'աղաղա- կէր. « Կանայք, ահաւաստիկ է փերեզակը » : Սակայն հոն ալ նոյնը կը հանդիպի ինչ որ առաջ հանդիպեր էր : Կը ինքը բան մը չըսէր կշիռքին համար. մինչև որ կին մը իրեն կը հարցունէ թէ ինչ կը կռէր այն կշիռքով- ամօթէն կրակի պէս կը կարմրնայ : Աինը խեղճ Անդրէասին այլայիլը տեսնելով վրայ կու տայ. ինքն ալ սաստիկ ամօթէն կակա- ղելով կ'ըսէ, որ անով ճերմակ ցնցոտիները կը կռէր, զորոնք ասդիէն անդիէն պիտի գնէր : « Ասոր համար այնչափ կ'արժէր ամէնալ, խեղճ տղայ կ'ըսէ կինը : Կեցիր, ես հիմա շուտ մը կ'երթամ կը բերեմ քեզի անոնցմէ, որոնք մաքուր ալ են, գիտցած ըլլաս, մի վախնար » :

Եւ իրաւցընէ կը սկսի առջի օրը տուն տանիլ կէս պարկ ցնցոտի և չորս ֆռանք ալ ստակ : Երկու պատուհանով սենեկի մը մէջ կը դնէ գանձը, և գիշեր ցորեկ կէս բաց կը ձգէ պատուհաններն, որպէս զի օդ բանի և չհոտին : Երկրորդ օրը կը սկսի աւելի համարձակ չորս կողմը պառտիլ, կը ծախէ իր վաճառքներէն և կը գնէ կամ փո-

փոխութիւն կ'ընէ այնչափ հնտաի, որ տուն դառնալու ժամանակ կը նեղուէր պարկին ծանրութենէն : Ամայն վերջը կը հասնի, և ինքը իր պզտիկ շտեմարանին մէջ 125 քիլո- կրամ ճերմակ ցնցոտի ունի, զորոնք թուղթ շինողի մը կը ծախէ 35 սանդիմ մէկ քիլոկր. այն պայմանաւ որ ուրիշ անգամ 45 սանդ. պիտի ծախէ, միայն թէ լաւագոյն ընտ- րուած ըլլան : Իր արկղիկը մէկ ամսուան մէջ երեք անգամ պարպեր էր, և առջի անգամ 20 ֆռանքի ծախքով 30 ֆռանք հաներ էր. երկրորդ անգամ 25 ֆռանքով առեր էր 42 ֆռանք. երրորդ անգամ 38 ֆռանքով 56 ֆռանք : Անդրէաս ամսուան մը մէջ հմտացաւ իր արուեստին, և ար- զէն բաւական բան չահած էր ծախելով իր պզտիկ վաճառքները և ճերմակ ցնցոտի գնելով :

— Բայց ինչպէս կ'ապրէր, կ'ըսէ Գրի- գոր :

— Կէսօրն իր աղօթքը ճամբան կ'ըսէր ու բարի քրիստոնէի մը պարտքը լեցնե- լով, գեղացուց սէրը իրեն գրաւեր էր, ու- ըրոնք բնականապէս կրօնասէր են : Իսկ կե- րակուրի համար կը խնդրէր կամ կէս քիլո- կրամ մնրալիւրէ հաց և կամ քիչ մը սպուր : Գեղացիք շուտ մը խնդրբը կը կատարէին և կ'ուզէին որ առանց ստրկի ընդունի : Բայց ինքը միշտ կ'ուզէր վճարել : Կը ստի- պէին որ կտոր մըն ալ կաթ, սեր առնու. բայց անօգուտ էր. վասն զի կ'ըսէր թէ

« Կաթը, պանիրը, սերը՝ ձեզի ալ ստակ կ'արժեն. դուք ալ հարուստ չէք ինչպէս ես ալ հարուստ չեմ, ուստի վճարենք փոփոխակի »:

Իսկզբան երկրագործք կը բռնադատէին որ Անդրէաս իրենց նուէրքն ընդունի, բայց տեսնելով որ անկարելի էր անոր միտքը փոխել, թողուցին որ իր ուզածն ընէ, որ լաւն էր. վասն զի արդարն ուր այն էր: Ընդհանրապէս այն տեղերն ուր կը ճաշէր և կը վճարէր, աւելի բան կը ծախէր: Բայց միշտ կը փոխէր գեղել ու տեղն ուր իր նախաճաշիկը, ճաշը և ընթրիքը պիտի ընէր: Տարուան մը մէջ՝ կատարեալ փերեզակ եւ զեր էր, երկրորդ տարին կրցաւ կտոր մը աւելի ընդարձակել և գնել իշուկ մը և սայլիկ մը, որ ընդ ամենը 150 Փաւնը արժեցին. այսպէս կրնար տանել մէկտեղ սրուակ մը թանաք, ինչպէս նաև տակափիկ մը քացախ, թէնէզէ ամանով մը ձէթ. և նաև քանի մը պնակ և խնցղէն ուրիշ անօթներ: Սայլիկը երկու մաս բաժնուած էր. մէկուն մէջ կը գնէր ճերմակ ցնցոտիները, միւսին մէջ իր վաճառքները: Վերոջ էր և գթոտ կենդանեաց, մանաւանդ շանց, թէպէտ և ոմանց այս բանը շատ ախորժելի չէ: Մէկտեղ կը տանէր շնիկ մ'ալ որ իր շարժական կրպակին պահպանութիւն կ'ընէր: Այնպէս գործոն էր որ մութնուլուսոյն շուտ մը պատարագը կը տեսնէր, կարգի կը գնէր իր վաճառքը և էջը, որ

ճշմարտն ըսելով ախոսին մէջ շատ ուտելու կարօտութիւն չունէր, վասն զի ամբողջ օրը ճամբորդութեան մէջ ասդիս անգին կ'արածէր:

Միով բանիւ երբ 18 տարուան եղաւ Անդրէաս, էջը՝ գեղեցիկ ճիւղ փոխեր էր և սայլը՝ պատշաճ և մեծկակ կառքի, և վերն ըսածներէս զատ կը տանէր մէկտեղ նաև ստտառ, հաստկեկ չուխա, և գեղացոյ աւմեն տեսակ պէտքի բաներ. քիչ մը զամ, մոմ, շաքար, խաչուէ, մէկ խօսքով ամեն բանէն կտոր մը: Երեքշաբթի այս ինչ գիւղին վաճառանոցը, հինգշաբթի ուրիշ գիւղի մը, չաբաթ՝ մէկ ուրիշ տեղ մը. և թէ էրթալուն ու թէ գալուն ձեռքէ չէր թողուր ցնցոտի գները, և իր վաճառքը ծախելը, որոնց վրայ միշտ կտոր մը աւելի կը վատըղէր: Քսան տարեկան հասակին տուն մը գնեց գեղի մը մէջ՝ հասարակաց ճամբուն վրայ՝ խանութ մին ալ մէկտեղ, որ օրուան մէջ քանի մը ժամ կը բանար երբ տուն կը գտնուէր, քիչ մըն ալ առուտուր կ'ընէր: Քսանու մէկ տարեկան՝ զինուորագրութիւն կայ, և բազաւոր գտնուեցաւ որ այն տարին իր բնակած գեղէն զինուոր պիտի չառնուէր, որով կրցաւ շուտ մը աշխարհք մտնել և չափաւոր ամուսնութիւն մը ընել, կարգուելով բարի երկրագործի մը աղջկանն հետ, որուն եղբայրն ալ փերեզակ էր, հետն օժիտ բերելով քիչ մ'ալ ստակ: Արդ քսանու մէկ տարեկան հասա-



կին այսպիսի գեղեցիկ արուեստակցութիւն մը ունեցաւ :

Իր գործերը, կը շարունակէ ժողովրդապետը, միշտ լաւ գնացած էին, մանաւանդ լաւէն լաւագոյն, այնպէս որ չորս տարիէն վերջը կըրցաւ քառասուն լծվար երկիր գնել, զոր ինքը իր պարսպոյ ժամանակները կը մշակէր: Գնեց տնակ մը, գնեց կով մը, յետոյ երկու, միշտ իր արուեստը շարունակելով: Երբ ինքը իր ձիովը և կառքովը ասդիս անդին կ'երթար գնելու և ծախելու, իր ամուսինը ուշադիր կ'ըլլար խանութին և անակին: Միով բանիւ, Գոմինիկոսի բոլոր որդիքն ալ Սատուծոյ օրհնութիւնն առին, և վերջինս ալ մէկալ եղբարցը նման աղէկ վիճակ ունի: Եւ թէ ունեցածնին մէկտեղ գումարենք, ապահով եմ որ 400,000 Ֆրանքէն աւելի ստացուածք կ'ըլլէ:

— Ո՛հ, ի՛նչ բաղդ:

— Եւ այս բոլոր ստացուածքը, բոլոր այս հարստութիւնը մէկտեղ գումարեցան խնայողութեամբ, կարգով, ոչ գրամ մը չուայլելով և ոչ կէս ժամ մը կորսընցունելով, ամեն բանի հաշիւ բռնելով, միշտ ըլլալով արգար, գործօն, ամենուն սիրելի և վրստահ առ Սատուած, և որ ամենէն աւելի իրաւցունէ մխիթարականն է, աւանց նեղ կեանք մը անցնելու:

— Որոչ գիտեմ, որ եթէ ես ալ այն երիտասարդաց մէկուն ուղէի նմանել, բանս կը բուսնէր, ըսաւ ճայն մը:

— Իրաւունք չունի այդպէս խօսիլ այն հետուն նատողը, ցուցնելով մատով զայն որ բարի ժողովրդապետին գիմացը ձեռքը երեսին գրած՝ սրահին խօրը նստեր էր, վասն զի այն մեր որդիքը կարգէ դուրս բան մը չըրին՝ հրաշք չգործեցին: Երեսդ բաց խօսէ:

— Բայց չհիւանդացան, ոչ Փրանկիսկոսին, ոչ փերեզակին կովերէն չմեռան. մէկուն կինը չմեռաւ, դժբաղբութիւն չունեցան:

— Ունեցան այն դժբաղբութիւնները որ ամենուն ալ սովորական է. սակայն աւելի նուազ՝ իրենց կանոնաւոր կենացն համար. և մէկուն ալ կինը չմեռաւ. հայր մը ունեցան որ զամէնն ալ խնայեցուց: Գիտէ՞ք, երբ Գոմինիկոս կը լսէր իր որդուց վրայ գովեստ՝ կը զայրանար, բարկութենէն կը յիմարէր, կը նախանձէր անոնց վրայ, կը ծեծէր զկինը մինչև իմ գիմացս, կահկարասիքը կը կտորէր, կը ծախէր մինչև իր կնոջն հագուստներն, որպէս զի անոնց զինը գինետանց մէջ չուայլէ. և խեղճ կինն առաւօտ մը հարկադրեցաւ անկողին մնալ մինչև որ հագուստ մը ճարէ. վասն զի էրիկը այն զիչեր՝ կնկան հագուստները ծախեր էր:

— Ի՛նչ յուսահատ բան: Բայց որդիքը մօրերնուն չէին օգներ:

— Ի՛նչպէս չէ, բայց հայրերնին չէր ուղեր, և ամեն զգուշութիւն պէտք էին

բանեցնել մօրերնուն օգնելու համար: Աստուած ուզեց ուրիշ անգամ մ'ալ պատժել այս հայրը: Օր մ'այնքան զինուկներ էր որ կինն ստիպուեցաւ անէն փախչել: Ինք ալ ելաւ զայն բնտրուելու, խննթի պէս փոզոցները պոռալով և զարնուելով որոնց որ կը հանդիպէր:

— Ո՛հ, հազիւ կը յիշեմ կ'ըսէ Կարոլոս:

— Գիպուածով չորս պահապան զինուոր կ'անցնէին մեր գեղէն. ասոնք տեսնալով այսպիսի զինով մը, քաղցրութեամբ զինքը կը յանդիմանեն: Անիկայ այս ազգարարութեանց մտիկ չընէր և կը սկսի նախատել զանոնք, հնչեցոյել զինուորներուն դէմ, իր կնիկանը փախստեան պատճառ զանոնք սեպելով: Այն ատեն անոնք ձայներնին քիչ մը կը բարձրացնեն, ինքը ալ աւելի կը բարձրացունէ: Միրելիք, գիտնայիք թէ ինչ չար հետեանք կը բերէ չափազանց զինի խմելը: Խելքը կորսնցնել կու տայ, աւարկայից տեսութիւնը զմարդը կը կատղեցնէ, գաղանի մը և վագրի նման: Այն խննթը կ'ուզէ պահապան զինուորացի դէմ դնել, որոնք զինքը կը բռնեն. ձեռուրները կը կապեն և բանտ կը տանին: Տեսնայիք թէ ինչ կերպարանք ունէր այն թշուառը, ինքնիրմէ դուրս ելած, և լռէիք թէ ինչ հայեցոյանքներ այն զժողային բերնէն դուրս կ'ելլային: Գիււհազարի մը կը նմանէր: Գիշերը վրայ հասաւ, և անոր հետ քունն ալ Գոմինիկոսի վրայ տիրեց և շատ խորին

քուն: Երկրորդ առաւօտ ուշ ատեն արթըննալով և չորս կողմը նայելով, մեծ զարմացմամբ տեսաւ որ տախտակի մը կապուած էր: Չեռուրները և ոտուրները կապեր էին, որպէս զի չարիք մը չհասցնէ: Քանտապետը շուտ մը եկաւ և ըսաւ Գոմինիկոսին թէ ինչ պատճառաւ հոն կը գտնուէր, և թէ ազատելու համար շատ աշխատութիւն պէտք էր, որովհետեւ զինուորական զօրութեան գէմ գրեր էր:

— Ինչ արդարութիւն. չորս կտոր պահապանաց համար:

— Չարագործին համար այն զինուորները բազուկը են օրինաց, զոր Աստուած հաստատեր է. զինուորք պաշտօնեայք են աստուածային և ընկերական վրէժխնդրութեան, և ով որ զպաշտօնեայս կը նախատէ, օրէնքը կը նախատէ, և օրէնագիրն ու օրէնքն հրատարակողը:

— Աւելորդ է ըսելս, կը շարունակէ ժողովրդագպետը, որ իր կինն ու որդիքը մէկէն դատաւորին գնացին որ զինքը որչափ կարելի է շուտ մը ազատեն. բայց արդէն ոստիկանութիւնը շատ մը գէշ տեղեկութիւններ առեր էր վրան: Աինք կը ջանար ազերսական խօսքերով էրկանն ըրածը թեթեցունել, տուած ձեծերը կակղեցնել, գեղեցիկ պատճառներով գոցել բոլոր իր հագուստներուն ծախուիլը: Բայց բարեբաղդաբար նոյն ժամանակը հասարակութեան զլուխը բնախի անձ մ'էր, որ իբրև պարտք

խմացուցիւր էր ուտիխանութեան ամենայն ինչ Գոմինիկոսի վրայօք՝ անոր համար անկեղի եղան թէ իմ աղաչանքս, թէ որդւոցը և թէ խեղճ հետջը: Մանաւանդ՝ քիչ մը յանդիմանութիւն ալ լսեցինք դատաւորէն, ըսաւ թէ այսպիսի յանցաւորները պէտք էր պատժել. և թէ պէտք էր օրինակ տալ. ապա թէ ոչ՝ ներելով փոխանակ բարեաց չարիք կը սերմանո՞ւի: Ապահովցուց նաև զմեզ որ եթէ Գոմինիկոս սրտին խորն աղէկութիւն ունէր, բանտէն ելած ժամանակը լաւացած կը գտնուէր: Մենք տուն դարձանք շատ մահացած: Բայց իր ամուսինը նոյն օրը հիւանդացաւ և ծանրացաւ շուտ մը երկրորդ գիշերը: Անհամար եղան իր որդւոցը խնամքը, որոնք ամենն ալ քովը վազեցին, նաև Մոնցա եղած երկուքն ալ, թէպէտ և մեծապէս զբաղած էին: Շատ տարի կար որ այն խեղճ կինը հիւանդութեամբ կը տանջուէր, և մէկ սաստիկ բորբոքում մը աղետաց՝ զինքը ութ օրուան մէջ զերեզման տարաւ:

— Խեղճ Մարիամ, միշտ իր մահը կը յիշեմ, կ'ըսէ կարողութեամբ, ինչեր պիտի չհասցնէի այն վատահամբաւ Գոմինիկոսի գլխուն, թէ որ Աստուծոյ և օրինաց վախը չընենք զիս:

— Շատ բարի էր քոյրդ, համակամեալ էր և ժամասէր. ապահովապէս երկինք գացած է, կ'ըսէ ժողովրդապետը. շնորհակալ եղիւր Աստուծոյ որ զանիկայ առ ինքն կոչեց:

— Բայց, հայր սուրբ, շնորհակալ պիտի ըլլանք նաև դժբաղդութեանց համար ալ որ մեր վրայ կը զրկէ Աստուած. նաև երբ հայրերնիս մայրերնիս մեղմէ կը յախշտակէ: Անիկայ շատ խիստ է, կ'ըսէ մէկ անձանօթ ձայն մը:

— Այո՛, այսպէս է. կամ մենք կը հաւատանք հանգերձեալ կենաց՝ կամ ոչ: Եթէ կը հաւատանք, ապա ուրեմն որչափ որ շուտ կանչէ զմեզ Աստուած, այնչափ լաւ է. իսկ եթէ չենք հաւատար, ան ատեն իբրև ունի Աստուծոյ դէմ տրանջողը: Բայց ես ալ նոյն ժամանակը կը հարցունեմ իրեն թէ ինչո՞ւ եկեղեցի կու գայ, ինչո՞ւ իմ ատեն կը գտնուի: Այլ կարծէի թէ բարի ժողովրդեան մը մէջ եմ, հաւատարիմ պահողք Քրիստոսի կրօնիցն...:

— Այո՛, այո՛, մեղմէ մէկն ալ չտարակուսիր ամենեւին քու խօսքերուդ վրայ:

— Բայց դառնանք Գոմինիկոսի: Ես իմ ժողովրդեանս հետ բարի Մարիամին պատշաճ յուղարկաւորութիւն մը կատարեցնեալքը, ելայ բանտը գնացի, և ուղեցի խօսիլ Գոմինիկոսի հետ, որուն ամեն պէտք եղած զգուշութեամբ և սիրով ըսի իր կնոջ ցաւերը, և պատմեցի անոր մահը: Խիզարբան զարհուրած չուղեց խօսքերուս հաւատալ, բայց երբ զինքն համոզեցի եղած դժբաղդութեանը վրայ, նախ բոլորովին սաղած մնաց, ետքը հեղեղաբար սկսաւ արտասուել, այնպէս որ մարդուս սիրաբը կը շարժ էր:

— Կոկորդիլոսի լաց, կ'ըսէ Կարոլոս :

— Համբերէ : Այնպէս լացաւ, որ ինծի պէտք եղաւ ամեն ջանք ընել զինքը մխիթարելու համար : Բայց պատին հետ խօսել էր . ինքն իրմէ ելած կը պոռար որ իր գեշ վարմունքներովն ամուսինը սպաններ էր . ջանացի համոզելու զինքն որ Աստուծոյ ձեռքն է որ ծանրացեր էր վրան և լաւազոյն կենաց կանչեր էր իր կինը : Բայց նոյն օրը՝ կարելի չեղաւ զինքը հանդարտեցընել, և ոչ պատառ մը կերցընել տալ իրեն : Դատարոսին գնացի և ամենայն ինչ պատուեցի, ինքն ալ բանտելոյն վրայ սկսաւ հոգալ, բայց ըսաւ որ երեք ամիսէն առաջ անկարելի էր զինքն ազատել . այսու ամենայնիւ անոր վրայ ամեն խնամք պիտի ընէր, որ օրէնքը չարգելուր և ստէպ այցելու թեան կ'երթայ, և անցեալ վարուց վրայ կը խօսի . և ապագային մէջ լաւ ըլլալու կը յորդորէ . խոստացաւ որ անոր այցելութեան զրկէ նաև բանտին քահանան ինչպէս նաև ուրիշ բարեպաշտ անձինք որ կը փափագէին բարիք ընել բանտարկելոց : Շատ լաւ դատարար մ'էր, արդար, անկողմնասէր թէ հարուստներուն և թէ աղքատաց :

— Բոլոր դատարարները այնպէս պէտք էին ըլլալ, կ'ըսեն ոմանք :

— Արդ երեք ամիս բանտարկելութենէն վերջը Գոմինիկոս բողոքովին փոխուեցաւ : Բանտէն ելլալուն պէս, մէկէն եկաւ զիս գաննելու, արտում և տխուր իր կնոջ մա-

հուան համար, բայց միտքը դրած էր ամեն ջանք ընել եղած չարիքն ըստ կարի դարմանելու, դործօն, պատուաւոր և բարեգործ կեանք մը անցընելով : Շուտ մը իր ջերմեռանդութիւններն ըրաւ, բնակեցաւ այն տանը մէջ զոր առանց կահ կարասիքի թողուցեր էր, և ուր ամեն կարեւոր բան հոգացած գտաւ : Կերս մտնելու ժամանակ, որովհետև ես տարի զինքը, գոյնը նետեց պատ դարձաւ, լացաւ և ինծի նախեցաւ հարցընելով թէ ինչպէս այն բաները ինքը ծախելէն վերջը հոն կը գտնուէին : Էս ըսի որ ալ բան չհարցընէ, գանոնք վայլէ և իր խօսքը պահելու մտածէ . ըսի դարձեալ որ եթէ երկրորդ օրը կ'ուզէր աշխատութիւն սկսիլ, կրնար երթալ հասարակութեան զլխատորին որ հունձք կ'ընէր, որ իմ բերնովս կ'իմացնէր իրեն թէ աղէկ ընդունելութիւն պիտի գտնար, թէ որ իբր օրական աշխատաւոր 3 Փռանք աւուրչէքով քովն երթար . Գոմինիկոս որ շատ տարիք ունէր, բայց նաև կարգէ դուրս ուժով էր, շուտ մը տարբեր մարդ դարձաւ, ժողովրդականի մը ճշմարիտ օրինակ, բարի քաղաքացի մը, ինչպէս որ դուք ալ ճանչցեր էք, և որուն կենաց երկրորդ մասին պէտք էր նմանիլ : Քանի մը ատենէ վերջը ուզեց օր մը անցընել իր որդւոցը հետ, որոնց համար ճշմարիտ սօն մը եղաւ տեսնալով իրենց բարի հայրը այսպէս փոխուած . կուլային այն բարի երիտասարդ-

ները, կուլտը նաև հայրերին: Տարի մը չանցաւ, որ Ղովմինիկոս սկսաւ քիչ մը բան մէկդի գնել, և բարբը փոխելով, և կտրիճ երկրագործ մը դառնալով, իմ և բարի Փրանկիսկոսին միջնորդութիւններովը, կրցաւ շուտ մը իր տանը հին արտը դառնալ, հին բնակութիւնը դալ, ուր ծներ էր և ամուսնացեր Մարիամին հետ, որուն ամեն օր գերեզմանին այցելութեան կ'երթար, ուսկից ունեցեր էր այն չորս որդիքն, որ արդ իրեն միտթարութիւն էին և որոնց վրայ ամենը լաւ կը խօսէին: Հայրն ալ որդւոցը նման սկսաւ խնայողութիւնները նել, և այսօրուան օրս ինքն ալ առանձին ինչք մը ունի, զոր ես գիտեմ, որուն կէսը պիտի տեսնաք թէ ինչ բանի գրեր է, յետ խօսելուս երկաթուղեաց վրայ և Փրանկիսկոսի եղբարց ըրած բարեգործութիւնները ձեզի պատմելէն վերջը, որոնց վրայ միայն մաս մը ձեզի խօսած եմ:

— Արդ պատմէ՛ մեզի երկաթուղեաց վրայ:

— Ստոյգ է որ դուք շատ պէտք չէք ունենար յաճախ երկաթուղուով վեր վար երթալ դալ, որովհետեւ հին առնուան պէտ կրնաք ռտուընիդ նորէն գործածել, և այս կրթութեամբ աւելի ուժով և առողջ կ'ըլլաք. խնայելով նաև զձեզ ՚ի վտանգաց և ամէն անգամ՝ ճամբուն ծախքէն: Բայց քիչ խօսքով կրնամ զձեզ համոզել անոնց օգտակարութեանը վրայ: Ո՛վ կու տայ ստակն

այնդարմանալի ճամբաները շինելու համար, որոնց վրայ չարժական կառքեր կը քալեն, ոչ ձիու, այլ շուգոյն զօրաւոր ուժովը:

— Հարուստները և վաճառականները, կ'ըսէ կարողոս:

— Ուրեմն կը տեսնէք որ դուք և ոչ դրամ մը ծախք կ'ընէք, կամ խիստ քիչ, գնելով քանի մը բաժանորդութիւն, որոնք աղէկ ստակ կը բերեն: Բայց ո՛ր կ'երթան այն անբաւ միլիոնները որ շինութեան համար կը սպառուին:

— Կալուածատեարց ձեռքը կ'երթան, և անոնցմէ մեծերը կան, պղտիկները կան. նաև որմնադրաց ձեռքը կ'երթան, հիւսանց, ամեն տեսակ աշխատատարներուն, որ անոնց շինութեանն համար հազարաւոր կ'աշխատին. ազիւս շինողներուն, երկաթ հանողներուն, և քիչ մ'ալ երկրէն դուրս կ'ելլայ (մինչև որ ամեն տեսակ մենքենայ շինելուն մէջ չյառաջադիմենք) շոգեչարժ և երկաթուղեաց ուրիշ կարևոր գործիչները գնելու համար, որովհետեւ արդար է որ քիչ մը ստակ ալ դուրս երթայ, մինչև գեւ այնչափ ներս կու դայ մեր բերոց մեզի աւելորդներուն դուրս երթալովը:

— Երկրէն դուրս կ'երթան, մեղք:

— Բայց չէք գիտեր որ այն ստակը, որով կը շինուին երկաթուղիք, կու դայ գրեթէ բոլորն ալ Ղեւրմանիայէն և ուրիշ օտար երկրիներէն. որոնց ձեռքն է բաժանորդութիւններն, այսինքն հաւասարամասն բաժ-

նուած զբամազուխը՝ որ բաժանորդութիւն կը կոչուի, ինչպէս որ ձեզի ըսի:

— Քիչ կը հասկընանք երկաթուղեաց վրայ ըսածներէդ: Այոչափ կը հասկընանք միայն, կ'աւելցնեն ոմանք, որ այն զարմանալի ճամբաներուն վրայէն կառավարներն ալ չեն կրնար ստակ վատաբերիլ:

— Ճշմարիտ չէ. որովհետեւ ուրիշ բան չեն ընելը բայց եթէ ճամբայ փոխել, և փոխանակ քաղքէ մը շիտակ ուրիշ քաղաք երթալու, խոտորնակի ճամբաներէ կ'երթան, ուր տեղուանքը երկաթուղիք չեն կրնար բանիլ: Գեղերէն, աւաններէն նախ պէտք է քաղաք իջնել կառքով և անկէ ետեւ շոգեկառք նստիլ:

— Բայց միջանկեալ գեղերը, ուսկից շատոնց 'ի վեր կ'անցնէին վաճառքները և ճանապարհորդները, շատ պիտի կորսընցընեն:

— Ի՞նչ մեծ կորուստ: Աշխատութեանց պակասելովը թերեւ ոմանց հացն ալ պակսի, մանաւանդ անոնց որոնք չեն կրնար և կամ չեն ուզեր արուեստնին փոխել. կամ ուրիշ կողմ դառնալ: Բայց միլիոնաւոր անձանց բարեոյն համար մեծ վնաս մը չէ թէ որ քիչ մը նեղուին այն քանի մը հարիւրաւորները, որոնք յամառութեամբ միշտ կ'ուզեն մնալ ուր են, և իրենց փճակը չեն փոխել որ քիչ մը ժամանակի համար: Տէրութիւնը և իմաստունք այնպէս կը կարգաւորեն ապագային մէջ որ ոչ մէկը և կամ

նուազուըք առժամանակեայ կրեն՝ նոր բան մը հաստատելու ատեն յօգուտ ամենեցուն և իւրաքանչիւրին: Այսու ամենայնիւ քիչ մը ժամանակաւ և սղօտիկ զոհով մը ամենայն ինչ կը վարմանուի: Միջանկեալ գեղերը՝ աւելի ուշադրութեամբ մտադիր կ'ըլլան իրենց ճարտարութեանցն. ո՛վ որ արտունի, լաւ կը մշակէ, և մեքենաներ կուգան որոնցմով ալ կրնայ աշխատիլ, ընկերութեամբ գնելով գանոնք և փոփոխակի մէկմէկու օգնելով. ո՛վ որ ուրիշ արուեստ ունի, անոր աւելի մեծ խնամքով մտադրութիւն կ'ընէ: Արով այն ճամբաները, ամեն տեսակ վաճառք տեղէ տեղ տանելով աժան գնով և շուտ, այնպէս կ'ընեն որ ալ սով կամ թանկութիւն չըլլար մէկ տեղ մը և ուրիշ տեղ մը չափազանց առատութիւն, կամ հոս սուղ և ուրիշ գեղ մը ամենաժան: Այսպէս պարէնները միշտ նոյն գինը կ'ունենան, կրնան մշակուիլ արտերը, և աւելի քանակով պողպարեցընել գանոնք, ծախուելուն վրայ ապահով ըլլալով: Հոս աշխատաւորք կան որոնք գործ չունին, մինչդեռ գիտենք որ մօտի գաւառը բազուկներու կարօտութիւն ունի, ահաւասիկ քիչ ծախքով անոնք այն կողմերը կրնան երթալ, կտոր մը ստակ կը շահին և կը գառնան իրենց աներնին լեցուն ձեռքով: Վերջապէս՝ աղքատ փողովրդեան համար երկաթուղիքն մեծ օգուտ են, և թէ որ անոնք շինուելու ատեն կտոր մը

վնաս կայ կրելու, հարուստներն պիտի կրեն որոնք ստակ տուեր են: Իսկ եթէ զխանար այն բարիքը որ ապագային մէջ երկաթուղիք պիտի ընեն մարդկային եղբայրակցութեան ամեննիգ միաբերան կ'ազազակէր. « Կեցցեն երկաթուղիք »: Ուրեմն ամէն բանէ առաջ շնորհակալ եղիք Աստուծոյ, որ այսպիսի նորագութիւններ ընելու թոյլ կու տայ, և վերջը երախտագէտ եղիք անոնց որ կ'աշխատին վճռել տալու և գործադրելու այս նոր միջոցները փոխադրութեան, 'ի մեծ օգուտ այն երկիրներուն որոնք ձեռք կը զարնեն անոնց շինութեանը: Հիմա խօսինք Գոմիսիիտի որդւոց բարի գործոց վրայ, որ կատարեցին իբր ողորմութիւն և փոխադարձ օգնութիւն: Արդ պիտի զխանար որ Փրանկիսկոս առաջինն եղաւ իր գեղին մէջ հաստատելու ընկերութիւն մը, որուն նպատակն է օգնել երկրագործաց՝ երբ կը հիւանդանան, անոնց այրեացը, կամ երբ կարօտութիւն մը ունին, առնելով անոնց տեղն աշխատութիւն, տալով ցանք և սր և խցէ օգնութիւն, ստակ, գործիք, տեղեկութիւն:

— Խնդրեմ աղէկ բացատրեցէք այս բաները, որովհետեւ զժուարաւ կը հասկընանք:

— Փրանկիսկոսի գեղին երկրագործները իրեն հրաւերքին և խորհրդեան հետեւելով, միաբան ընկերութիւն մը կազմեցին՝

զիւղապետն ալ հետեւրին մէկտեղ և խոստացան նախ բոլոր այս հետազայ ըսելիքներս. կայ գեղացի մը՝ որ կը սկսի իր երկրագործութեան ընթացքը և չունի գործիք, ցանելու ցորեն կամ լազուտ, և ոչ ուտելու հաց, բայց բարի կամք աշխատելու. ընկերութիւնը իրեն փոխ կու տայ գործիք, ցորեն, լազուտ, հաց, պարտք դնելով որ որոշեալ ժամանակի մը մէջ վճարէ: Ինչպէս կ'ըլլայ հունձիք ժամանակը, որոնք յարմար առնին աղէկ գնով կը ծախուին՝ ինքը կամ ընկերութիւնը պահելով մասնաւոր տեղուանք: Կը մեռնի մշակ մը, որ չորս կամ հինգ զուակ ունի, որոնք չեն կրնար աշխատիլ և պէտք է որ դեռ գպրոց երթան. ան՝ առեն ընկերութիւնը վրան կ'առնու վախճանելոյն արտը մշակելը, կը խնամէ որդիքը, կ'օգնէ կնոջը, որ իր էրկանէն աշխատուած երկիրը չթողուր, իր որդիքը կը մեծնան Աստուծոյ սիրոյն մէջ, կը կրթուին, մինչև հասնի այն ժամանակը՝ որ կարող ըլլան հօրերնուն տեղը անցնիլ և իրենք իրենցմէ երկիրը մշակել: Հիւանդութիւն մը կու գայ երկրագործի մը վրայ՝ որով չկրնար աշխատիլ. իր երկիրը կը մշակուի, ամեն ինամբ կ'ըլլուին ընկերութեան անդամներէն. հանգստեամբ կ'առողջանայ և իր գործերը 'ի կարգի կը գտնէ, անվնաս, այնպէս ճամբու գրուած ինչպէս թէ ինքը առողջ եղած ըլլար, առանց նշատանայու, առանց ցաւալի անձկու-

թեանց, որովհետեւ դիտէ թէ երբ առողջ է նոյն բանը ինքն ալ ուրիշներուն պիտի ընէ: Չորութիւնը կուգայ որ կը նուազեցնէ և կամ բարձրովին կը տանի լազուտը, կամ կը ստիպէ գերկրագործը վարձքին ցորենը գործածելու, այն ատեն ընկերութիւնը դժուարին գործողութեանց մէջ կ'իյնայ, բայց ասով իրեն օգնութիւնը չպակտիր: Արդէն ընկերութիւնը մէկդի դրած կ'ըլլայ դրամագլուխ մը կամ գումար մը գրամոյ, և անով կ'օգնէ կամ ցորենով որոնք որ կարօտութիւն ունին, պարտաւորելով որ յարմար ժամանակին պղտիկ շահով մը հատուցանեն. մանաւանդ թէ միտք կայ որ դեռ տէրութիւնը իր վրան չառած ապահովագրութիւնը կարկուտի, հրդեհնելու, և ուրիշ քաղաքային միտաներու դէմ, այն ընկերութիւնը ընկե՛րակցաց մշակած դաշտերն ապահովագրել տայ ապահովագրութեանց ընկերութեանց քով, և այսպէս իր դրամագլուխը կրնայ ուրիշ ամենուն օգտակար գործոց գարձընել: Մէկը կայ որ գէշ կ'ապրի, փողոցները դատարկ կը պտըտի, զիննտունները խաչուէները կը յաճախէ, կամ ուրիշ գուարձութեանց տեղեր՝ ի մնաս իր ագարակին և ընտանեացն, ի գալթակղութիւն բոլոր ցեղին, այն ատեն ընկերութենէն ոմանք գանիկայ կը կանչեն, անկեղծութեամբ և սիրով իր վարքն առջևը կը գնեն, կը ցուցնեն գալթը հետեանքը, կ'առաջարկեն վարքը փոխելու, կ'ըս-

տառնան զինքն ընկերութենէն մերժելու: Բանք թէ այս ազգարարութենէն վերջը դեռ անիկայ իր գէշ վարքը շարունակելինձի իմաց կուտան և կամ զիւզապետին. իսկ եթէ դարձեալ շարունակէ առջի կեանքը, ան ատեն ընկերութենէն կը մերժուի և չկրնար ամենեին դաշիլ այն ստակին, զոր արկզին հատուցեր էր, վասն զի անիկայ կը մնայ ընկերութեան քով, զոր կը գործածէ օգնելու անոր որդւոցը, կնոջը, կամ ուրիշ կարևոր բարիք մը ընելու: Ընդհանուր սով մը կու գայ. ան ատեն այժ շատ միջոցներ պէտք են դարմանելու այն դժբաղդութիւնը որ մեր մեղացն համար վրանիս կը հասնի: Այթէ այսպիսի վտանգի մը վախ կայ, զիտէր ինչ կ'ընեն. բոլոր տանուտէրները կը ժողվուին, քովերնին ունեցած ցորենին ճիշդ հաշիւը տալու համար. յետոյ կը նային թէ որչափ ցորեն կարևոր է ապրելու համար, մինչև հունձրի ժամանակ: Ամենքն ալ ունեցածնին մէջ կը բերեն և իւրաքանչիւրին հաշիւը կը բռնուի: Ամալու ևս բացատրելու համար ըսենք. Արտուսը 10 հեկտուլիդր կը յանձնէ, իր հաշուին մէջ 10 հեկտուլիդր կը գրուի. Պետրոսը կը գնէ 27 հեկտուլիդր, հաշուեգրքին մէջ իր անուանը 27 հեկտուլիդր կը նշանակուի. Գրիգորը 30 ունի, նոյնպէս իրեն ալ այնչափ հեկտուլիդր կը նշանակուի: Յետոյ հաշիւ կ'ընեն որ իւրաքանչիւր անձին որչափ ցորեն կարևոր է, և համարելով թէ 2 հեկտուլիդր, կ'որ-



չեն մէկուկէս սարտելու, և եթէ ըլլան զոր օրինակ 500 հօգի, որոնց 1000 հեկտոլիզր պէտք է, ահաւասիկ հազարին տեղ 250 խնայութիւն ընելով պէտք կ'ըլլայ 750 հեկտոլիզր: Արդ ենթադրենք թէ բոլոր հասարակութեան մէջ 600 հեկտոլիզր ցորեն կայ, ընկերութիւնը անմիջապէս 450 հեկտոլիզր ալ կը դնէ, կամ կը ստանայ հունձքով, տարւոյն որչափ ցորեն կը պակսի հաշիւ ընելէն վերջը, որպէս զի կարևոր ժամանակին բաշխէ: Համարինք թէ մէկ հեկտոլիզրը 21 ֆունսք արժէ, 5150 ֆունսքով բոլոր հասարակութեան պէտքը կը հոգացուի: Արդ հաշիւ կ'ըլլուի նաև թէ օրը որչափ պէտք կ'ըլլայ, և ենթադրելով որ ընտանիք մը օրը 4 քիլոկրամ ալիւր կը գործածէ, 5 քիլոկրամի կը վերածուի, և վերակեցուք ամեն փոյթ կ'ընեն իւրաքանչիւր օր ճշդիւ բաշխել հացը, խոզուտը և ուրիշ պարէնները, հոգալով դարձեալ որ բան մը չըսայուի: Մէկը որ օրը փոխանակ 2 քիլոկրամ հաց ուտելու, քիչ մը ժամանակուան համար ուտէ մէկ և երեք քաւորդ, կը մեռնի անօթութենէ:

— Ո՛չ երբէք, կ'ըսեն բոլորն ալ:

— Ահաւասիկ ուրեմն սովին առաջին դարմանը: Այն պարտքն որ ամէն մէկը կ'ունենայ առ ընկերութիւնն ընդունած պարենիցն համար, կը հատուցանէ զայն կամ դրամով, և կամ պարենով օրուան արժէիցն համեմատ, գործակցական կեր-

պով, այսինքն որոշեալ ժամանակներու վրայ բաշխելով այն տարբերութիւնն որ կ'ունենան դնելու ատեն և վաճառելու ատեն: Համեմատութեամբ իւրաքանչիւրին տուած գնոյն, հատուցանելով համեմատական շահ մը անոնց՝ որոնք դրեր են ընկերութեան մէջ իրենց ունեցածը, որոնց կը հատուցուի այս շահը կամ պարենով կամ գրամով, ըստ կանոնացն որ հաստատար են մէջընդին գործակցութեան ամեն ընկերութիւնք: Թէ որ պարէնով վճարուի, աւելցածն որ ընկերութեան կարևոր չէ, հրապարակական աճուրդով կը ծախուի, և դրամը արկղը կը դրուի, որուն մէջ անօգուտ քարի մը պէս անգործ չկենար, հապա շահու կը տրուի խնայութեան արկղը դնելով, կամ ժողովրդական պանքան և կամ ուրիշ ապահով տեղեր, այնպէս որ եթէ պէտք ըլլայ կարող ըլլան անկէ հանելու: Վասն զի ընկերութեան անսայթաք երթալուն համար՝ միշտ պէտք է պատրաստ դրամ ունենալ:

— Բայց, հայր սուրբ, ի՞նչպէս կը ժողովուի ամբողջ հասարակութեան մը օգնելու համար պէտք եղած գրամը, զոր օրինակ եթէ հազար հոգուով կազմուած ըլլայ:

— Արդէն կերպը ձեզի սորվեցուցի, և թէ մինչև հիմայ ըսածներս լաւ հասկըցար նէ:

— Իւրաքանչիւր որ սրչափ կրնայ տալ, կ'ըսէ կարգուս:

— Եւ թէ որ խեղճ զեղացի մը ըլլայ որ քան մը չունենայ, կ'ըսէ Գրիգոր:

— Ո՛վ կ'ըսէ որ մարդ քան մը չկրնայ ունենալ, չունի՛ ոյժ, չունի՛ միտք և աշխատութիւն: Չէք գիտեր որ մարդս գանձ մ'է: Մէկը քանի մը սանդիմ չունի՛ ընկերութեան տալու. վասն զի առաջին դրամագլուխը քիչ քիչ կը տրուի, 20, 30 սանդիմ շարաթը, մինչև որ ծախուց համար կարե որ բաժանորդութիւնները ձեւանան. հարկաւ տուեր քան մը կ'ունենայ, կամ առարկայ մը ծախելու և կամ ընկերութեան փոխ տալու, վասն զի ընկերութիւնը կը ծախէ ալ: Բանք թէ, որ անկարելի է, տուեր քան մը չունենայ, կրնայ երկու երեք օրուան աշխատանքը տալ. եթէ չկըրնար աշխատիլ, խորհուրդ կու տայ կամ կ'ուզէ աշխատարները. թէ որ մտածելու և դործել սովորելու ալ զլուխ չունենայ, ան ատեն մենք պէտք է օգնենք իրեն, կամ այն է որ արդէն ինքը իր աշխատութեան մասը ընկերութեան հատուցած է, և կամ երկնից կամօքն անկարող աշխարհք եկեր է. ստիկոյ իր յանցանքը չէ. պէտք ենք ամենայն զթով խնամել զինքը, որպէս զի անյանցանք անկարութեանը պատուհասը չըկրէ. և Աստուած ու բոլոր աշխարհիս մեծամեծ իմաստունները ողորմութիւն ընել կը յանձնեն այս խեղճ արարածոց համար: Արդ հիմայ այսչափ խօսածներէս քան մը կը հասկընաք մեր Փրանկիսկոսին հաստատուած

փոխադարձ օգնելու ընկերութեան վրայ, որ միայն մէկ տեսակ կարօտութեանց համար չէ, այսինքն հիւանդութեան, աշխատանքի, հազա ընկերութեան անդամոց ամեն կարե որ եղածներուն համար, և այս բանս լաւ կ'ըմբռնէք երբ գործակցութեան ինչ ըլլալը հասկընաք:

— Ի՛նչ լաւ մարդ է, կ'ըսեն ամենը միաբերան, Աստուած զինքը միշտ օրհնէ:

— Բայց մեր պիտոյքը միշտ մենք պիտի հոգանք, իսկ հարուստները, տէրութիւնը քան պիտի չմտածեն, կ'ըսէ Գրիգոր:

— Սիրելիք, պիտի չդողդոջիմ ձեզի աղաչելէն, որ ինչ որ դուք ձեզի կրնաք ուրիշներէն մի բնատէք. խնդրեցէք ձեր բազուկներէն, ձեր կամքէն այն օգնութիւնը, ինչ որ մինչև հիմա հարուստներէն խնդրեր էք. խնդրեցէք այն սէրէն, զոր մէկմէկու պէտք է ունենաք, և այս ճշմարիտ և ստոյգ սիրոյն արգասիք առաջ կուգան այն ընկերութիւններն և այն ժողովներն որ մեր և ձեր սղբութեանն համար մինչև հիմա դժուարաւ և նուազ թուով ոտք ելեր են: Երբ հարուստները տեսնան որ դուք բարի էք, խնայող, յարգազիր, ազազան կը մտածէք, կը յաճախէք աւելի եկեղեցին, արտերնիդ և դպրոցները, քան թէ զինտունները և զբօսանայ տեղու անքն, որ իրենց կալուածքը լաւ մշակուած են, և թէ մարերնիդ դրեր էք դուք ձեզի օգնութիւն գտնել, իրենք ալ սիրով ձեզի թիկունք

կ'ըլլան. այսինքն ձեզի հետ կ'ընկերանան. և աւերութիւնը որ է և պէտք է ըլլայ հայր բոլոր քաղաքացոց, որոնք նոյն խոսակա-  
րութիւնը կը ձեռացնեն, զձեզ կը խրախուսէ, ձեզի յաւագոյն ուսումն կու տայ, կը հաս-  
տատէ յարմար մարզարաններ՝ աշխատու-  
թեան մէջ աւելի յաջողելու համար, ա-  
ւելի դիւրացընելու, աւելի պողպարը ընե-  
լու, և մանաւանդ խեղճ գործաւորաց հա-  
մար. և գրգիռ կ'ըլլայ հարուստներուն որ  
ձեզի եղբայրակցութեամբ ձեռք տան, ու-  
րովհետեւ աւերութիւնը, ինչպէս բախ, պէտք  
է որ միշտ պաշտպան ըլլայ բոլոր քաղա-  
քացոց՝ մանաւանդ աւելի ազքատին քան  
թէ հարուստին. վասն զի տկարները, որոնք  
չատ բան չեն դիտեր, երեւելի անուն չունին  
և ոչ յարաբերութիւն. միով բանիւ՝ ոյժ մը  
չունին, աւելի պէտք ունին օգնութեան,  
և զօրաւոր պաշտպանութեան ամենայն  
կերպով:

— Բայց այն օրհնեալ հարուստները ա-  
մենայն ինչ իրենց կ'ուզեն:

— Խօսքերուս ուշ չէ՞ք գներ. մտցնի՞ր  
Փրանկիսկոսի պատմութիւնը. ինքը իր տի-  
րոջմէն աւելի գրեթէ հարսուտ չէ. խեղա-  
ցի, քաջ և իր վիճակին մէջ երջանիկ եր-  
կրագործ մը չէ: Ի՞նչ դժբաղդութիւն կրնայ  
հանդիպիլ որ յախշտակէ իրմէ իր հան-  
դըստութիւնը և յաջողակութիւնը: Մինչև  
եթէ առանց գրամի մ'ալ մնայ, իր անձն  
այնքան ստաբիլութիւն, այնքան յաջողա-

կութիւն ունի, որ իրեն բաւական կ'ըլլայ  
ուր որ ալ երթայ, հիմայ մանաւանդ որ  
միաբանական գործակցութեան զօրութիւն-  
ը հասկըցուած է. անոր համար այս իրի-  
կուն երթալնէ՞ք առաջ, ձեզի պղտիկ տե-  
տրակ մը պիտի տամ անդդիերենէ թարգ-  
մանուած. որ ինձմէ լաւ պիտի բացատրէ  
ձեզի թէ ինչ է Գործակցութիւն:

— Ծնորհակալ ենք, հայր սուրբ, բայց  
այս կերպով ըլլայ այն կերպով ըլլայ մենք  
միշտ պարտական ենք աշխատելու: Պիտի  
չլայլենք երբէք մեծամեծաց հաճոյքները,  
կերակուրները, անոնց չըջապայութիւննե-  
րը, կառքերը, թատրոնները, անոնց եր-  
ջանկութիւնները: Միշտ հողով և մար-  
մնով պիտի ճնշուինք անգութ կարօտու-  
թեանէն:

— Որչափ խարուեր էք եթէ կը համա-  
րիք թէ բոլոր հարուստները երջանիկ են.  
որչափ անգամ իրենք ձեր վիճակին կը նա-  
խանձին: Իրենք ալ նոյն ձեր կարօտութիւն-  
ներն ունին, և ուրիշ հաղար ալ աւելի:  
Մէկը երկու ձի ունի, կ'ուզէ չորս ունենալ.  
մէկը երեք ծառայ ունի, վեց կ'ուզէ ունե-  
նալ. մէկը սեղանի վրայ երկու տեսակ  
կ'ուտէ, չորս տեսակ կ'ուզէ: Ուրիշ մը հա-  
րուստ է, կ'ուզէ կոմս ըլլալ, բայց կը տես-  
նէ գուքս մը՝ ինքն ալ կ'ուզէ ըլլալ, յետոյ  
իշխանագուն մը կը տեսնէ և կ'ուզէ անոր  
տեղը անցնիլ. գործեալ հարիւրաւոր մի-  
լիոնի տէր սեղանաւոր մը կը տեսնէ և կը

մտածէ որ չկրնար ունենալ այն հաճոյքը՝ որ մարդ անոնցմով կ'ունենայ, և անոնցմով որչափ բաներ կրնար ձեռք բերել իր սուտ երեւակայութեանն համեմատ: Բայց բանի չգար կոմս և թագաւոր ըլլալը, երբ մարդ կը տեսնայ ընտանեաց մը բարի մշակ հօր մը հանգստութիւնը, որ երկնքէն օրհնեալ իր սուրբ աշխատութեանցը մէջ հանգիստ կ'ապրի: Իսկ եթէ հարուստ մը իր վիճակէն գոհ ըլլայ, ձեղի կը նմանի. ան առան պէտք է իր գործոցը վարչութիւնը մտածէ, իր մարդիկը կառավարէ, մտածէ որդւոցը գաստիարակութիւնը, բարի քաղաքացւոյ մը պարտքերը լեցընէ, որոնք հազար անգամ ձերիններէն մեծ են՝ բնկերութեան իրեն մատուցած ծառայութեանցը համար: Գարձեալ պէտք է որ հիւանդանոցին օգնէ, ոստիկանութեան, դատարան և տէրութեան պաշտամանց ձեռքնտու ըլլայ. ներկայ գտնուի ժողովոց ուր կը պատրաստուին օրէնքն, որոնք կը կառավարեն ընկերական ընտանիքը, որ Տէրութիւն կը կօչուի. աշխատի հասարակաց օգտակար շինուածոց կառուցմանց համար, որոնց գուրք ալ ձեր քիչ ունեցած ժամանակովը գործակից կ'ըլլաք. երթայ խորհրդակցի տէրութեան վարիչներուն հետ, որպէս զի միշտ 'ի բարութեան և 'ի յաջողութեան քայլ առ մենայն ինչ, և թէ որ գասոնք կատարէ, ինչպէս որ պարտքն է, ամենուն երախտագիտութիւնը կ'ընդունի. մեծամեծաց, հա-

ւասարից և ստորնագունից յարգանքը, Աստուծոյ օրհնութիւնը: Իրաւցնէ անիկայ միայն խաղաղութիւն կը վայլէ, որ ձեղի պէս կ'աշխատի և կը վաստակի: Կը տեսնէք որ աշխատութիւնը կարեւոր բան մ'է կենաց համար, ով որ չաշխատիր կ'ախտանայ և կը մեռնի կամ կը յորանայ ու կը փտտի: Աստուծոյ օրհնութիւնն ունեցող հարուստները՝ կը խնամեն զաղքատս, տղզէտները, անկարները, և աւելի ճարտար գործաւորները, զանոնք իրենց արտերը աշխատեցընելով կամ գործարաններու մէջ, և կամ առուտորի մէջ, այն հարուստներն որ նախատես միտք ունին, ձեռք կուտան գործաւորաց որ բարձրանան այն իրաւանց ու պատոյն որոնց արժանաւոր են Աստուծով: Գիտէք աշխատաւորաց ձակատագիրն ինչ է:

— Աշխատիլ և միշտ տանջուիլ, կը յաւելլու Գրիգոր:

— Յորենը, զինին, հագուստը և մարդկային կենաց ուրիշ ամէն պէտք եղածները հաստելու համար, երեք գործակիցք պէտք են. երկիր կամ անոր կալուածատեւաբըր. դրամագրութիւն կամ անոնք որ երկիր մշակելու համար գործածելու ստակ ունին, բերքերը գործելու և հասցունելու զանոնք որոնց պէտք ունին. աշխատորիւն որ ձեր ձեռքն է: Արդ ուրեմն գուրք ալ այն երկիր և դրամագրութիւն ունեցողներուն իրաւունքը ունիք, որովհետեւ անոնք առանց ձեղի չեն կրնար ըլլար, և ոչ գուրք առանց անոնց:

— Ո՛հ ինչ բաներ կ'ըսէ մեզի հայր սուրբը, ինչ տեսակ ճշմարտութիւններ կը բացատրէ, որ մենք միշտ լսեր էինք առանց ըմբռնելու:

— Ուրիշ անգամ աւելի մանրամասն պիտի բացատրեմ ձեզի այս մեծ ճշմարտութիւնները: Աշխատեցէք ուրեմն զԱստուած մտածելով, և ձեր աշխատութիւնը ձեզի օգտակար կ'ըլլայ, և զձեզ կ'երջանկացունէ: Յիշեցէք որ Աստուած ըսեր է Ագամայ. « Ճակտիդ քրտինքովը հացդ պիտի գըտնես » . բայց քրտինքը մանանայ մ'է, որ ձեզի պիտի տայ պատուոյ և հաւասարութեան այն աստիճանն որուն վրայ ձեզի խօսեցայ, երբ բարի եղբարց նման միաբան կ'աշխատիր:

— Ո՛հ, թէ որ ամենը տէր հօր ըսածին պէս ընէին, աշխարհքս դրախտ մը կ'ըլլար:

— Իմ ըսածներուն պէս վարուող անձանց թիւը օր օրուան վրայ շատնալու հետ է: Մի հաւատաք անոնց որոնք տարբեր կերպով կը խօսին ձեզի, անոնք ձեզի թըշնամի են. ձեր կործանումը կ'ուզեն և ոչ թէ երջանկութիւնը. զոր պիտի ստանաք ձեր աշխատութենէն, մատակարարութենէն, անօգուտ ծախքերը խնայելէն, ձեր կրթութենէն, արուեստնիդ աղէկ ընելու հմտութենէն, սրտակից միաբանութենէն. ձեր ամեն աշխատութիւնները, մտածութիւնները և զգացմունքները նուիրելով

Աստուծոյ, որ զտիեզերս այսպէս զեղեցիկ և կատարեալ ստեղծեց, 'ի պատիւ մեր սիրելի հայրենեաց և յօգուտ ամենայն մարդկան: Ի՛նչ մեծ հաճոյք կը զգար, երբ իրիկունը դառնալով զաշտային աշխատութենէն կարճառօտ աղօթք մը կ'ընէք, աղէկ գիրք մը կը կարգար, ընտանեաց հետ կը խօսակցիք և անկողին կ'երթաք օրական աշխատանքներէն հանդէսլու, առանց սըրտանդիչ մտածմանց, առանց տոգոհութեան: Ի՛նչ հաճոյք առաւօտը սոխակաց անուշ ձայնէն արթննալ, ձեր մշակած արտերունքադցր օդը ծծել, դարձնել մտքերնիդ մէջ մը առ Աստուած՝ որ զամենայն ինչ կը ստեղծէ և կը նախախնամէ զանոնք անբաւխմաստութեամբ, տեսնալ որդիքնիդ, բարեկամնիդ՝ եկեղեցին, դպրոցը, և սկսիլ օր մըն ալ զեղեցիկ և դուարթ խօսակցութեամբ, աղբատին և առողջ կերակրով, քաղցր հանգստեամբ, հաճոյական մաղթանքով առ երկինս, տեսնելով ձեր բարեբեր գաշտերուն քաղցր և փոփոխ կանաչութիւնը, խաղողնրուն աճելն ու հասուննալը, պտղոց առատութիւնը, կենդանեաց բազմութիւնն որ կու տան ձեզի այնչափ լաւ կաթ և այնքան դրամ:

— Իրաւացունէ զեղեցիկ կեանք մը ունինք, կ'ըսեն շատերը, թէ որ այն օրհնեալ հացը միշտ անպակաս ըլլար:

— Կ'ըլլայ, թէ որ ինծի մտիկ ընէք, և միաբան ըլլաք 'ի բարին:

Հիմա դառնանք խօսինք կօչկակար Եւզինէոսին իր արուեստակցացն ըրած բարեգործութեանցը վրայ : Մոնցայի մէջ այնքան մեծ յարգ ունէր ինքն, որ ինչ ալ առաջարկէր՝ մէկէն ընդունելի կ'ըլլար ամենուն : Յետ մեծ գումար մը մէջտեղ դնելու, ինչպէս որ վերը ըսինք, որպէս զի իր արուեստին կարեւոր եղածները գնելով իւրաքանչիւրին պիտոյիցը համեմատ բաշխէ, որ մը ընթրիքի հրաւիրելով Մոնցայի քանի մը զլխատոր կօչկակարները, ցըցուց անոնց թէ քանի քանի իրենց արուեստէն կտրիճ երիտասարդներ, չէին կրնար խանութ մը բանալ՝ կարեւորաց պակսութեանը համար, և քանինքը որ խեղճ թռչակով մը բոլոր կեանքերնին անցնելէն վերջը, հուսկ յետոյ ծերութեան հասնելով կամ հիւանդութեամբ անկարանալով, անկելանոց մը կ'երթային մեռնելու :

— Ո՛հ, իրաւ է, կ'ըսէ կօչկակար Յովսէփը. ես ալ հիւանդանոց մը կամ անկելանոց մը կեանքս պիտի վերջացունէի թէ որ առաջուրնէ չմտածէի կտոր մը բան մէկզի գնելու :

— Ի՛նչ և իցէ. ինքն առաջարկեց գլուխ կենալ ընկերութեան մը՝ որուն նախատակն ըլլայ օգնել խրախուսել իրենց արուեստակիցքը. շուտ մը ընկերութեան գիւրութեանն համար, իբրև առաջին կարողութիւն, դրաւ մէջտեղ տէրութեան եկամտից պարտաթղթեր, որոնք տարին 565

Փռանք կու տային : Վերջը իմացուց որ եթէ պատանի սորվողներն ուզենան մասն ունենալ, միայն 12 Փռանք վճարին : Ենթադրելով որ Մոնցայի մէջ 220 գործաւոր կօչկակար ըլլան՝ ահաւասիկ շուտ մը գումար մը կը ձևանայ 5005 Փռանք, մէկտեղ առնելով Եւզինէոսին 565 Փռանքն ալ, որ անմիջապէս կրնար գործածուիլ փոխ տալով մաս մը անոնց որ արդէն ուրիշ միջոցներով պատրաստուեր էին խանութ բանալու : Այս 5005 Փռանքն երկրորդ տարին նորէն կրկնելով կ'ըլլայ 6010 Փռանք և ալ վրան կը զարնէ՝ յետ հանելու մանր մուկը ծախքերը : Որոչեց նաև վարձու առնուլ խանութ մը ընկերութեամբ, ուր ծախուին ընկերակցաց շինած ու կարած ամէն ապրանքը, չափաւոր գնով, և իւրաքանչիւրին հաշուին : Յըցուց թէ այսպիսի կարգադրութիւն մը մեծ բարիք կը բերէ ամէն մէկ ընկերակցաց բարոյականութեանը, ճարտարութեանը, խնայողութեանը, և բնական ու բարոյական լաւութեանն : Ուրիշ բան չեմ՝ ըսեր ձեզի. այն ընկերութիւնը այսօրուան օրս մեծ դրամագլուխ մը ունի, և այնպէս վիճակի մը հասած է, որ ոչ միայն ամէն պիտոյիցը կը հասնի, այլ նաև եկամուտ մըն ալ ձևացուցած է, որով ինքն իրեն կը բարեգործէ, այսինքն դրամ կ'աւելցունէ ընկերակցացը մէջ բաշխելու, կամ ուրիշ արուեստի ընկերակցացն օգնելու : Տեսնէք թէ

ինչ ճարպիկ մարդիկ են այն կօշկակարները. մարտը, կոկ, գործօն, նախանձաւոր իրենց պարտուցն, իրենց արուեստին և բարի քըրիստոնեայք: Մկրտիչն ալ նոյն բանը գրեթէ ըրաւ իր գործարանին ինչպէս իր երկրին ուրիշ գործարաններուն աշխատաւորաց համար, որպէս զի անոնք ալ օգնութիւն գտնեն հիւանդութեան, աշխատանաց անկարութեան և կարգէ գուրս կարօտութեանց ժամանակ, կամ թէ երբ ուզեն խանութ կամ կրպակ բանալու, օգնել անոնց վարձուց հատուցմանն, ամուսնութեանց, ղրնուորագրութեան ծախուցը, և այլն: Մնդրէասն ալ շատ ատեն չէ որ նոյնպիսի ընկերութիւն մ'ալ ինքը կազմեց, դրամ հաւաքելու մէջերնին և մէկմէկու փոփոխակի օգնելու համար, և ուրիշ ընկերութիւն մ'ալ գիտէք որոնց համար կազմեց, խեղճ կրպակաւոր երիտասարդաց համար, որոնք երկրագործաց պէս երեսէ ձգուած են, և աւելի դիւրաւ կը խաբուին ամէն տեսակ կրքէ, վասն զի ձեռուրնին միշտ ստակ ունին, երկսեռ ամեն տեսակ մարդկանց հետ առուտուր կ'ընեն, և օրուան մէջ երկար ժամեր պարապ կեցած վեր վար կը նային իրենց խանութներուն զիմացը եղած փողոցներուն մէջ:

— Իրաւունք ունին, կ'ըսէ Գրիգոր, նաև այն երիտասարդները, որոնք խեղճ երկրագործները կը խաբեն. իրացընէ լաւ ապագայ մը չեն կրնար ունենալ եթէ չմտածեն

ու Մնդրէասին չնմանին, և հաստատուն չկենան շուայլութեանց և հաճոյից գարաններուն դէմ:

— Ինչպէս լաւ կը խօսի Գրիգոր, չէ թէ տիրացու մը այլ փիլիսոփայէ մըն ալ վեր կ'երեւայ ինծի:

— Սոնչափ ժամանակ է որ կը լսենք մեր բարի ժողովրդապետին գեղեցիկ խօսքերը, հարկաւ մեր գլխուն մէջն ալ իր ցանած հունտերէն մէկ քանին պիտի ծլին:

— Հիմայ որ լնացուցինք չորս բարի եղբարց պատմութիւնը, այսինքն Փրանկիստիսին, Եւզինէտիսին, Մկրտչին և Մնդրէասին, որոնք Մարիամին և հանգուցեալ Գոմինիկոսին որդիքն էին, և որոնց ամէն մէկուն առջի տարիներէն սկսեալ աշխատութիւննին տեսաք, ջանքով, խնայողութեամբ, կարգով, սիրով պարտուց քաղաքացւոյ և քրիստոնէի, որպէս զի իրենց ձեռութեանն ու գաւակացը վիճակ մը պատրաստեն, տեսանք որ ինչպէս զարմանալի կերպով իրենց զիտմանը մէջ յաջողեցան ակնկալութիւններնէն ալ աւելի, երկնից շարունակ օգնութեամբն ու օրհնութեամբը, տեսանք որ միայն իրենց շահը չէին մտածեր, հապա մտադիր էին նաև իրենց նմանեացը բարւոյն, այն է իրենց հայրենակցացը օգտակար ընկերութիւնները կազմելով, օրինակով...:

— Շարունակեցէք, աւելցնելով նաև իրենց բարի ժողովրդապետին ձեռընտուութեամբը:

— Իմ պարտքս է բոլոր ժողովրդեանս հայրն ըլլալ: Հիմայ որ անոնց վրայ խօսքս ըննցուցի, մտիկ ըրէք քանի մը բան ալ զորոնք գրեր եմ, և զորս թերևս մտօք քիչ ըմբռնէք, բայց սրտով կրնաք գուշակել, և գուցէ քիչ ուրախութիւն պիտի չըլլայ ձեզի. անկէ վերջը կը դառնանք խօսելու հանգուցեալ Գոմինիկոսին վրայ:

— Սմեննիս ալ պատրաստ ենք ձեր խօսքերը մտիկ ընելու, կը պատասխանեն գրեթէ բոլորն ալ:

— Երկաթուղիք, կը յաւելու ժողովրդապետք՝ երբեմն երբեմն թղթոյ մը վրայ նայելով զոր ձեռքը բռներ էր, չոգենաւք՝ որոնք կ'երթան կու դան լծեբու, գետերու, ծովերու վրայ, որոնց նմանները տեսեր էք թերևս մօտակայ լճին վրայ, հեռագիրք՝ որոնք այնպիսի գործիներ են որ տեղէ մը հեռու տեղ լուր կը հասցընեն, այնպէս զարմանալի երագութեամբ, որ թռչնոց արագ թռչիլը կը գերազանցէ, գրեթէ նման մեր մտածմանցը որ զմեզ նոյն ժամուն մէջ կը տանի մեր գաշար, տունը, եկեղեցին, դպրոց, Միլան, Գուրին, Յիտրէնցա, Հոսով, Նաբոլի, Փալէրմոյ, որով կը թռչինք անցեալ ժամանակները՝ մինչև աշխարհիս սկիզբը, Քրիստոսի ժամանակը՝ որ զմարդիկ յեզրայրակցութիւն կոչեց և յորդիութիւն միոյ յախտնական Հօր, որ է Աստուած, Նաբոլէանի օրերը, անցեալ տարուան մեր գեղեցիկ Մննդեան

տօնը. և կը տանի զմեզ նաև ապագային մէջ, ուր կը տեսնանք Հանգիլելիք դէպքերը, ըստ մեր գաղափարին հարիւր ասրիէն, երբ ալ աշխարհչիս վրայ պատերազմ պիտի չըլլայ և մշտնջենաւոր խաղաղութիւնը պիտի տիրէ, կը թռչինք մտքովնս այն վերջին օրն որ առանձնական և ընդհանրական դատաստան պիտի ըլլայ, աշխարհչքս պիտի անցնի ու պիտի լուծուի. և կը թափանցենք մինչև հանդերձեալ աշխարհք, կ'երեւակայենք արքայութիւնը, մինչև դժուրոց տանջանքները՝ որ պահուած են մեզուտրաց համար: Միով բանիւ մտքովնս մէկ վաւրիկնի մէջ ամեն կարելի միջոց և ամէն կարելի ժամանակ կ'ընթանանք. այն ճամբաներն որ ամէն զի կ'երթան անցնելով ջրոց և լիբանց վրայէն՝ ապահով են. թղթաբերները, ժողովրդոց մէջ եղած բարեկամական դաշնագրութիւնները, իմաստնոց ու վաճառականաց ճամբորդութիւնքը, քաղաքական ու ընկերական օրէնքներն ու կարգերը, որոնք կը կառավարեն առանձնական և հասարակաց կեանքը, դաւառները, նահանգները, տէրութիւնները. զիտութեանց այնքան զիւտերը, պատմական յիշատակները, զորոնք աւելորդ կը սեպեմ գիմացնիդ զնելու, բոլոր այս նշարքները և լաւութիւնները զմարդիկ և զիրս մէկմէկու կը մօտեցնեն բնականապէս և բարոյապէս, այսինքն սրտով, մտքով, մարմնով, և կը մղեն անհատները, ընտանիքները, ցեղերը, ընկե-



րական աստիճանները, ազգերը՝ այնպիսի ճամբու մը մէջ, որ կը տանի ընդհանուր բարեկամական դարու մը, լուսաւորեալ և յառաջդիմական խաղաղութեան մը, առ որ մարդկութիւնը, այսինքն բոլոր մարդկանց խումբը՝ որ ապրեր է, կ'ապրի և պիտի ապրի, կը դիմէ անդադար քայլով և միշտ հետզհետէ աւելի երազելով. առ այն կը մղէ ու կ'ուղղէ զմեզ մեր բնութիւնը, բնազդումը, բանը, առարկնութիւնը, Աստուծոյ հաստատեալ մշտնջենաւոր և անփոփոխելի օրէնքը: Եւ այս ճամբան, թէպէտ և մարդկանցմէ ոմանց չարութեամբը, կրից և ետութեան կուրութեամբը յամառ տղիտութեանն ու հրամայելու փափաղին և բանի չուզել հաւատալուն համար, քիչ մը անհարթանայ, դժուարի և արիւնալից ըլլայ, բայց ոչ երբէք կը խափանուի: Աստուած ներէ չարասիրաց և անհամբերներուն: Այն այս ճամբան չկրնար խուփանուիլ, որովհետեւ տիեզերաց մէջ երկու Աստուած, երկու տէր չկան, որոնց մէկը միւսին կարգաց դէմ կենայ և ըսէ. կեցիր, առաջ մ'երրար. — Եւս ուզեր ինչ որ դու կ'ուզես:

— Յայտնի է թէ մէկ Աստուած կայ, կ'ըսեն ամենքը, և մենք մարդիկս իր սուրբ կամբք չենք կրնար փոխել, մանաւանդ մերինը՝ իրենին պէտք ենք յարմարցնել: Այս բաներս մենք խեղճ տղէտքս ալ կտոր մը կը հասկնանք, և այս բանս կ'ըսէ մեզի նաև մեր բարի ժողովրդապետք երբ տասը պատուեցանքները կը բացատրէ մեզի:

— Արդ ես կը հաւատամ տղայութենէս ՚ի վեր, հաւատալ կրնայէս ՚ի վեր, և ինծի հետ դաք ալ կը հաւատաք՝ որ մարդիկ երկնից շարունակ օգնականութեամբը, իրենց բարի կամբովը, միշտ ՚ի բարին և յառարկնութիւն պիտի աճին. և անոնք ալ որ կ'աշխատին Գոմինիկոսի որդւոցը պէս՝ այն կարգերով և կանոններով, որոնց վրայ ձեզի խօսեցայ, հնազանդելով Աստուծոյ ձայնին՝ զոր կը լսենք Աւետարանին սուրբ խօսքերումը, տիեզերաց կարգաորութեամբը, զոր անդադար կը ստեղծագործէ, մեր չորս կողմի առարկայից յեզուովը որ շարունակ ամենուս սրտին մէջ կը խօսի, խորհուրդ կուտայ, կը յանդիմանէ, կը մխիթարէ, և այն ձայնը կամ հրամանը կը տեսնենք բոլոր երկրների և երկրիս վրայի պատահարներուն մէջ, պէտք է լաւագոյն ժամանակի հասնին: Այս, կը հաւատամ որ պիտի գայ ժամանակ որ մարդիկ ալ մէկմէկու ծուռ պիտի չնային, մէկզմէկ պիտի չատեն, հապա երեսնին պիտի փոխեն վատահոլութեան յարգանաց, բարեկամութեան երբ մէկմէկու կարօտութիւն ունենան, և փոխադարձ իրարու սէր ու օգնութիւն պիտի մատուցանեն, զիրար սերտ պիտի սիրեն՝ ճշմարիտ և աւետարանական ողուով: Եւ այս ներգաշնակութիւնը որ պիտի ըլլայ այլ և այլ գատուց մէջ, սիրելիքս, ընդ մէջ հարուստին և աղքատին, ազնուականին և ուսմկին, ընդ մէջ անոնց որ կ'աշխատին բողկաւ և

մտքով, և անոնց որոնք գիտակցութեամբ կամ ակամայ կ'աշխատին, կամ աւանդական ուժով իրենց պապերէն ունեցածներն ուն գորութեամբը, մեծ բարութիւն պիտի ըլլայ ամենուն, անհուն պարզեւ մը Աստուծոյ՝ զոր միշտ պէտք ենք խնդրել, առանց որոյ աշխարհչիս վրայ ամենեւին լաւութիւն չըլլար, և այս ամեն բան պիտի հանդիպի առանց սուրբ աշխատութիւնը ձեռքէ ձգելու, որ զբաղմունք մըն է Աստուծմէ յանձնուած մարդուս: Այո՛, սուրբ է աշխատութիւնը, որով միայն կը բացուի գիտութեանց, առաքինութեան, երկնային գաւառաց դժուարին գրունքը:

— Այս ամեն բաները ճիշտ այսպէս պիտի հանդիպին, կը հարցընեն ինչ՞ զեղացիք, որոնք անտվոր լուսով մը լուսաւորուած կը տեսնային մտքերնին ժողովրդավեպին խօսքերէն, և լցուած սրտերնին մէկ անուշ և նոր քաղցրութեամբ:

— Անտարակցոս: Այս ամեն բաները տեսեր ենք որ գուշակեր են անոնք որոնք իրենց ընկերը կը սիրեն, անցելոյն մէջ եղածները և մարդուս անհատական և ընկերական բնութիւնը կը քննեն: Այն ատեն հանդարտ և հանդիստ վիճակի մը հասնելու ճամբան, այս ըսած գիտեցողութեամբ, աւելի գիւրին, գեղեցիկ և կարճ պիտի ըլլայ քան ուսկից ընթացան Պոմինիկոսին բարի որդիքը:

— ձեզ այսպէս պիտի ըլլայ:

— Ասպակոյցընեմ զձեզ իմ տկար փորձիս անուամբը, իմաստնոց անուամբը, նոյն իսկ սուրբ անուամբն Աստուծոյ որ այս բանս շատ առիթներով մէջ խոստացեր է, թէ՛ հին և թէ՛ նոր կտակարանին մէջ, իր սուրբերուն բերնովը, ստեղծագործութեամբը, և զոր ինձ ոգորմելի մեղաւորիս ալ կը խոստանայ, երբ զիշերը կը մտածեմ այսպիսի ծանր նիւթերու վրայ՝ որոնք թէ՛ ձեզի և թէ՛ այլոց ամենուն համար դժուարին են, և զոր ոչ որ երկրիս վրայ պիտի կըրնայ կատարելագոյն ըմբռնել, վասն զի սակմանաւորը չկրնար ըմբռնել անասնանը: Բայց ճշմարիտ են, զորս ես թղթի վրայ աւնելով կը թողում իմաստնոց, աշխարհչիս մեծամեծներուն, անոնց որ կրնան բարիք ընել, առաքինի գործաւորաց, բոլոր այն ամենուն որ կը սիրեն իրենց եղբարքը՝ ի Քրիստոս և յԱզամ, որոնք արժանի կը համարին գալու գտնելու զիս կամ անձամբ և կամ նամակաւ: Վերջապէս ազգաց և բովանդակ մարդկային ընկերութեան:

— Արդէն բոլոր աշխարհք գիտէ որ մեր ժողովրդավետը սուրբ մ'է, կ'աղաղակեն ամէնը միաբերան:

— Սիրելիքս, սուտ մի ըսէք: Ես խեղճ մեղաւոր մըն եմ, ձեզմէ ամենէ՞ք չարագոյն: Գիտէք թերևս ինչ լաւութիւն ունիմ. կը սիրեմ, բայց սրտանց, իմ մերձաւորս, և մանաւանդ զձեզ, և կը ցանկամ ու կը յուսամ սիրելու մեր ամենուս հայ:

ըր՝ ամենաբարին Աստուած, ամեն բանէ վեր, ինչպէս որ պարտերնիս ալ է: Իսկ այն բաները՝ զորոնք չենք կրնար բմբռնել, հանգերծեալ աշխարհքին մէջ պայծառ պիտի տեսնանք և գոհ պիտի ըլլանք զանոնք ըմբռնելիս: որովհետեւ այնպիսի տեսութիւն պիտի ունենանք որով շատ աշխարհներ պիտի կարենանք բովանդակել: Մեր որդիքը, որոնց համար առանց արեան, առանց պատերազմի օր օրուան վրայ աւելի պիտի սատարուն գուշակածներս՝ վասն զի ինչպէս ըսի ՚ի փորձոյ ուսեալ, մեր որդիքը անդիի աշխարհք պիտի գան պատմելու մեզի ինչ որ մենք արդէն գիտենք: Բայց հաւասարապէս պիտի ուրախանանք անոնց խօսիցը վրայ: Պիտի տեսնենք այն բաները, մանաւանդ թէ պիտի օգնենք ալ անոնց արդիւնաւորուելուն, եթէ բարի ըլլանք ու պահենք Աստուծոյ սուրբ պատուիրանքը, եթէ ըլլանք համբերող աշխատութեանց, վշտաց, միտլ բանիլ թէ որ ըլլանք առաքինի, բարի քաղաքացի և քրիստոնեայ. և պիտի վայելենք անդիի աշխարհքը՝ մեր առաջին և վերջին յոյսը. և բաց ՚ի զԱստուած և սուրբերը տեսնելու հաճոյքէն, պիտի ունենանք այն սիրելի հաճոյքն ալ՝ տեսնալով զմարդիկ աշխարհիս վրայ, որ քանի կ'երթան, ինչպէս ըսի, աւելի կը լաւանան, և թշուառութիւննին կը նուազի:

Հիմայ, կը յաւելու ժողովրդապետը,

զառնանք մեր Գովինիկոսին պատմութեանը: Իր բանաբը մտնելն, ամուսնոյն մահը՝ զինքը փոխեր էին, բարի մարդ մը եղեր էր, քաջ երկրագործ, խնայող, գործօն. Իր առջի արտը վերագործեր էր, որդւոցը հետ հաշտուած, որոնք միշտ իրենց որդւոցը գոնեա երեքն անոր քով կը թողուին ընկերելու համար, և անպակաս ամիսը մէյո՛ւ այցելութեան կու գային իրեն կիրակի օր մը՝ և այն օրն անոնց հետ մէկտեղ կը ճաչէր, կը խօսակցէր զուարթութեամբ և մխիթարութեանն կու լար: Հայրը՝ Փրանկիսկոսի նման կեանք մը կ'անցնէր և անոր պէս արտը կը մշակէր ջանքով թէպէտ շատ ծեր էր, նոյն եկամուտն ընդունելով և հաւասար խնայողութիւն ընելով: Ինքն ալ կ'երթար երբեմն որդւոցը, մնալով օր մը Փրանկիսկոսի քով, օր մը Եւգինէոսի քով, օր մը Մկրտչին քով, ուր շատ հաճութիւն կը զգար տեսնելով մերենաները, գործիները և անոնց զանազան կիրառութիւնքը: Անկէ Անդրեասին կ'անցնէր, ուր քիչ մը աւելի կը կենար՝ օգնելով իր հարսին, որուն վրայ մասնաւոր գութ մը ունէր, ինչպէս որ սովորաբար հայերը կ'ունենան իրենց Բենիամիններուն վրայ: Անդրանկին վրայ յարգանք ունէր, երկրորդին և երրորդին վրայ՝ համարմունք ունէր, իսկ չորրորդին վրայ մեծ սէր:

Ալ աւելի ծերանալով, պէտք եղաւ որ տունը կենայ: Ան ատեն որդիքը և թոռն-

ըր տելի յաճախ այցելութիւն կ'ընէին, զինքը միայնակ չէին թողոր, արտին աշխատութեանցը մէջ կ'օգնէին, որուն մասնաւոր սէր ունէր. և իրացնէ ծաղիկ մ'էր տեսնելու արժանի, այնպէս լաւ մշակուած, լի պտուղներով, այգիներով, գեղեցիկ խաւով, արմտօք, թէպէտ և տեղը ԿՏ ըմբար ըլլար: Քոյր չըջակայից մէջ իր առաքի նութեանն ու ճարտարութեանն համար հասարակաց հայրը կոչուած էր, և իբրև այնպիսի ամենուն սիրելի էր:

— Իրաւ է, կ'ըսեն ամենքը:

— Երբեմն ինձի կու գար, կը յիշէր անցեալ կեանքը, իր Մարիամը, և ինձի միշտ պէտք կ'ըլլար զինքը մխիթարել, վասն զի օր կ'ըլլար որ շատ կը մաղձոտէր, կը ցուէր ու կու լար: Անցեալ տարի ծննդեան իմացուց որդւոցը՝ որ կը փախազէր զիրենք ամէնն ալ տեսնել, վասն զի թերևս վերջինն ըլլար որ անոնց հետ մէկտեղ պիտի անցունէր: Կրնաք երևակայել որ այս հայրական հրաւէրքին մէկը չարակեցաւ, ոչ կանայք և ոչ որդիք: Թէ որ տեսած ըլլայիք այն բարի Գոմինիկոսը իր ընտանիքը չորս կողմն առած, մխիթարութենէ կու լայիք: Էս ուղեցի ճաշէն առաջ զինքը տեսնել և սեղանը օրհնեցի: Ինչ քայքայ ուրախութիւն, ինչ լի և սուրբ գոհութիւն: Սակաւապետ ճաշը լմնապէն ետև, որ համեմած էր կարգէ դուրս մաքրութեամբ, բարի սրտով ամենուն հոն գտնուելուն հաճոյիք, մէկ

զմէկ սիրելու ապահովութեամբ, սկսաւ քանի մը խորհուրդներ տալ իր որդւոցը և ըսել անոնց որ մահը մօտ կը զգար, և կը յանձնէր որ միշտ շարունակին բարի ըլլալ: Հասարակաց լաց մին է իրթաւ: Վէր վաղեցին որդիքը և թոռունքը չորս կողմը աւին, և սկսան մխիթարել զինքը, և ըսել որ գեռ կայտառ էր, և այսպիսի մաղձոտ բաներ պէտք չէ մտածել: Ինքը ողի առնելով և ներքին այլայլութեանը տիրելով, պարզ գէմքով մը պատասխանեց թէ ամեն մարդ մահուան պատրաստուելու է, այս չէ մեր հայրենիքը, և թէ այս աշխարհքըս ուրիշ բանի համար չէ բաց եթէ արդիւնք վաստրկելու, որպէս զի անդիի աշխարհքը վայելինք. « Արիացիք, որդեակք իմ, կը յանձնեմ ձեզի կրօնք, գործունէութիւն, Աստուծոյ և մերձաւորին սէրը, բարի օրինակ տուէք ձեր որդւոցը, մտածեցէք զԱստուած և մէկզմէկ սիրեցէք միշտ »: Ամենը խանդաղատեցան, բաժանումը շատ սրտաշարժ եղաւ: Քայց այն օրուրնէ վերջը՝ ինքը իբրև թէ բոլոր խղճմտանաց պարտքը լիովին հատուցած ըլլար, աւելի ուրախ և հանգիստ էր, կը յաճախէր միշտ եկեղեցին, այց կ'ելլէր դպրոցին, թէպէտև բոլորովին գառամած ըլլար, և իրիկունները կը խօսէր զեղին առաջաւորներուն հետ և զուարթութեամբ կը վարուէր իր ընտանեացը հետ:

— Ճմարտաւ է, կ'ըսէ Կարոլոս, կը խօս

աէր մեղի հետ իր արտին վրայ, այգիները  
լաւ մշակելուն վրայ, ծծուձի դարնել երբ  
հիւանդութեան վախ կայ, թթենիները հո-  
գալ, և ուրիշ ասոնց նման բաներ:

— Աւասի, կը յաւելլու ժողովրդապետը,  
երկուշաբթի օր մ'էր և Գոմիինիկոս եկե-  
ղեցին գալով խոստովանեցաւ և հաղոր-  
դուեցաւ. բողբո՛ղ նոյն օրը բոլոր որդիքը  
եկեր էին զինքը տեսնելու: Երբ զանոնք  
տեսաւ, շնորհակալ եղաւ Աստուծոյ, ըսե-  
լով որ Աստուած կը շնորհէր իրեն ուրիշ  
անգամ մըն ալ տեսնալ իր բարի որդիքը  
քանի որ երկրիս վրայ էր: Իրիկուան բաժ-  
նուեցան գնացին և քովը միայն մնացին  
Փրանկիսկոսն ու Մկրտիչն, իբրև թէ նա-  
խազգացու մն ունեցած ըլլային որ հայրեր-  
նին մեծ հիւանդութենէ մը պիտի բուսուի:  
Եւ զինէտսը ու Սնդրէասը բաժնուելու ծա-  
մանակ, սիրով փարեցաւ անոնց ու համ-  
բուրեց, և չէր զագրեր նայելու անոնց ե-  
տեէն այնպիսի սիրով որ մարդ միայն վեր-  
ջին բաժանման ատեն կը զգայ, երբ կը տես-  
նայ վերջին անգամ իր մայրը, հայրը, եղ-  
բարքը և բոլոր այն սրբիկները որ մտքեր-  
նուս մէջ կենդանի են, յանձնեց անոնց որ  
զինքը յիշեն, և նորէն սկսաւ լալ: Իրիկունն  
այնպէս խօսեցաւ որ կարծես թէ մահուան  
մօտ ըլլալը զիտէր. ննջլու խուցը գնաց,  
թուղթերը աչքէ անցուց, իր կտակին վրայ  
երկու խօսք ալ աւելցուց, և ջերմեամեղն  
աղօթք ընեկէն վերջը, զո՛հ սրտով ընկող-

մանեցաւ, և մինչ խորունկ քնոյ մէջ էր՝  
անցաւ Աստուծոյ բազկացը մէջ:

— Խեղճ Գոմիինիկոս. ուրեմն չկրցաւ  
սուրբ կրօնից վերջին մխիթարութիւններն  
առնուլ:

— Սուրբ դարձեր էր, զղջացեր էր. և  
ես կը ճանչնայի զինքը, և կ'ապահովընեմ  
զձեզ որ հողին առ Աստուած դարձաւ, ինչ-  
պէս որ Աստուծոյ ձեռքէն ընդուներ էր,  
առանց մեղաց: Երկրորդ առտուն երբ իր  
թոռունքը սենեակը գնացին զինքը ողջու-  
նելու, ինչպէս կ'ընէին միշտ, զուարթ դէմ-  
քով գտան զինքը, ձեռուրները միացու-  
ցած, աշուրները դէպ 'ի երկինք դարձու-  
ցած: Երկայն ատեն այնպէս կեցան նայե-  
ցան առանց բան մը հարցընելու, կարծե-  
լով որ աղօթք կ'ընէ, վերջապէս երեսին և  
աչացը անշարժութենէն իմացան որ մեռեր  
էր: Երբ հայր մը կը մեռնի, մարդ շատ  
ցաւ կը զգայ, կարծես թէ իր ընական և  
բարոյական էութիւնը երկու կը բաժնուի,  
կը զգայ թէ ծառէն փրցուած և ինկած ճիւղ  
մ'է, զուրկ այն ուժէն, որ առաջ ծառը  
իրեն կու տար: Այս տեսակ եղաւ Գոմի-  
նիկոսի որդւոց զգացած ցաւը: Ինքը կիրա-  
կիէն երկուշաբթի լուսնանոց գիշերը վախ-  
ճանեցաւ: Մէկէն իմաց տուին ինձի, և երբ  
տեսայ զինքն այսպէս զուարթ և պարզ  
դէմքով ըսի անոնց. « Արդեակիբ, մխիթա-  
րուեցէք, հայրերնիդ այս ծամուս ձեզի  
համար աղօթք կ'ընէ »: Չորեքշաբթի իրի-

կուն ամէնքնիս միաբան զերեզման տա-  
րինք զինքը, Հինգշաբթի առտու առաջին  
պաշտօնը կատարեցինք, և չորեքշաբթիէն  
մինչև այսօր, որ է շաբաթ, խօսեցանք իր  
որդւոցը վարուցն ու առաքինութեանցը  
վրայ: Արդ տեսնենք թէ Գովինիկոս ինչ  
բրաւ նաև իր հայրենակցացն համար: Իր  
կտակին մէջ, զոր կարգացի, տեսայ որ  
ինքն արգար մարդ մ'էր, որդւոցն այնչափ  
թողուցեր էր, որ անկէ պակաս չէր կրնար  
տալ, իրատելով զիրենք՝ որ իրենց ան-  
զակութեամբ որչափ ուզեն կրնան հար-  
տանալ, խնդրելով միանգամայն որ ներեն  
այն միշտերն որ իրենց մօրը տուեր էր, և  
մտնան որդւոցը տուած գայթակղութիւ-  
նը: Մնացածն որ խնայած արկեղ այս  
տետրներն են, տէրութեան հաստութի պար-  
տաթուղթ մը, և 6000 Փոանք արժող մուր-  
հակ մը ապահովագրութեան, որոնք ընդ  
ամենը 14,000 Փոանք զրամազլուխ մը կը  
կազմեն, որմէ մաս մը որոշած է յաւելուլ  
այն զրամագլխուն վրայ որով պիտի սկսուի  
իր գեղի մէջ ալ Փրանկիսիոսի հաստա-  
տած ընկերութեան նման ընկերութիւն մը:  
Իսկ միւս այս տետրները և պարտաթղթ-  
թերն ալ, որոնք կը կազմեն 32,000 Փոանք,  
Գովինիկոսի որդւոցն հօրերնուն տուածին  
վրայ աւելցուցածնին է, որոնց 2՝ հազարը  
միայն Փրանկիսիոսէն է:

— Ինչ բարիք, կ'ըսեն ամենքը լայով:  
Իրաւ ցընէ սուրբ մըն էր:

— Միբելիքս, ուրեմն յիշեցէք Գովինիկո-  
սը, աղօթեցէք իրեն և ուրիշ վախճանելոց  
համար ալ: Եթէ երբէք չար եղեր էք, ի-  
րեն վրայ ունիք օրինակ մ'ուղղելու զձեզ,  
զղջալու և դառնալու Աստուծոյ բազկացը  
մէջ, որ պատրաստ է զղջացեալ մեղաւոր-  
ները ընդունելու, յիշեցէք իր որդիքը և ա-  
ղօթեցէք, որպէս զի շատ ապրին և օրինակ  
ըլլան ամենուն յարատևութեան մէջ, աչ-  
խատանաց ճարտարութեան մէջ, կարգի և  
խնայողութեան մէջ, բարի քաղաքացւոյ  
և լաւ բրիստոնէի պարտուց կատարման  
մէջ, ՚ի սէր մերձաւորին, ոչ խօսքով այլ  
գործով, և այս առաքինութիւններն աչ-  
խարհիս վրայ անչուտ կը տանին զմարդ  
հանդարտ և հանգիստ կենաց ու անդին  
երջանիկ կենաց: Այս հոս եմ ձեզի օգնելու,  
պատրաստ եմ իմ ժողովրդեանս իւրա-  
քանչիւր անձին այն ամեն բանը ընելու,  
ինչ որ ըրի Գովինիկոսին, անոր որդւոցը  
և անոնց որ ինձմէ խորհուրդ, նպատ և  
օգնութիւն կը խնդրեն: Աղօթք ըրէք ինձի  
համար ալ, սիրելի որդեակք, և զնացէք  
պատմելու ձեր ընտանեացն ինչ որ ինձմէ  
լսեցիք:

— Դատ շնորհակալ ենք, հայր սուրբ,  
Գովինիկոսի որդւոց և ձեր առ մեզ ունե-  
ցած այնչափ խնամոցը համար, և երկու  
բան կ'առաջարկեմ. նախ որ հոս խոստա-  
ցուի հաստատելու, մեր հոգևոր հօր բսած  
զգուշութիւններովը, վախազարձ օգնելու

ընկերութիւնը: Երկրորդ որ ամեն տարի պաշտօն մը կատարուի Գոմինիկոսին բարի հոգւոյն համար, ըստ Կարոյու:

— Կը հաւանինք, ապրիս Կարոյու, կը պտուան ամենը:

— Այլէկ սկսար. յուսամ թէ լաւ կը շարունակէք. բայց զձեզ թողլէն առաջ պէտք է նաև ըսեմ, որ հանգուցելոյն և իր որդւոց փափաղն է այն 46,000 Փռանքին մեծ մաս մը գործածուի մէկ կամ շատ փուռ բանալու, ուր եփուի բոլոր մեր պզտիկ գեղին հացը. մասնաւանդ անոնցը որոնք փոխադարձ օգնելու ընկերութեան մասնակից են, և ասոր համար պատշաճաւոր շէնք մը շինուի, յարմար վճարքով մը, որով հացը աւելի առողջարար ըլլայ և շինուածքն աման: Ստակին մէկ մասովն ալ մեր գեղին համար պատշաճ գրատուն մը շինուի, հանդերձ մէկ սրահով մը, ուր դուք և ձեր որդիքն երբ քիչ մը ժամանակ ունենաք՝ կարենաք երթալ կարգալու: Կը յաւելում նաև որ կայ մէկը որ պիտի դնէ պզտիկ զրամագլուխ մը, որ տարին 500 Փռանք շահ բերէ, և ասիկայ ալ պիտի գործածուի կանչելու երբեմն այս երբեմն այն վարժապետը, որպէս զի երկրագործութեան, ուրուագծութեան, պատմութեան և այլն, օգտակար դասախօսութիւններ ընէ: Կը թաք բարով, սիրելի ժողովուրդ. մէկդմէկ սիրեցէք, որովհետև եղբարք և որդիք էք միոյ հօր:

— Բարի զիչեր, մեր սիրելի հայրը, Սատուած հրամանքիդ երկայն կեանք տայ, կը պատասխանեն տանուաէրները:

Ամենքը իրենց բնակութիւնը կը քաշուին, գործապետները իրենց աշխատութեան սենեակնին բարի ժողովրդապետն ալ իր մտածականի, ուսման և աղօթից սրահակը, երջանիկ համարելով ինք զինքը որ կըցաւ քիչ մը ըյս սփուել իր բարի ժողովրդեան հոգւոյն մէջ: Ժողովուրդը դո՛հ է, և ալ չվախնար սալագային վրայ նայելու, սորված ըլլալով պաշտպանել իրենք զիրենք ճարտարութեամբ, աշխատանքով, խնայողութեամբ, բարի վարքով, և փոփոխակի օգնութեան հասնելու թշուառութեանց մէջ որ մշակին վրայ կրնան գալ, և վերջապէս լաւցընել իր վիճակը և այսպէս հասնիլ արուեստական հարստութեանց երկու աղբերաց եղբայրակցութեանն, որ են երկիր և դրամագլուխ, երրորդ ալ բիւրն ալ ըլլալով սուրբ Աշխատարիւնը:



# ՑԱՆԿ

---

Գործաւորը . . . . .	5
Կանխարանութիւն . . . . .	11

ԱՌԱՋԻՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Գործաւոր մշակն . . . . .	15
--------------------------	----

ԵՐԿՐՈՐԳ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Երկրագործին պատմութեան շա- րունակութիւնը . . . . .	37
---	----

ԵՐՐՈՐԳ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Կօչկակարն և գործատան զլխաւորը	102
-------------------------------	-----

ՁՈՐՐՈՐԳ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Փերեզակ . . . . .	161
-------------------	-----



181

10  
11  
12  
13  
14  
15  
16  
17  
18  
19  
20  
21  
22  
23  
24  
25  
26  
27  
28  
29  
30  
31  
32  
33  
34  
35  
36  
37  
38  
39  
40  
41  
42  
43  
44  
45  
46  
47  
48  
49  
50  
51  
52  
53  
54  
55  
56  
57  
58  
59  
60  
61  
62  
63  
64  
65  
66  
67  
68  
69  
70  
71  
72  
73  
74  
75  
76  
77  
78  
79  
80  
81  
82  
83  
84  
85  
86  
87  
88  
89  
90  
91  
92  
93  
94  
95  
96  
97  
98  
99  
100  
101  
102  
103  
104  
105  
106  
107  
108  
109  
110  
111  
112  
113  
114  
115  
116  
117  
118  
119  
120  
121  
122  
123  
124  
125  
126  
127  
128  
129  
130  
131  
132  
133  
134  
135  
136  
137  
138  
139  
140  
141  
142  
143  
144  
145  
146  
147  
148  
149  
150  
151  
152  
153  
154  
155  
156  
157  
158  
159  
160  
161  
162  
163  
164  
165  
166  
167  
168  
169  
170  
171  
172  
173  
174  
175  
176  
177  
178  
179  
180  
181  
182  
183  
184  
185  
186  
187  
188  
189  
190  
191  
192  
193  
194  
195  
196  
197  
198  
199  
200

2013

« Ազգային գրադարան



8/42

NL0041450

